



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 116 2020

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Արսլանյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեվանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999 թ.) և դոկտորական (2002 թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 04.05.2020 թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 6 տպ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է
«Տիր» հրատարակչության տպարանում
Երևան, Ա. Սիկոյան 2/2

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2020 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒԵԳԻԱ

ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել կոլեգիայի ընդլայնված նիստ.....3

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Զորայր Հարությունյան Գույքային վնասը որպես ծանր հետևանք ՀՀ քրեական իրավունքում5

Մելիք Մելիքյան Ապօրինի ձեռնարկատիրության հանցատեսակի զարգացման միտումները և պատժի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում.....9

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արտակ Ղազարյան Ժողովրդական մեղադրանքի նշանակությունը քրեական դատավարությունում.....16

Ռոբերտ Միերյան Մեղադրանքի հասկացությունը և գործառության բնութագիրը ՀՀ քրեական դատավարությունում.....21

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բազրատ Ղազինյան Գործադիր իշխանության մարմինների համակարգի կազմավորման սահմանադրաիրավական հիմքերը որպես համակարգի կայունության և արդյունավետության նախապայման.....29

Լիլիթ Սուքիասյան Իրավունքների սահմանափակում, արդի հիմնահարցեր.....35

Մանուկ Մուրադյան, Վահե Թորոսյան Կրոնական համոզմունքի ազատության իրավունքի չարաշահման հարցերի վերաբերյալ.....41

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սուրեն Քրմոյան Պաշտոնական ծանուցումների միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում.....49

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Էդգար Ավետիսյան Մոռացված լինելու իրավունքը որպես տեղեկատվության ազատության իրավունքի սահմանափակման հիմք.....55

Դավիթ Օհանյան Հուլարկավորության ծախսերի անհրաժեշտության և ողջամտության սահմանների մասին.....60

Լիա Թևոսյան Արհեստական բանականության իրավական կարգավորման հիմնախնդիրները հեղինակային իրավունքի համատեքստում.....65

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արման Հովհաննիսյան Իրավունքը և բարոյականությունը. փոխկապվածության տեսական և գործնական խնդիրներ.....71

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անժելա Տոնոյան Աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրի հարաբերակցությունը ՀՀ-ում.....76

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Abstractы / Abstracts 81

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները95

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԿՈՒՆԳԻԱՅԻ ԸՆԴԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ

ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել կոլեգիայի ընդլայնված նիստ, որը վարել է ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը: Նիստին մասնակցել է նաև ԱՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Արամայիս Ավագյանը: Քննարկվել և ամփոփվել են ՀՀ դատախազության 2019 թ. աշխատանքների, հանցավորության դեմ պայքարում քրեական հետապնդման մարմինների գործունեության, դատախազական գործառույթների իրականացման արդյունքները:

Գլխավոր դատախազի տեղակալները, ըստ հանցագործությունների տեսակների, ներկայացրել են նախորդ տարվա ընթացքում արձանագրված հանցավորության ընդհանուր վիճակը և միտումները, հանցագործությունների կանխման, հակազդման, բացահայտման, հանցագործություններին նպաստող պատճառների վերացման ուղղություններով կատարված աշխատանքների վրա ներազադող գործոնները, դատախազության գործունեության հիմնական ձեռքբերումներն ու խնդիրները:

2019 թ. հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 26.850 դեպք, ինչը նախորդող տարվա համեմատ ավելի է 8.8 %-ով: Հանցագործությունների դեպքերի աճը տեղի է ունեցել առավելապես միջին ծանրության և ծանր հանցագործությունների աճի հաշվին, որոնք կազմել են ընդհանուր հանցագործությունների համապատասխանաբար 27.8%-ը և 16.7%-ը: Էական նվազում է արձանագրվել մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով, որի պայմաններում, սակայն, 2018 թ. համեմատ 34.3 տոկոսով աճել են սպանությունների դեպքերը: Որոշակիորեն ավելացել են նաև սպանության փորձի և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, խուլիգանության դեպքերը:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը, անդրադառնալով հանցավորության շարժընթացում արձանագրված միտումներին, դրանք խիստ մտահոգիչ է համարել՝ նշելով, որ նպաստող ավանդական գործոնների համակողմանի վերլուծությունը վկայում է, որ հատկապես առաջնային ուշադրության է պետք արժանացնել քրեական

հետապնդման բոլոր մարմինների աշխատանքում առկա որոշակի թերացումներին: Գլխավոր դատախազը հատկապես դատախազության տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարեց անհապաղ ձեռնամուխ լինել հատկապես մեծ վտանգավորություն ներկայացնող նշված հանցատեսակներով խորը և համակողմանի վերլուծություններին՝ հաշվի առնելով տարածքային առանձնահատկությունները և դրանց հիման վրա ոչ միայն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու կոնկրետ ու թիրախային հանձնարարություններ տալ, այլև խստորեն հետևել դրանց կատարման ընթացքին: Այս հարցում հետագա թերացումները, դրսևորված անփութ և անտարբեր վերաբերմունքը՝ անկախ այն հանգամանքից՝ որ օղակում է արտահայտվում, պետք է արժանանա խիստ իրավական, իսկ հիմքերի դեպքում նաև քրեաիրավական գնահատականի:

Շարունակվում են լուրջ արդյունքներ արձանագրվել հատկապես կոռուպցիայի դեմ պայքարում: Ընդհանուր առմամբ, 4.7 տոկոսով ավելացել են կոռուպցիոն դեպքերով քրեական վարույթների հարուցումները, 26,6%-ով՝ իրավասու մարմինների վարույթում քննվող կոռուպցիոն քրեական գործերի քանակը: Սակայն այս բնագավառում հիմնական դրական որակական տեղաշարժն արձանագրվել է քրեական հետապնդման ոլորտում: Մասնավորապես, 2018 թ. համեմատ մոտ 59%-ով ավելացել են դատարան ուղարկված կոռուպցիոն գործերը, 68%-ով՝ դատի տրված անձանց թիվը: Միայն վարույթն ավարտված նյութերով, քրեական գործերով և դատարանում քննված ու ավարտված գործերով կոռուպցիոն հանցագործություններով պետությանը պատճառված վնասը շուրջ 12 անգամ գերազանցում է 2018 թ. արդյունքը, իսկ այդ գործերով վերականգնված վնասը նախորդող տարվա համեմատ ավելի է 2.5 անգամ:

Կոլեգիայի նիստում նշանակալի է համարվել հատկապես պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում ՀՀ դատախազության իրականացրած գործունեության արդյունավետությունը: 2019 թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

գործառույթի շրջանակներում դատախազության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տարբեր ոլորտներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է 939 իրավախախտում, հարուցվել 228 քրեական գործ, 338 դեպքերով ուսումնասիրությունների արդյունքներն ուղարկվել են՝ ըստ ենթակայության նյութեր նախապատրաստելու համար: Պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ձեռնարկված միջոցառումներով հարուցված հայցերով, հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է մոտ 33 մլրդ. դրամ: Վերականգնվել է շուրջ 1.2 մլրդ. դրամի վնաս:

ՀՀ գլխավոր դատախազը շեշտել է, որ չնայած նշված ոլորտներում կատարված հսկայածավալ աշխատանքներին՝ անհրաժեշտ է ակտիվացնել պետական շահերի պաշտպանության գործառույթի՝ լիարժեք իրացմանն ուղղված դատախազության տարածքային ստորաբաժանումների ջանքերը՝ նախապես հստակեցնելով և թիրախավորելով համապատասխան տարածաշրջաններին բնորոշ ռիսկային ոլորտները:

Բացի այդ, Արթուր Դավթյանը հանձնարարել է առաջնահերթություն սահմանել հստակ պլանավորված գործողությունների միջոցով կատարվող հանցագործություններով պետությանը պատճառված վնասի հայտնաբերման ու վերականգնման հարցում, ինչը դառնալու է արդյունավետության գնահատման հիմնական չափորոշիչներից մեկը: Բացի այդ, խնդիր է դրվել դատախազական ներգործության միջոցների՝ գերակտիվ գործադրմամբ նպաստել կոռուպցիոն քրեական գործերով քննությունների՝ հնարավորինս արագ հանգուցալուծմանը և բավարար ապացուցողական բազայի ձևավորմամբ մեղադրական եզրակացություններով գործերը դա-

տարան ուղարկելուն: Ընդ որում, շեշտը դրվել է կոռուպցիոն գործերով որպես մեղադրյալ անցնող անձանց կողմից թաքցվող գույքի բացահայտման ուղղությամբ օպերատիվ-հետախուզական ակտիվ միջոցառումների ձեռնարկման վրա:

Կոլեգիայի նիստի ընթացքում անհանգստացնող է համարվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վիճակը և հատկապես բնակարանային գողությունների դեմ պայքարի մակարդակը: Նկատի ունենալով, որ առանձին տարածքներում, որտեղ առավել հետևողականություն է դրսևորվել դատախազության նախաձեռնությամբ անվտանգության տեխնիկական միջոցների տեղադրման հարցում, նկատվել է ինչպես բնակարանային գողությունների նվազման, այնպես էլ բացահայտման ցուցանիշների բարելավման միտում, հանձնարարվել է ակտիվացնել այդ ուղղությամբ աշխատանքները նաև մյուս տարածքներում՝ գործակցության դաշտ ներգրավելով ՏԻՄ-երին և իրավասու այլ մարմինների:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության համատեքստում ՀՀ գլխավոր դատախազն առանձնահատուկ կարևորել է քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց իրավունքների պաշտպանության և պատժի նպատակների իրականացման ներդաշնակության ապահովումը դատախազական գործառույթների՝ բացարձակ իրավաչափ իրականացմամբ:

Կոլեգիայի նիստում ՀՀ գլխավոր դատախազը տարբեր խնդիրների հետ կապված տվել է այլ կոնկրետ հանձնարարություններ, անդրադարձել, մասնավորապես, քրեական ենթամշակույթի նկատմամբ լիարժեք անհանդուրժողականության անհրաժեշտությանը:

ԶՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու»

**ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍԸ ՈՐՊԵՍ ԾԱՆՐ ՀԵՏԵՎԱՆՔ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Գնահատողական հասկացությունների օրենսդրական ամրագրման խնդիրը և այդպիսի հասկացությունների քանակական և որակական աճը հանդիսանում է քրեական օրենքի գնահատման չափորոշիչներից մեկը: Արարքների գնահատողական հատկանիշները թույլ են տալիս օրենսդրին օգտագործել այդպիսիք հսկայաձավալ հանրորեն վտանգավոր երևույթներ և գործընթացներ հիշատակելու համար, որոնց ամբողջական թվարկումը մոտ է անհնարին:

Այսպիսի հասկացությունների առկայությունը քրեական օրենքում այն դարձնում է առավել դինամիկ և ճկուն: Միևնույն ժամանակ, քրեաիրավական գնահատականներ տալու գործընթացում բարդություններ առավելապես առաջացնում է նույն գնահատողական հատկանիշների մեկնաբանումը:

Գնահատողական հասկացությունների էական թերությունը կայանում է հանցավոր արարքներին քրեաիրավական որակում տալու գործընթացում իրավակիրառողի հայեցողության վտանգավորության մեջ: Քրեական իրավունքում գնահատողական հասկացությունների շարքին կարելի է դասել՝ դեմքի անջնջելի այլանդակումը (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված), ծանր վիրավորանքը (ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդված), այլ ծանր հետևանքները (ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդված):

Գնահատողական հասկացությունները իրենց իրավական բնույթով որոշակի չեն, դրանց միջոցով կլանվում են իրականության մեծաքանակ հանգամանքներ, որոնք օրենսդիրը որպես կանոն ի վիճակի չէ միանշանակ կերպով այնպես հստակեցնել, որ այդպիսիք կիրառելի լինեն քրեական օրենքի գործողության բոլոր դեպքերի վերաբերյալ:

ՀՀ քրեական օրենսդրության մեջ քա-

նակապես ամենաշատ օգտագործված գնահատողական հասկացություններից մեկը ծանր հետևանք հասկացությունն է, այն քրեական օրենսգրքում հիշատակված է 90 անգամ:

Ծանր հետևանք եզրույթը օգտագործվում է ՀՀ քրեական օրենսգրքի բազմաթիվ հոդվածներում, սակայն դրա էությունը, բովանդակությունը մեծապես բացահայտված չէ օրենսդրի կողմից: Մի շարք իրավադրույթների տեքստում օրենսդիրը ծանր հետևանք բառակապակցության հետ միասին թվարկել է կատարված հանցագործության այլ հետևանքներ, դրանով անուղղակիորեն որոշակիորեն բացահայտելով քննարկվող եզրույթի էությունը:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ օրենսգիրք) 167-րդ հոդվածի երրորդ մասը ամրագրում է՝

«Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունները, որոնք կատարվել են կազմակերպված խմբի կողմից, կամ անզգուշությամբ առաջացրել են երեխայի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

(...):»

Մեջբերված իրավադրույթի և այլ իրավադրույթներում տեղ գտած, որպես ծանր հետևանք եզրույթին համարժեք դիտարկվող այլ հետևանքների ուսումնասիրությունը և համադրումը թույլ է տալիս գալ հետևության, որ ծանր հետևանքը իրենից ներկայացնում է առավել բարձր հասարակական վտանգավորության աստիճան կրող հանցավոր հետևանք:

Օրենսդրի կողմից ծանր հետևանքները ըստ էության հավասարեցվում են այնպիսի հանցավոր հետևանքների հետ ինչպիսիք են՝ մարդու մահը (օրենսգրքի 221-րդ հոդված), շրջակա միջավայրի ռադիոակտիվ վարակումը (օրենսգրքի 227-րդ հոդված), առողջությանն անզգուշությամբ ծանր վնաս պատճառելը

1. Տե՛ս «К вопросу о квалификации некоторых оценочных понятий в уголовном праве России». Я.В. Гармышев, И.М. Егереv, С.В. Пархоменко. Всероссийский криминологический журнал. 2016. Т. 10, N 4. С. 732-739

(օրենսգրքի 254-րդ հոդված), մարդկանց զանգվածային հիվանդությունները, կենդանիների զանգվածային ոչնչացումը (օրենսգրքի 282-րդ հոդված) և այլն:

Ծանր հետևանքների էությունն ուսումնասիրելիս օրինաչափ հարց է առաջանում՝ արդյո՞ք նյութական վնասը կարող է դիտարկվել որպես ծանր հետևանք և եթե այո, ապա՝ ո՞ր դեպքերում:

Հատկանշական է, որ քրեական օրենքում նյութական վնասը որպես ծանր հետևանք դիտարկելու մասին խոսվում է միայն մեկ իրավադրույթում: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի ութերորդ մասը սահմանում է.

«Սույն գլխում գույքային վնասի դեպքում ծանր հետևանք է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը կամ դրա արժեքը»:

Մեջբերված իրավակարգավորման վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևության, որ առանձին դեպքերում ծանր հետևանք է նաև հանցագործությամբ պատճառված գույքային վնասը: Այս իրավակարգավորումն անգամ հստակ սահմանում է գույքային վնասի նվազագույն շեմը՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը կամ դրա արժեքը: Սակայն գույքային վնասի սահմանները, որոնցում այդ վնասը կարող է որակվել որպես ծանր հետևանք, կիրառելի են զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ միայն: Այս առումով պետք է ասել, որ մեջբերված իրավակարգավորումը ծանր հետևանք հասկացությունը քրեական իրավունքում դարձնում է հարաբերականորեն որոշակի:

Ծանր հետևանք եզրույթին իր մենագրության² մեջ անդրադարձ է կատարել իրավաբանական գիտությունների թեկնածու Հրաչյա Պալյանը: Վերջինս, մասնավորապես, նշում է.

«Ծանր հետևանքներ պետք է համարել մարդու կյանքին և առողջությանը վնաս պատճառելը, խոշոր չափերի նյութական վնաս պատճառելը (օրինակ՝ ընկերության աշխատակցի կողմից առանց թույլտվության մուտք գործելու հետևանքով անզգուշությամբ ոչնչացվում է «Արմենթել» ընկերության բոլոր բաժանորդների վերաբերյալ համակարգչային տվյալների բազան, որի վերականգնման հա-

մար անհրաժեշտ են խոշոր չափի նյութական կամ մարդկային ռեսուրսներ), բնապահպանական և այլ բնույթի աղետների և վթարների առաջացումը, պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության ոչնչացումը և այլն»:

Վերոհիշյալ իրավադրույթը, դրա իրավահամեմատական ուսումնասիրությունը տեսական մոտեցումների հետ և դրանց համակցությունը թույլ է տալիս փաստել, որ գույքային վնասը ևս առանձին դեպքերում պետք է որակվել որպես ծանր հետևանք, սակայն այն բոլոր հանցագործությունների մասին խոսելիս, որոնք չեն դասվում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների շարքին, առկա է օրենսդրական որոշակիության բացակայություն, այն է՝ պարզ չէ, թե որքան պետք է կազմի գույքային վնասի չափը, որպեսզի հնարավոր լինի տալ համապատասխան քրեաիրավական որակում. այսինքն՝ այս բոլոր դեպքերում խոսքը գնում է ծանր հետևանքի՝ որպես խիստ անորոշ գնահատողական հասկացության մասին:

Ծանր հետևանքի՝ որպես գնահատողական հասկացության մասին խոսելիս պետք է նշել, որ անհրաժեշտ է տարանջատել հանցագործությամբ պատճառված վնաս և ծանր հետևանք հասկացությունները: Ցանկացած հանցագործության կատարման արդյունքում օրենքով պաշտպանվող այս կամ այն շահի պատճառվում է վնաս, որը առանձին դեպքերում կարող է ենթադրել նաև որոշակի նյութական վնաս, որը իր հերթին որոշ դեպքերում կարող է դիտարկվել որպես ծանր հետևանք: Այսինքն՝ ծանր հետևանքն ամեն դեպքում հանդիսանում է հանցագործությամբ պատճառված վնաս, սակայն ոչ միշտ է հանցագործությամբ պատճառված վնասը հանդիսանում ծանր հետևանք:

Հարկ է նշել, որ քրեական իրավունքի տեսության մեջ բացակայում է գնահատողական հասկացությունների իրավական բնույթի վերաբերյալ մեկ միասնական պատկերացում: Առավել տարածում ստացած մոտեցումներից մեկի համաձայն՝ որպես գնահատողական հասկացություններ պետք է ընդունվեն հարաբերականորեն որոշակի այն հասկացությունները, որոնց բովանդակությունը բացահայտվում է՝ հաշվի առնելով կոնկրետ դեպքում հետազոտվող կազուսի իրավիճակը, հանգամանքները³:

Հանցագործության կատարմամբ պատ-

2. Տե՛ս Հր. Պալյան: Համակարգչային հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները (քրեաիրավական և քրեաբանական հետազոտություն): - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012.: էջ 139:

ճառված վնասը համադրելով կոնկրետ քրեական գործի հանգամանքների հետ՝ հնարավոր է հաստատել ծանր հետևանքի առկայությունը կամ հակառակը՝ հերքել այդպիսին:

Գնահատողական հասկացությունների դիտարկման վերաբերյալ խորհրդատվությունների, ուղեցույցների բացակայությունն անխուսափելիորեն հանգեցնում է դատական իշխանության կողմից այդպիսի հասկացությունների ազատ մեկնաբանմանը:

Գույքային վնասը որպես ծանր հետևանք որակելու և այդպիսի քրեաիրավական գնահատական տալու հնարավորության սահմանները քննարկելիս անհրաժեշտ ենք համարում վերլուծել հայաստանյան դատական պրակտիկայում տեղ գտած մոտեցումները: Այսպես, օրինակ՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննված թիվ ԵԿԴ/0172/01/16 քրեական գործով դատարանը որպես համակարգչային սաբոտաժի կատարման արդյունքում առաջացած ծանր հետևանք է դիտարկել այն, որ կազմալուծվել էր տուժող ճանաչված սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բնականոն աշխատանքը և տևական ժամանակով խափանվել էր ընկերությանը պատկանող կայքը (քննարկվող դատական ակտը չի մտել օրինական ուժի մեջ և ներկայումս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից ենթարկվում է դատական ստուգման):

Հիշատակված օրինակին նախորդող սույն հոդվածի հատվածներում նշված և օրենսդրի կողմից ամրագրված այն հանցավոր հետևանքները, որոնք իրենց հասարակական վտանգավորության աստիճանից ելնելով՝ հավասարեցված են այլ ծանր հետևանքներ հասկացության հետ, ակնհայտորեն անհամադրելի են հայաստանյան դատական պրակտիկայում տեղ գտած այս մեկնաբանման հետ, այն է՝ մարդու մահը կամ մարդկանց զանգվածային հիվանդացումները չեն կարող հավասարեցվել տուժող ընկերության բնականոն աշխատանքի կազմալուծման հետ:

Դատարանների կողմից գնահատողական հասկացությունների՝ այդ թվում նաև այլ ծանր հետևանքներ հասկացության կամայական մեկնաբանումն իրենից մեծ վտանգ է ներկայացնում՝ հաշվի առնելով իրավական

որոշակիության սահմանադրական սկզբունքը, անձանց կողմից իրենց վարքագիծը կանխորոշելու անհնարինությունը և այլն:

Քրեական օրենքում անհատակությունների ծագման դեպքերում հնարավոր է երկու հիմնական լուծում. առաջինը՝ հնարավոր է քրեական օրենքի նորմերի հստակեցում, շտկում անմիջապես օրենսդրի կողմից կամ երկրորդը՝ իրավակիրառողին կողմնորոշման հնարավորության ընձեռումը դատական ատյանների կողմից տրվող պարզաբանումների միջոցով⁴:

Հարկավոր ենք համարում նշել, որ գնահատողական հասկացությունների մեկնաբանման սահմաններն ու օգտագործման հնարավորությունները խնդրահարույց են համարվում և ուսումնասիրությունների առարկա դարձվում մի շարք օտարերկրյա պետություններում: Այսպես, օրինակ՝ գերմանական գիտական հանրությունը գնահատողական հասկացությունների օգտագործումը համարում է անխուսափելի և եզրակացնում, որ այդպիսիք պետք է ապահովեն քաղաքացիների անվտանգությունը և կոնկրետ քրեական գործերի հանգուցալուծման համար ծառայեն արդարության սկզբունքի իրացմանը: Սակայն միևնույն ժամանակ չեն բացառվում նաև հնարավոր բացասական հետևանքները, որոնք մեծապես կապվում են իրավակիրառողի կողմից գնահատողական հասկացությունների կամայական մեկնաբանման հետ. առանձին քննարկման առարկա էր դարձվել «դատական կամայականության» հնարավորությունը: Այնուամենայնիվ, գերմանական մոտեցումը չի բացառել գնահատողական հասկացությունների օրենսդրական ամրագրումը, ավելին դրա մեկնաբանման և միատեսակ կիրառության խնդիրների լուծումը վերապահվել է դատական իշխանության բարձրագույն ատյաններին:

Ֆրանսիայի քրեական օրենսդրությունը համեմատելով գերմանականի հետ՝ պարզ է դառնում, որ գնահատողական հասկացությունների օգտագործման տեսանկյունից դրանք իրար հակադրվում են: Ֆրանսիական օրենսդիրը փորձել է ապահովել քրեական օրենքի նորմերի՝ առավել հնարավոր ֆորմալ որոշակիությունը՝ դրանով իսկ նվազագույնի հասցնելով գնահատողական հասկացություն-

3. Տե՛ս **Корчагин Г. А.** Преступления в сфере экономики и экономическая преступность / Г.А. Корчагин. — Владивосток: Изд-во Дальневост. ун-та, 2001. — 216 с.

4. Տե՛ս «К вопросу о квалификации некоторых оценочных понятий в уголовном праве России». **Я. В. Гармышев, И.М. Егоров, С. В. Пархоменко.** Всероссийский криминологический журнал. 2016. Т. 10, N 4. С. 732-739.

ների օգտագործումը: Այսպես, Ֆրանսիայի քրեական օրենսգրքում օգտագործված է հինգ անգամ քիչ գնահատողական հասկացության տեսակ, քան Գերմանիայի քրեական օրենսգրքում⁵:

Հանցագործությունների տեսակներում գնահատողական հատկանիշների վերաբերյալ դատողություններ անելիս հարկ է նշել, որ ամեն դեպքում այդպիսիք պետք է մեկնաբանվեն և կիրառվեն՝ ելնելով կոնկրետ արարքի կատարման հանգամանքներից: Սակայն միևնույն ժամանակ մեկնաբանման բացարձակ ազատությունը հղի է բազում խնդիրներով մասնավորապես օրենքի միատեսակ կիրառման տեսանկյունից:

Այսպիսով, կարծում ենք, որ քրեական օրենքի զարգացման գործում օրենսդրի հիմնական խնդիրը պետք է կայանա ոչ թե գնահատողական դատողությունների բացառման, այլ դրանց ընդհանուր քանակի օպտիմիզացիայի և դրանք կիրառելու մեթոդոլոգիայի մշակման մեջ: Անհրաժեշտ է ամրագրել գնահատման միասնական համակարգային չափորոշիչներ և հստակեցնել գնահատողական հասկացությունների էությունը քրեական օրենսդրությունում:

Մասնավորապես, կարծում ենք, որ նյութական վնասը որպես ծանր հետևանք գնահատելու հարցում անհրաժեշտ է առավելապես կարևորել տուժողի նյութական և/կամ սոցիալական ապահովվածության հանգամանքը և դիտարկել այն որպես չափորոշիչ նյութական վնասը ծանր հետևանք գնահատելու հնարավորության հարցում:

Այսպես, այն դեպքում, երբ անձին, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվում է նվազագույն աշխատավարձի՝ հազարապատիկի չափով գույքային վնաս, իսկ այդ անձի միջին ամսեկան զուտ եկամուտը կազմում է պայմանականորեն նվազագույն աշխատավարձի՝ հարյուր հազարապատիկի չափին համարժեք

գումար, ապա տվյալ գույքային վնասը չի կարող որևէ դեպքում գնահատվել որպես ծանր հետևանք: Մյուս կողմից, երբ կատարված հանցագործությամբ պատճառվում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով նյութական վնաս և երբ անձի միջին ամսեկան զուտ եկամուտը կազմում է նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափին համարժեք գումար, ապա այս պարագայում տվյալ անձի համար միանշանակ առաջանում են ծանր հետևանքներ:

Վերը հիշատակված օրինակում նշված հանցավոր հետևանքները դրամական չափման ենթարկվելով՝ կարող են գնահատվել որպես նյութական վնաս, որը, ելնելով տուժող ընկերության նյութական վիճակից, իր հերթին կարող է դիտարկվել որպես ծանր հետևանք, ինչը, սակայն, տվյալ քրեական գործի շրջանակներում դատարանի կողմից չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ քրեական իրավունքում գնահատողական հասկացությունների՝ ճիշտ և միատեսակ կիրառումն ապահովելու համար հստակեցնող չափորոշիչներ սահմանելու անհրաժեշտություն կա: Կարծում ենք, որ նյութական վնասի՝ որպես այլ ծանր հետևանքի գնահատման հիմնական չափորոշիչ անհրաժեշտ է սահմանել հանցավոր արարքից անմիջականորեն տուժած անձի նյութական/սոցիալական ապահովվածությունը:

Ներկայացված չափորոշիչի ամրագրումը մեծապես բխում է այն տրամաբանությունից, որ հանցագործության կատարման արդյունքում տուժողի համար առաջանում են համապատասխան հետևանքներ, և այդ հետևանքների՝ ծանր լինել կամ չլինելը հիմնականում կապված է տուժողի հնարավորությունների հետ:

5. Стн Шумилина О. С. (Оксана Сергеевна). Оценочные понятия в уголовном Кодексе Российской Федерации и их использование в правоприменительной деятельности: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Специальность 12.00.08 - Уголовное право и криминология; Уголовно-исполнительное право /О. С. Шумилина; Науч. рук. Л. И. Беляева; Академия управления МВД России. - М., 2002.

ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության առաջատար մասնագետ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող

**ԱՊՐԻՆԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՅԱՏԵՍԱԿԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԺ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Պետության սոցիալական գործառույթներն իրականացնելու հենքը հանդիսացող տնտեսական հարաբերությունները և դրանց անկյունաքարը համարվող ձեռնարկատիրական հարաբերությունները, լինելով բազմաշերտ կատեգորիա, իրենց մեջ ներառում են ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ, ի թիվս այլնի, իրավական ասպեկտներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է¹:

Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում թույլ տրված խախտումների համար պետության կողմից նախատեսվող պատասխանատվության տեսակները նախատեսվում են վարչական և քրեական իրավունքի ճյուղերի համապատասխան կառուցակարգերով, ինչի մասին առավել մանրամասն կներկայացվի սույն աշխատության 2-րդ մասում:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի՝ ապօրինի ձեռնարկատիրությունը՝ «1. Առանց պետական գրանցման, հաշվառման (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) կամ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) լիցենզավորման ենթակա կամ օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը, որը զուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանը զգալի վնաս պատճառելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը զուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանը խոշոր վնաս պատճառելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երկուհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երկու տարի ժամկետով:

3. Նույն արարքը, որը՝

1) զուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանն առանձնապես խոշոր չափի վնաս պատճառելով,

2) կատարվել է կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով:

4. Սույն հոդվածում զգալի չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով գումարը, խոշոր չափ՝ հանցագործության պա-

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ N° 116 2020

1. Տե՛ս հետևյալ էլեկտրոնային հղմամբ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658> (20.12.2019):

հին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող գումարը:


Սույն հոդվածի համաձայն՝ պետությանը պատճառված վնասի հաշվարկում ներառվում է նաև պետական գրանցման, ինչպես նաև հատուկ թույլտվության (լիցենզիայի) համար գանձման ենթակա պետական փութի գումարի չափը»:

Յավով պետք է նշել, որ ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններում քրեական գործերի քննության վերաբերյալ վիճակագրությունները խոսում են այն մասին, որ տվյալ հանցակազմի վերաբերյալ քննվող գործերի քանակը գրանցել է պրոգրեսիվ դինամիկա:



Մասնավորապես, ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններում քրեական գործերի քննության վերաբերյալ 2013 թվականի հաշվետվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ստացվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ ընդհանուր թվով 122 քրեական գործ, որից 2-ը ապօրինի ձեռնարկատիրության հատկանիշներով, 2014 թվականի հաշվետվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ստացվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ ընդհանուր թվով 103 քրեական գործ, որից 3-ն ապօրինի ձեռնարկատիրության հատկանիշներով, 2015 թվականի հաշվետվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ստացվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործու-

թյունների վերաբերյալ ընդհանուր թվով 103 քրեական գործ, որից 3-ն ապօրինի ձեռնարկատիրության հատկանիշներով, 2016 թվականի հաշվետվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ստացվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ ընդհանուր թվով 58 քրեական գործ, որից 6-ն ապօրինի ձեռնարկատիրության հատկանիշներով², 2017 թվականի հաշվետվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ստացվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ ընդհանուր թվով 58 քրեական գործ, որից 6-ն ապօրինի ձեռնարկատիրության հատկանիշներով, 2018 թվականի հաշվետվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ստացվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ ընդհանուր թվով 60 քրեական գործ, որից 4-ն ապօրինի ձեռնարկատիրության հատկանիշներով, 2018 թվականի հաշվետվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ստացվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ ընդհանուր թվով 23 քրեական գործ, որից 3-ն ապօրինի ձեռնարկատիրության հատկանիշներով³:

Վերը ներկայացված տվյալներն առավել տեսանելի դարձնելու համար ներկայացնենք դրանք աղյուսակներով.



2. Տե՛ս հետևյալ էլեկտրոնային հղմամբ՝ http://old.court.am/index.php?link=arm/left/statistics/2018/crim/by_court.htm (20.12.2019):
 3. Տե՛ս հետևյալ էլեկտրոնային հղմամբ՝ <http://court.am/index.php?link=arm/left/statistics/statistics.htm> (20.12.2019):



1-ին և 2-րդ աղյուսակներից նկատելի են, որ ՀՀ դատարաններում ինչպես ապօրինի ձեռնարկատիրության վերաբերյալ, այնպես էլ առհասարակ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների թվաքանակը նվազել է, սակայն 3-րդ աղյուսակից ակներև է, որ դատարաններում քննվող տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր թվում ապօրինի ձեռնարկատիրության տեսակարար կշիռը տարեցտարի մեծանում է. ուստի, տնտեսական հանցագործությունների դեմ պայքար իրականացնող, հատկապես այդ ոլորտում մասնագիտացված մարմինները, իսկ արդեն դատարան փոխանցված գործերով դատարանները պետք է իրենց լիազորությունների շրջանակներում

հատուկ ուշադրություն դարձնեն տվյալ հանցագործության քննության և բացահայտման արդյունավետացմանը:

Սակայն ամենից առաջ պետք է ուշադրություն դարձնել քրեական օրենսդրությամբ ամրագրված, տվյալ հանցագործության համար սահմանվող պատասխանատվության առանձնահատկություններին, որոնք ամբողջացնում են տվյալ հանցակազմի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի ու այն կատարված համարելու դեպքում վրա հասնող պատժի հիմնահարցերը:

Ապօրինի ձեռնարկատիրության հանցակազմի տեսական և գործնական կարևորագույն խնդիրներից մեկն էլ կայանում է դրա համար նախատեսված պատասխանատվու-

թյան առանձնահատկությունները:

Կախված տվյալ երկրում տնտեսական զարգացվածության մակարդակից՝ տարբեր են նաև տվյալ հանցակազմին հակազդելու մեթոդները:

Մի շարք տնտեսապես զարգացած երկրների քրեական օրենսդրություններով՝ քրեական պատասխանատվություն նախատեսվում է միայն ապօրինի ձեռնարկատիրության առանձին դրսևորումների համար՝ մասնավորապես ձեռնարկատիրական գործունեության իրականացումն առանց պետական թույլտվության (Դանիայի քրեական օրենսգիրք, պարագրաֆ 131)⁴, ձեռնարկության վերաբերյալ իրավական նորմերի խախտումը (Շվեյցարիայի քրեական օրենսգիրք հոդված 326-3)⁵, առանց լիցենզիայի մասնագիտական գործունեության իրականացումը (Հոլանդիայի քրեական օրենսգիրք, հոդված 436)⁶:

Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգիրքն այդ հանցատեսակի զարգացման միտումների և սոցիալ-տնտեսական մարտահրավերների պայմաններում արդարացված կերպով առավել ընդգրկուն և համապարփակ ձևով է անդրադառնում տվյալ գործունեության դեմ քրեական պատասխանատվության գործիքներին:

Հարկ է նշել, որ ձեռնարկատիրական գործունեության արդյունքում թույլ տրված ոչ իրավաչափ արարքների համար նախատեսվում են իրավունքի տարբեր ճյուղերով սահմանված պատասխանատվության տեսակներ:

Խնդիրը կայանում է նրանում, թե հայտնաբերված ապօրինի ձեռնարկատիրական գործունեության դեպքն ինչ իրավական գնահատականի պետք է արժանանա և կոնկրետ իրավունքի՝ ո՞ր ճյուղով սահմանված պատասխանատվության տեսակը պետք է կիրառվի դրա դեմ, որպեսզի լինի համաչափ և օրինական:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կա-

տարելիս պատճառված վնասը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տնտեսական ընկերակցությունները հատուցում են իրենց մասնակիցների կողմից ընկերակցության՝ ձեռնարկատիրական կամ այլ գործունեություն իրականացնելիս պատճառված վնասը:

Վերոգրյալ քաղաքացիաիրավական կարգավորումը թեև պարունակում է պատասխանատվության տարրեր, սակայն դրանք վերաբերվում են այն դեպքերին, երբ խոսքը գնում է օրինական հիմքով և պատշաճ իրավական ընթացակարգով ձեռնարկատեր հանդիսացող անձանց գործունեության մասին, մինչդեռ պատկերն այլ է վարչական և քրեական իրավունքի՝ համապատասխան դրույթներով պատասխանատվություն առաջացնող իրավանորմերի դեպքում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՎԻՎՕ) 169-րդ հոդվածում նշված է.

«(...) Ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելը, այսինքն՝ առանց իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը կամ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելը (բացառությամբ մարդատար-փաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման) (...)»:

Հոդվածի շարադրանքից ակներև է, որ ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի դեպքում, այնպես էլ այս պարագայում գործ ունենք անհատ ձեռնարկատիրոջ՝ առանց պետական գրանցման տվյալ գործունեությամբ զբաղվող անձի հետ. նման պայմաններում քրեական օրենսգրքի՝ հատուկ մասով նախատեսված հանցակազմից այն տարբերակվում է իրավախախտման արդյունքում հասցված վնասի չափով:

Այսինքն, այն դեպքերում, երբ ապօրինի ձեռնարկատիրության արդյունքում հասցված

4. St' u Юрид. центр «Пресс», 2001.- էջ 423:

5. St' u Уголовный кодекс Швейцарии / перевод с нем. яз. А. В. Серебреннико-вой. — М.: Юридический центр Пресс, 2000. — էջ 288:

6. St' u Уголовный кодекс Голландии / Науч. ред. д.ю.н. Б. В. Волженкин, пер. с англ. И. В. Мироновой. СПб., 2000. էջ. 231:

վնասի չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը, ապա վրա է հասնում վարչական պատասխանատվությունը:

«Հ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Հարկային օրենսգրք) 407-րդ հոդվածի համաձայն՝

«1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ապօրինի գործունեության հայտնաբերման դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ձեռնարկատիրական եկամտի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 200 հազար դրամից: Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ ապօրինի գործունեություն է համարվում առանց օրենքով սահմանված պետական գրանցման (հաշվառման) կամ առանց հարկային մարմիններում հաշվառման ձեռնարկատիրական գործունեության (բացառությամբ օրենքով արգելված գործունեության) իրականացումը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում խախտման կրկնակի և հետագա (անկախ իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակից) փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված ձեռնարկատիրական եկամտի 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից: (...)»:

Չուգահեռներ անցկացնելով ապօրինի ձեռնարկատիրական գործունեության կապակցությամբ առաջ եկող վարչական պատասխանատվության՝ վերոգրյալ դրույթների և ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսվող պատժի առանձնահատկությունների միջև՝ անհրաժեշտ ենք համարում ուշադրություն հրավիրել, մասնավորապես, հարկային օրենսգրքի 407-րդ հոդվածում նշված

«հայտնաբերման դեպքում» և «փաստ» սահմանումների վրա, որոնք ինքնին բավարար հիմք են՝ անձին տուգանելու համար:

Հարկ է արձանագրել, որ ի տարբերություն վարչական ներգործության ձևերի, քրեական պատժի հարցն առաջանում է բացառապես այն դեպքերում, երբ կատարված հանցանքով հասցվող վնասը հատում է «զգալի չափի» շեմը, ինչը, մեր կարծիքով, արդարացված չէ, քանի որ սույն աշխատության 1-ին կետում ներկայացված վիճակագրական տվյալների առկայության և պետության համար սոցիալ-տնտեսական մարտահրավերների պայմաններում վտանգ է ստեղծվում այնքանով, որ քանով անձը կարող է պարբերաբար կրկնել նույն հանցավոր արարքները. ամեն անգամ, երբ բացահայտման արդյունքում պարզվի, որ այն չի հատում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի շեմը, կենթարկվի միայն վարչական պատասխանատվության, ինչը հատկապես ստորև ներկայացվող պատճառաբանությունների համատեքստում, մեր կարծիքով, ընդունելի մոտեցում չէ:

Լատվիայի քրեական օրենսգրքի 207-րդ⁷ հոդվածի համաձայն՝ հանցագործությունը համարվում է կատարված, եթե ի թիվս այլնի, այն կատարող անձը զգուշացված է լինում ձեռնարկատիրական գործունեությունը կասեցնելու հրամանի մասին, սակայն դրանից հետո մեկ տարվա ընթացքում կրկնում է նույնաբնույթ արարք:

Մոլդովայի օրենսդիրն այս կոնտեքստում դրսևորել է ավելի կոշտ մոտեցում՝ քրեական օրենսգրքի 192-5-րդ հոդվածով սահմանելով քրեական պատասխանատվություն այն անձի նկատմամբ, ով, արդեն իսկ ունենալով վարչական տույժ, կրկնել է նույն արարքը. չի սահմանվում, թե ինչ վաղեմության պետք է լինի կիրառված պատասխանատվության տեսակը:

Հետհայաց (ռետրոսպեկտիվ) կերպով քննարկելով նախկինում գործող իրավակարգավորումները՝ ներկայացնենք հետևյալը.

«Հ նախկին քրեական օրենսգրքում ամրագրված, 1992 թվականին ընդունված և 1997 թվականին խմբագրված «Ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելը կամ ապօրինի

7. Տե՛ս հետևյալ էլեկտրոնային հղմամբ՝ http://www.pravo.lv/likumi/07_uz.htm (20.12.2019):

8. Տե՛ս հետևյալ էլեկտրոնային հղմամբ՝ [https://www.arlis.am/documentview.aspx?docid=5\(20.12.2019\):](https://www.arlis.am/documentview.aspx?docid=5(20.12.2019):)

բանկային գործունեությամբ զբաղվելը» վեր-
տառությամբ 155.1-րդ հոդվածի համաձայն՝
«(...) Ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղ-
վելը, (...) որը կատարվել է նույնպիսի խախ-
տումների համար վարչական տույժ նշանա-
կելուց հետո մեկ տարվա ընթացքում (...) պատժվում է (...)» :

ՀՀ դատարանների նախագահների
խորհրդի կողմից 2000 թվականի փետրվարի
12-ին ընդունված «ՀՀ դատարանների կողմից
ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելու
կամ ապօրինի բանկային գործունեությամբ
զբաղվելու համար պատասխանատվության
վերաբերյալ քրեական օրենսդրության կիրառ-
ման որոշ հարցերի մասին» թիվ 22 որոշման
համաձայն՝ «(...) 1. ՀՀ քր. օր. 155 հոդվածը
նախատեսում է երկու տարբեր հանցակազմ՝
ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելը և
ապօրինի բանկային գործունեությամբ զբաղ-
վելը:

(...)

Թվարկված արարքները պատժելի են,
եթե դրանցից որևէ մեկը կատարվել է նույնպիսի
խախտումների համար վարչական տույժ նշա-
նակվելուց հետո մեկ տարվա ընթացքում և
հանգեցրել է (կարող էր հանգեցնել) սահման-
ված նվազագույն աշխատավարձի հարյուրա-
պարիկի չափը գերազանցող եկամուտ (շա-
հույթ) ստանալուն:

(...)

3. Դատարանները պարտավոր են ՀՀ
քր. օր. 155.1 հոդվածի առաջին մասով գործերը
քննելիս ստուգել նախկինում անձին վարչական
պատասխանատվության ենթարկելու օրինա-
կանության հարցը: Եթե կարգվի, որ անձը
նախկինում նման խախտումների համար
վարչական պատասխանատվության է ենթարկ-
վել անօրինական կարգով, ապա պետք է
կայացվի արդարացման դատավճիռ՝ ամբաս-
տանյալի արարքում հանցակազմի բացակայու-
թյան պատճառով(...)»⁹:

Վերոգրյալի լույսի ներքո արձանագրում
ենք, որ գործող քրեական օրենսդրության պայ-
մաններում ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ
հոդվածի կարգադրություններում անձի՝ վարչա-
կան պատասխանատվության ենթարկված լի-
նելու վերաբերյալ նշումների բացակայությունը

կարող է լուրջ խնդիրներ առաջացնել տվյալ
հանցակազմի համատեքստում պատժողական
քաղաքականության արդյունավետության հա-
մար, քանի որ գործող կարգավորումների պայ-
մաններում փաստացի ստեղծվում է այնպիսի
իրավիճակ, երբ անձը կարող է պարբերաբար
զբաղվել ապօրինի ձեռնարկատիրական գոր-
ծունեությամբ, ոտնձգի պետության տնտեսա-
կան գործունեությանը և դրա դեմ հնարավոր
չլինի ներգործել քրեաիրավական գործուն մե-
խանիզմներով, որոնք իրենց բնույթով պետա-
կան հարկադրանքի՝ առավել խիստ միջոցներ
են և կանխարգելիչ նշանակություն կարող են
ունենալ տվյալ դեպքերի դեմ պայքարում:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի
նախագծի (այսուհետև նաև՝ Նախագիծ) համա-
պատասխան կարգավորումներում՝ մասնավոր-
ապես Նախագծի 264-րդ հոդվածում նույն-
պես անձի՝ վարչական պատասխանատվության
ենթարկված լինելու պայմաններում որոշակի
ժամանակահատվածում այն կրկնելու պայմանի
վերաբերյալ կրկին համապատասխան դրույթ-
ներ առկա չեն:

Ապօրինի ձեռնարկատիրության համար
անձին քրեական պատասխանատվությունից
կամ պատժից ազատելու խնդիրն անդրադառ-
նանք դրա վերաբերյալ գործող և նախատես-
վող խրախուսական նորմերին:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 189-րդ
հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի
188-րդ, 189-րդ, 193-րդ, 194-րդ և 205-րդ
հոդվածներով նախատեսված արարքները
կատարած անձն ազատվում է քրեական պա-
տասխանատվությունից, եթե հատուցում է
հանցագործությամբ պատճառված վնասը և
հաշվարկված տույժերն ու տուգանքները:

Կարծում ենք, որ վերոգրյալ իրավանորմը
շարադրված է տարածականորեն, չի բխում
քրեական օրենսդրության նպատակներից և
առաջացնում է մի շարք խնդրահարույց հար-
ցեր, ինչի վերաբերյալ մեր նկատառումները
վերաբերում են հետևյալին.

- նախևառաջ նշենք, որ օրենսդրի կողմից
ցուցաբերված այն մոտեցումը, թե անձը, ըստ
էության, ցանկացած դեպքում ազատվում է
քրեական պատասխանատվությունից՝ միայն
պայմանավորված այն հանգամանքով, որ

9. Տե՛ս հետևյալ էլեկտրոնային հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18299> (20.12.2019):

հատուցում է հանցագործությանը պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները, մեր կարծիքով արդարացված չէ, քանի որ նման պայմաններում, փաստացի, ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ անձը կարող է պարբերաբար կրկնել տվյալ հանցանքը՝ իմանալով, որ դրա հնարավոր բացահայտման դեպքում, փոխհատուցելով հասցված վնասը, կազատվի վրա հասնելիք քրեական պատասխանատվությունից,

- ընդունելի չէ այն հայեցակետը, որ հասցված վնասները փոխհատուցելու դեպքում անձն ազատվում է ոչ թե պատժից, այլ քրեական պատասխանատվությունից՝ հատկապես այն պայմաններում, երբ տվյալ պարագայում քրեական հետապնդումը դադարեցվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված քրեական հետապնդումը դադարեցնելու ռեաբիլիտացիոն հիմքով, որպիսի հանգամանքներում իրավական հետևանքի բացակայությունը հանգեցնում է տվյալ հանցավոր արարքների կրկնելիության:

Ներկայացված նկատառումների պայմաններում գործող կարգավորման ձևակերպումը, մեր կարծիքով, արդարացված չէ, քանի որ հնարավոր չէ հիմնավորել, թե ինչ չափանիշներով է առաջնորդվել օրենսդիրը, որոնցով տվյալ հանցատեսակներն առանձնացրել է մյուս հանցատեսակից և դրանց շնորհել նման «արտոնություններ»՝ ի թիվս այլնի նաև խախտելով իրավական որոշակիության (res judicata)՝ իրավունքի հիմնարար սկզբունքը:

Վերոգրյալ խնդրահարույց հարցերի վերաբերյալ որոշակի լուծումներ են առաջարկվել Նախագծի 264-րդ հոդվածի 4-րդ մասով, որի համաձայն՝ «(...) 4. Սույն հոդվածով նախատեսված հանցանքը **առաջին անգամ** կատարած անձը ազատվում է **պատժից**, եթե ամբողջությամբ վճարել է չվճարված հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարումները և դրանց

չվճարման համար սահմանված տույժերը և **նախկինում նշված հիմքով չի ազատվել քրեական պատասխանատվությունից (...)**»:

Այսպիսով, հաշվի առնելով ապօրինի ձեռնարկատիրության հանցագործության արդի միտումները և քրեական օրենսգրքով սահմանվող պատժի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում և համադրելով դրանք սույն աշխատությանը կատարված հետազոտություններին՝ հանգում ենք հետևյալ հետևություններին.

1. ապօրինի ձեռնարկատիրության՝ քրեաիրավական և վարչական իրավունքի ճյուղերի սերտ կապի առկայության պայմաններում առաջարկում ենք, որպեսզի նախատեսվի համապատասխան դրույթ, համաձայն որի՝ քրեական պատասխանատվություն կնախատեսվի ձեռնարկատիրական գործունեությամբ ապօրինի զբաղվելու համար այն դեպքերում, երբ տվյալ անձն արդեն նույնպիսի խախտումների համար վարչական տույժ նշանակելուց հետո որոշակի ժամանակահատվածում կկրկնի այն անկախ հասցված վնասի չափից:

Այդ դրույթը մեծ նշանակություն կունենա նշված հանցատեսակի դեմ տարվող պրևենցիալ պայքարի ռազմավարության արդյունավետացման համար և զսպիչ դեր կկատարի վարչական իրավախախտումների կրկնելիությունը նվազեցնելու գործում:

2. Հատուկ ուշադրության պետք է արժանանան տվյալ հանցագործության համար նախատեսվող խրախուսական նորմերը, որոնք պետք է մի կողմից դրսևորեն պետության՝ մարդասիրական մոտեցումները, մյուս կողմից կենսագործեն քրեական օրենսդրության նպատակները՝ էապես նվազեցնելով տվյալ հանցատեսակի զարգացման միտումները. մինչդեռ, ինչպես փաստվեց սույն աշխատության շրջանակներում, տվյալ նորմերն անկատար են և ենթակա են լրամշակման:

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

«Ն ստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Քրեական դատավարությունում մեղադրանքն ունի առանցքային նշանակություն. մեղադրանքն է հանդիսանում վարույթի շարժիչ ուժը, որն էլ ապահովում է հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը:

Գիտակցելով հանցագործությունների՝ հանրային իրավական նշանակությունը՝ մեղադրանքի՝ այդ դժվար և պատասխանատու գործառույթը մեր ժամանակներում պետությունները վերցրել են իրենց ձեռքը: Այլ կերպ ասած՝ այժմ մեղադրանքը հանդիսանում է պետական գործառույթ: Այն իրականացնում են պաշտոնատար անձինք ու պետական մարմինները:

Սակայն պետական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպումն իր դրական կողմերի հետ մեկտեղ որոշակի բացասական հետևանքներ է ունենում:

• Առաջանում է մեղադրանքի՝ «քաղաքականացվածության» վտանգը, որը կարող է արտահայտվել ինչպես «դրական», այնպես էլ «բացասական» եղանակով (օրինակ՝ եթե քրեական հետապնդում իրականացվում է՝ որոշակի քաղաքական դրդապատճառներից ելնելով, կամ դադարեցվում է նույն սկզբունքով, ապա քրեական հետապնդման հիմքերի առկայության դեպքում քրեական հետապնդում չի իրականացվում կամ դադարեցվում է): Ընդ որում, եթե առաջին դեպքում, քաղաքական շարժառիթով պայմանավորված, քրեական հետապնդման հարուցման և իրացման պարագայում դրա չեզոքացման իրավական մեխանիզմներն առկա են առնվազն պաշտպանության և դրա իրավունքի ապահովման ձևով (հարցն այն է, թե որքանով են նման դեպքերում արդյունավետ այդպիսի իրավական մեխանիզմները գործում), ապա երկրորդ դեպքում արդեն հանրությունը (դրա անդամները) գրկ-

ված են հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական պատասխանատվությունն ապահովելու իրավական միջոցներից, որոնք բացակայում են,

• Պետական մեղադրանքը փաստացիորեն «դուրս է մղում» հանրությանը հանցագործությունների և դրանք կատարած անձանց բացահայտման ու հետապնդման գործից. այդպիսով, հասարակությունը (դրա անդամները) քրեական հետապնդման գործում սկսում է զբաղեցնել «երկրորդական», «պասիվ» դեր՝ հանցագործությանն արձագանքելու ակտիվ դերակատարի գործառույթը վերապահելով պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց: Քրեական հետապնդման գործում «դերերի» այդպիսի բաշխումը, իր հերթին, ձևավորում է ընդհանուր այն մտայնությունը, որ հանցագործությանն արձագանքելը ոչ թե հանրության, այլ պետության, դրա առանձին մարմինների և ոչ թե հասարակության անդամների գործն է: Այդպիսի մտայնությունը նպաստում է հասարակության անդամի՝ հանցագործության (այն կատարած անձի) բացահայտման ու հետապնդման (պատասխանատվության ենթարկելու) անհրաժեշտության հանդեպ «անտարբերության» գիտակցության ձևավորմանը և որպես հետևանք հանգեցնում է հասարակության ընդհանուր իրավագիտակցության անկմանը,

• Հանցավորության աճի՝ համընդհանուր միտումների և պետական ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում պետական մեղադրանքի պարագայում դժվար, իսկ շատ դեպքերում օբյեկտիվորեն անհնար է դառնում ապահովել կատարված յուրաքանչյուր հանցագործություն անպատասխան չթողնելու, յուրաքանչյուր հանցագործությամբ քրեական հետապնդում հարուցելու ու իրացնելու, որպես արդյունք՝ հանցանք կատարած անձին քրեա-

• ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

կան պատասխանատվության ենթարկելու հարցերը: Այլ կերպ ասած՝ պետական մեղադրանքի դեպքում միջոցների սղության պատճառով անհնար է դառնում ապահովել յուրաքանչյուր հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվությունը: Այդ հանգամանքը քրեական հետապնդման գործառույթում հասարակության (դրա անդամների)՝ «երկրորդական» և «պասիվ» դերի պայմաններում շատ դեպքերում հանգեցնում է քրեական դատավարության նկատմամբ ընդհանրապես, իսկ քրեական հետապնդման մարմինների հանդեպ մասնավորապես, հանրային վստահության անկմանը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Թվարկված հարցերի լուծման համար առաջանում է մեղադրանքի իրականացմանը մասնավոր անձանց ներգրավելու անհրաժեշտություն, այսինքն՝ պետական (պրոֆեսիոնալ) մեղադրանքին զուգահեռ ոչ պետական (ոչ պրոֆեսիոնալ) մեղադրանքի կազմակերպման անհրաժեշտություն, որն էլ իր հերթին կարող է կազմակերպվել երկու՝ մասնավոր և/կամ ժողովրդական մեղադրանքի եղանակով:

Սույն հոդվածի շրջանակներում կքննարկվեն մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի՝ մի տեսակի՝ *ժողովրդական մեղադրանքի, այսինքն՝ անմիջականորեն հանրային շահի պաշտպանությանն ուղղված, հանրության (քաղաքացիների, նրանց միավորումների) կողմից իրականացվող մեղադրանքի նշանակությունը վերաբերող հարցեր:*

Ժողովրդական մեղադրանքի նշանակությունը կարելի է դիտարկել երկու տարբեր հարթություններում՝ հասարակական-քաղաքական և զուտ իրավական-տեխնիկական:

1. Ժողովրդական մեղադրանքի նշանակությունը հասարակական-քաղաքական հարթությունում

1.1 Ժողովրդական մեղադրանքն իբրև ժողովրդավարության դրսևորման, քրեական դատավարությունը քաղաքականապես «չեզոքացնելու» և դատավարության հանդեպ հանրային վստահությունը բարձրացնելու միջոց

Թեև գրականության մեջ ձևավորված չէ մեկ միասնական մոտեցում ժողովրդավարություն հասկացության առնչությամբ, և այն բնորոշելիս տարբեր հեղինակներ առավելապես ուշադրություն են դարձնում ժողովրդավարության՝ այս կամ այն հատկանիշի վրա, այնուամենայնիվ անհերքելի է, որ դրա կարեվորագույն հատկանիշը հենց ժողովրդի մասնակցությունն է հանրային (պետական) գործերի իրականացմանը:

Մեղադրանքի այս տեսակը հանրության ինքնագործունեության նոր ոլորտ է բացում. քաղաքացիները (նրանց միավորումները) հնարավորություն են ստանում քրեական հետապնդում հարուցելու և իրացնելու միջոցով մասնակցել քրեական դատավարությանը:

Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի առկայությունը (ոչ հիմնական ժողովրդական մեղադրանքի ձևով²) թույլ է տալիս քրեական դատավարությունում լուծել պետական մեղադրանքի մենիշխանության հարցը՝ դուրս մղելով (կամ գոնե չեզոքացնելով) քրեական գործերի ընթացքի վրա քաղաքական տարատեսակ ազդեցությունը: Իսկ այն, որ պետական մեղադրանքը ապահովագրված չէ այս կամ այն չափով քաղաքական իշխանության ազդեցության տակ ընկնելու վտանգից, կարծում ենք, անհերքելի է: Միայն պետական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպումը, այլ կերպ՝ պետական մեղադրանքի մենիշխանությունը, իր հերթին, հղի է այն վտանգով, որ քաղաքական իշխանության ազդեցության տարատեսակ գործոնները կարող են հանգեցնել քրեական հետապնդում չհարուցելուն, դրա դադարեցմանը, քրեական հետապնդման միակողմանիությանը. արդյունքում՝ հանցագործություն կատարած անձինք կարող են հնարավորություն ստանալ խուսափելու պատասխանատվությունից:

Ժողովրդական մեղադրանքի առկայությունը հասարակական-քաղաքական ասպարեզում կհանգեցնի նաև այն իրողությանը, որ եթե նույնիսկ քաղաքական իշխանությունը «չցանկանա» որոշակի քրեական գործեր հա-

1. Մասնավոր անձի կողմից իրականացվող երկու մեղադրանքների՝ մասնավոր և ժողովրդական մեղադրանքների սահմանազատման մասին առավել մանրամասն տես **Ա. Ղազարյան**, Մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի մոդելների պատմական զարգացումը // «Պետություն և իրավունք» No 1(83), Երևան, 2019թ., էջ 65-75
2. Ժողովրդական մեղադրանքի տեսակների մասին կխոսվի ստորև:

րուցել, անձանց հետապնդել և պատասխանատվության ենթարկել, ապա հնարավոր կլինի «քաղաքական այդ ցանկության բացակայությունը» հաղթահարել հենց ժողովրդի ջանքերով՝ այդ կերպ հնարավորություն ստեղծելով քրեական դատավարության ոլորտում նվազեցնել քաղաքական իշխանության ազդեցությունը կամ ընդհանրապես չեզոքացնել այն:

Այս առումով տեղին է հնչում Դ. Ռոտենբերգի և Բ. Գառզոնի՝ Ա. Պինդչետի և արգենտինական այլ գործերի առնչությամբ արված հետևյալ դիտարկումը. «Ժողովրդական մեղադրանքի կենտրոնական գաղափարը հանրության նախաձեռնությամբ այն գործերի դատական քննության հնարավորության ապահովումն է, որոնց պետության շահերը ներկայացնող հանրային մեղադրողները (դատախազը – Ա.Դ.) չեն կարող դիպչել այդ գործերի՝ քաղաքականապես խիստ զգայուն լինելու պատճառով»³:

Մյուս կողմից՝ հանրության անմիջական մասնակցությունը քրեական արդարադատությանը, և քրեական հետապնդման ոլորտում պետական մենիշխանության վերացումը, իրենց հերթին, բարձրացնում են քրեական դատավարության հանդեպ հանրային վստահությունը:

«Ժողովրդական մեղադրանքի դրական դերը կայանում է նրանում (...), որ դրանով ապահովվում է հանրային վստահությունը դատարանի նկատմամբ, այսինքն՝ մի բանում, որ հանդիսանում է արդարադատության բարոյական ուժը, որը հիվանդանում և տառապում է խիստ մեծ անվստահությունից», – դեռևս 1864 թ. ընդգծում էր Ֆ. Հոլցենդորֆը⁴:

1.2 Ժողովրդական մեղադրանքն իբրև հանրության քաղաքացիական իրավագիտական արժանատի միջոց

Ժողովրդական մեղադրանքի նշանակությունը չի սպառվում քրեական դատավարությունը քաղաքական հնարավոր ազդեցություններից զերծ պահելով. այն դրական դեր

է կատարում հենց հասարակության համար, հանրության մեջ ձևավորում և ամրապնդում է քաղաքացիական իրավագիտակցությունը:

Հանրությանն ընձեռած հնարավորությունը՝ հետապնդել հանցանք կատարած անձին, հանում է հասարակության անդամին վերը նկարագրված «պասիվ» վիճակից, և նա դիտարկվում է իբրև հանցավորության դեմ պայքարի ակտիվ դերակատար: Հանցագործության դեմ պայքարում այդ ակտիվ դերակատարությունը կարող է փոխել հասարակական գիտակցությունը. եթե պետական մեղադրանքի մենիշխանության պարագայում հանրությունը, կարծես, երկրորդական կամ երրորդական դերում է (ուստի, ձևավորվում է ընդհանուր մտայնություն, որ հանցագործությանն արձագանքելը ոչ թե հանրության, դրա առանձին անդամների (նաև տարատեսակ հասարակական միավորումների), այլ պետության՝ պետական մարմինների, պաշտոնատար անձանց գործն է), ապա ժողովրդական մեղադրանքն այդ գործում առաջ է մղում հանրությանը՝ նրան պասիվ դիտորդից վերածելով ակտիվ գործողի, որն էլ, իր հերթին, ձևավորում է գիտակցություն, որ հանցագործության և այն կատարած անձի հետապնդումն արդեն ոչ միայն պետական, այլ նաև հանրային (բառի ուղիղ իմաստով) գործ է:

Ընդ որում, այն հանգամանքը, որ հետապնդումն իրականացվում է՝ ոչ թե ինչ-որ մեկի մասնավոր, այլ ընդհանուր, հանրային շահից ելնելով, ամրապնդում է հասարակության անդամների՝ հանրային շահի կարևորության գիտակցությունը: Այս առումով տեղին է վկայակոչել անգլիացի ականավոր իրավաբան լորդ Ջ. Քենվիլիին, որը դա համարում է մեծագույն նվաճում. ժողովրդական մեղադրանքի իրավունքը, ըստ նրա, չի կարող չլինել հասարակության իրավագիտակցության բարձրացման, համերաշխության ոգու ամրապնդման, քաղաքացիների շրջանում ինքնակառավարումն ու անշահախնդրությունը դաստիարակող լծակներից մեկը⁵:

Այդ ինստիտուտի սոցիալական նշա-

3. Մեջբերումն ըստ R. S. Gómez, Revisiting Popular Action, 10 DePaul J. for Soc. Just., 2017, էջ 4:

4. Մեջբերումն ըստ Полянский Н.Н. К вопросу об участии частных лиц в публичном обвинении (Принципиальная основания actio popularis в уголовном процессе), 1915, էջ 12 (<http://jurytrial.ru/media/files/library/file30.pdf>).

5. Մեջբերումն ըստ Полянский Н.Н. նշվ. աշխ., էջ 18:

նակության գիտակցումը, իր հերթին, պայմանավորել է գիտության մեջ ժողովրդական մեղադրանքով հանրային շահերի պաշտպանությունը դիտարկել իբրև «քաղաքացիության դպրոց»⁶, որը մշակում է իսկական քաղաքացիական վարքագիծ՝ ընդհանուր, հանրային շահի պաշտպանության գործում անմասն չմնալու և ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար:

2. Ժողովրդական մեղադրանքի իրավական-տեխնիկական նշանակությունը

Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը մեծ դեր կարող է կատարել նաև քրեական հետապնդման արդյունավետության բարձրացման գործում⁷:

Հայտնի է, որ հանցավորության աճը համընդհանուր միտում ունի աշխարհում (թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ պատճառներով), որից անմասն չէ նաև Հայաստանը⁸: Բնական է, որ պետության միջոցները չեն կարող հանցագործությանը համահունչ աճել, և արդյունքում՝ մեղադրանքի պետական մեխիշխանությունն օբյեկտիվորեն չի կարող արդյունավետ լուծել յուրաքանչյուր հանցագործությունն անպատասխան չթողնելու, յուրաքանչյուր հանցագործության դեպքում քրեական հետապնդման հարուցման և իրացման, հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերը⁹:

Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը հնարավորություն է տալիս հանցագործության «արձագանքման» գործում պետական միջոցներից բացի, կենտրոնացնել և օգտա-

գործել ոչ պետական, հասարակական միջոցները:

Մյուս կողմից՝ ժողովրդական մեղադրանքը լուծում է մեկ այլ խնդիր. պետական մեղադրանքին զուգահեռ՝ ժողովրդական մեղադրանքի (լրացնող ժողովրդական մեղադրանք) տեսակը բարձրացնում է պետական մեղադրողի զգոնությունը քրեական հետապնդման գործում, քանի որ պետական մեղադրանքին զուգընթաց իրացվող ժողովրդական մեղադրանքի ամեն մի հաջողություն կարող է վկայել պետական մեղադրանքի թերացումների, միակողմանիության և այլնի մասին: *Հետևաբար, ժողովրդական մեղադրանքն այդպիսով հանդես է գալիս իբրև քրեական գործերի քննության անմիջական հասարակական վերահսկողության ապահովման ուղղակի միջոց՝ բարձրացնելով պետական մեղադրանքի արդյունավետությունը:*

Այդ արդյունավետությունը բարձրանում է՝ ոչ միայն ժողովրդական մեղադրանքի «վերահսկողական», այլ նաև «լրացնող»¹⁰ գործառույթով պայմանավորված:

Այլ կերպ ասած՝ քրեական հետապնդման արդյունավետությունը բարձրանում է ոչ միայն սուբյեկտիվ գործոնները չեզոքացնելու (քրեական հետապնդում իրականացնող պաշտոնատար անձի զգոնության բարձրացման միջոցով և այլն), այլ նաև որոշակի օբյեկտիվ գործոնների (քրեական հետապնդման սահմանափակ պետական կադրային, ֆինանսական և այլ ռեսուրսների «լրացումը» հանրային, հասարակական ռեսուրսների միջոցով և այլն) վերացման փորձ կատարելու միջոցով¹¹:

Ընդհանրացնելով պետք է փաստել, որ

6. Տեն, օրինակ, J. P. GIL, Private Interests Seeking Punishment: Prosecution Brought by Private Individuals and Groups in Spain, Law & Policy, 2003, էջ 163:

7. Խոսքը գնում է մասնավորապես քաղաքական ազդեցության տարրերից զուրկ գործերի քննության արդյունավետության բարձրացման մասին:

8. ՀՀ-ում հանցագործության դեպքերի աճի (գրանցված հանցագործությունների դեպքերի) մասին կարող են վկայել գլխավոր դատախազի 2008թ. և 2017թ. ընթացքում հանցագործությունների քննության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների համեմատությունը: Այսպես, եթե 2008թ. գրանցվել է հանցագործության 9271 դեպք (<http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/report-2008.pdf>), ապա արդեն 2017թ. այդ թիվը կազմել է 20285 (<http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/haxordum.pdf>):

9. Այս հանգամանքով պայմանավորված էլ ստեղծվում են քրեական հետապնդման այլընտրանքներ: Քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների մասին տես, օրինակ, Головки Л. В. Альтернативы уголовному преследованию в современном праве. – СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2002:

10. Ասվածը վերաբերելի է նաև ժողովրդական մեղադրանքի սուբսիդիար ձևով կազմակերպանը:

մասնավոր անձի կողմից իրականացվող այս հետապնդման տեսակը՝ ժողովրդական մեղադրանքը, իր բազմաթիվ տարատեսակներով խիստ կարևոր դեր կարող է կատարել ինչպես քրեական հետապնդման արդյունավետության բարձրացման, այնպես էլ պետական քրեական հետապնդման քաղաքականացվածության չեզոքացման հարցերում՝ հանգեցնելով ն քրեա-

կան հետապնդման, ն քրեական դատավարության հանդեպ հանրային վստահության բարձրացմանը: Այս առումով, գտնում ենք, որ հասունացել է ժամանակը հայ իրավական դոկտրինում քննարկելու ժողովրդական մեղադրանքը հայկական քրեադատավարական համակարգում ներդնելու հարցերը:



11. Ժողովրդական մեղադրանքի իրավական տեխնիկական նշանակության մասին տես **Полянский Н.Н.** նշվ.աշխ., էջեր 14-18: Ժամանակվա գիտնականների տեսակետը այս հարցի վերաբերյալ տես, օրինակ, **J. P. Gil**, Private Interests Seeking Punishment: Prosecution Brought by Private Individuals and Groups in Spain, Law & Policy, 2003, էջեր 164-165, **R. S. Gómez**, Revisiting Popular Action, 10 DePaul J. for Soc. Just., 2017, էջ 8-9:

ՄՀԵՐՅԱՆ ՌՈՒԲԵՐՏ

Երևանի պետական համալսարան, Իրավագիտության ֆակուլտետ,
իրավագիտության մագիստրոս

**ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՀԱՍՎԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մեղադրանքը քրեական դատավարության շարժիչ ուժն է, որի միջոցով ապահովվում է քրեական հետապնդման կառուցակարգի գործունեությունը: Առանց մեղադրանքի քրեական արդարադատությունն առարկայազուրկ է: Մեղադրանքի գործառույթը սերտորեն կապված է ինչպես պաշտպանության, այնպես էլ արդարադատության իրականացման գործառույթի հետ: «Մեղադրանք» հասկացությունն իր բնորոշումն ու բնութագիրը ստացել է քրեական դատավարության գիտության և օրենսդրության կողմից:

Քրեական դատավարության գիտության կողմից մեղադրանքի բնորոշման հետ կապված առկա են բազում տեսական բանավեճեր և դրա իմաստի ընկալման տարբեր մոտեցումներ: Մեղադրանքը բնորոշվում է որպես քրեադատավարական գործառույթ¹ և մեղադրողի գործունեության միջոց², որպես անձին մեղագրվող հակաիրավական և հանրության համար վտանգավոր գործողությունների կամ անգործությունների ամբողջություն³, որպես դատավարական հարաբերություն, որը ծագում է պետության և իբրև մեղադրյալ ներգրավված անձի միջև⁴, որպես դատարանին ուղղված պահանջ՝ մեղավոր ճանաչել մեղադրյալին⁵:

Որոշ քրեադատավարագետների կողմից մեղադրանքը ներկայացվում է որպես քրեական հայց, որը մեղադրական իշխանությունը ներկայացնում է դատարան: Քրեական հայցի առարկան են կազմում՝ հանցագործություն կա-

տարելու մեջ մեղադրյալի մեղավորության մասին պնդումը և դատարանին հասցեագրված պահանջը՝ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ կիրառել քրեական օրենսգիրքը⁶:

Տեսության մեջ առավել տարածված մոտեցում է «մեղադրանք» հասկացության իմաստի ընկալումը նյութական և դատավարական իմաստներով: Նյութաիրավական իմաստով մեղադրանքը կոնկրետ անձին մեղագրվող հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) նկարագրությունն է քրեադատավարական փաստաթղթերում, իսկ դատավարական իմաստով՝ օրենքով իրավասու մարմինների և անձանց՝ հանցագործություն կատարելու մեջ մեղավորին հայտնաբերելուն և նրան դատապարտելուն ուղղված դատավարական գործունեությունը⁷:

Մեր տեսակետը հետևյալն է. նյութաիրավական իմաստով մեղադրանքը կախվածության մեջ է դրված քրեադատավարական իմաստով մեղադրանքից: Իրավասու մարմինների կողմից հանցագործության բացահայտմանն ուղղված գործողություններն են, որ ի վերջո հանգեցնում են դրանց արդյունքում ձեռք բերվածի ամփոփմանը քրեադատավարական փաստաթղթերում՝ հանցավոր արարքի նկարագրման եղանակով: Ինքնին մեղադրանքը քրեադատավարական կատեգորիա է, ուստի եթե դիտարկում ենք այն քրեադատավարական և նյութաիրավական իմաստների տեսանկյուններից, ապա միանշանակորեն

1. **Строгович М.** Курс советского уголовного процесса. Т. 1. М., 1968. էջ 7.
 2. **Мизулина Е.** Уголовный процесс: концепция самоограничения государства. Тарту, 1991. էջ 14-26.
 3. **Жогин Н.** Предварительное следствие/ Н. В. Жогин, Ф. Н. Фаткуллин. – М.: Юрид. лит., 1965, էջ 189.
 4. **Даев В.** К понятию обвинения в советском уголовном процессе// Правоведение. 1970. N 1. էջ 85.
 5. **Полянский Н.** К вопросу о юридической природе обвинения перед судом// Правоведение. 1960. 1, էջ 110.
 6. Александрова И., Круглов И., Кучин А., Смолин А.Г. Уголовно-правовые и уголовно-процессуальные аспекты сделки о признании уголовного иска ; МВД РФ, Нижегородская академия. Н. Новгород, 2007. էջ 24.
 7. **Фаткуллин Ф.** Обвинение и судебный приговор. Казань, 1963. էջ 13-25.

առաջնահերթությունը մենք տալիս ենք քրեադատավարականին: Որպես ասվածի հիմնավորում՝ նշենք, որ կոնկրետ անձին մեղաագրվող արարքը նկարագրելիս մեղադրանքը հիմնվում է քրեական օրենսգրքի նորմերի վրա, քանի որ արարքի իրավաբանական որակումը ձևակերպված է հենց քրեաիրավական նորմերում: Սակայն վերացական ձևով հանցակազմերը դիտարկելիս, առանց կոնկրետ անձի արարքը որակելու նպատակ հետապնդելու, մենք որևէ աղերս չենք ունենում մեղադրանքի հետ, հետևաբար հանցակազմը քրեաիրավական կատեգորիա է, իսկ մեղադրանքը՝ քրեադատավարական:

Մեղադրանքի օրենսդրական բնորոշումները պայմանականորեն կարող ենք բաժանել 3 խմբի՝ ՀՀ քրեական դատավարության բուն օրենսգրքում (այսուհետ՝ քր. դատ. օր. կամ գործող օրենսգիրք), ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) վճիռներում ձևակերպված մեկնաբանություններ: «Մեղադրանք» հասկացության օրենսդրական բովանդակության բացահայտումը գործնական կարևորություն ունի դատավարական մի շարք այլ կառուցակարգերի՝ մասնավորապես մեղադրանքը փոփոխելու և լրացնելու, մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտների պատշաճ կիրառության համար: Բացի այդ, այն սերտորեն կապված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետով երաշխավորված՝ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացված լինելու՝ անձի նվազագույն իրավունքի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 67-րդ հոդվածով, քր. դատ. օր.-ի 19-րդ հոդվածով սահմանված՝ պաշտպանության իրավունքի արդյունավետ ապահովման հետ⁸:

Քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ մեղադրանքը քր. դատ. օր.-ով նախատեսված կարգով ներկայացված

հիմնավորում է՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին: Նշված բնորոշումից բխում է, որ «մեղադրանք» եզրույթը ՀՀ քր. դատ. օր.-ում ընկալվում է նյութաիրավական իմաստով: Նկատենք, որ օրենսդրական բնորոշման մեջ նշվում են «որոշակի անձ», «քրեական օրենքով չթույլատրված արարք» ձևակերպումները, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ «մեղադրանք» եզրույթը չի կապվում բացառապես հանցագործության կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի հետ: Դասական առումով մեղադրանքի հետ ենք առնչվում նաև, օրինակ, բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթում:

Ձևակերպման առումով մոտեցումն այլ է քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ), որի 6-րդ հոդվածի 42-րդ կետի համաձայն՝ մեղադրանքը որոշակի անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մասին վարկած է, որն ունի փաստական և իրավական հիմնավորում: Մեղադրանքի փաստական և իրավական կողմերը միևնույն իրավական հասկացության անբաժանելի տարրերն են, որոնք անպայմանորեն պետք է փոխհամաձայնեցված լինեն և չհակասեն միմյանց. հակառակ պարագայում կառաջանա ներքին անհամապատասխանություն, ինչը կհանգեցնի մեղադրանքի ոչ լրիվության ու անհստակության՝ իր հետ բերելով առաջացած բացթողումները շտկելու անհրաժեշտություն, անձին ստիպելով իրավունքների սահմանափակման հանգամանքը շարունակել կրել վարույթն իրականացնող մարմնի թերացումների պատճառով: Ուստի, Նախագծի որդեգրած մոտեցումը՝ օրենսդրական մակարդակով մեղադրանքի կառուցվածքը փաստականի և իրավականի բաժանելը, կարծում ենք, որ արդարացված է, քանի որ այդ պարագայում առավել ճիշտ կսահմանազատվեն մեղադրանքը փոփոխելու ռեժիմները, մեղադրանքը փոփոխելու իրավասությամբ օժտված յուրաքանչյուր սուբյեկտի կողմից մեղադրանքը փոփոխելու սահմանները. պատահական չէ, որ նման պարագայում որպես մեղադրյալ ներ-

8. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ. - հ. 3. - Եր. 2016. - էջ 218

գրավելու մասին որոշման կայացման իրավա-
կարգավորումները ևս Նախագծի հեղինակնե-
րը փորձել են համապատասխանեցնել
մեղադրանքի՝ առաջարկվող հասկացությանը:

Նախագծի 6-րդ հոդվածի 41-րդ կետը
դատախազի կողմից անձի՝ ենթադրյալ հանցա-
վոր արարքը նկարագրող և դրա իրավական
գնահատականը պարունակող որոշում կայաց-
նելը կամ ենթադրյալ տուժողի կողմից դատա-
րան քրեական հայց ներկայացնելը բնորոշել է
որպես քրեական հետապնդման հարուցում:
Նախագծի 189-րդ հոդվածով սահմանվում է,
որ անձի նկատմամբ հանրային քրեական
հետապնդումը հարուցվում է հսկող դատա-
խազի որոշմամբ՝ նրա կողմից հանցանքի
կատարումը վկայող փաստերի հիման վրա:
Վերոնշյալ փաստերի առկայության դեպքում
քննիչն իրավասու է հսկող դատախազին ներ-
կայացնել անձի նկատմամբ քրեական հետա-
պնդում հարուցելու մասին միջնորդություն՝
դրան կցելով վարույթի նյութերը և մատնանշելով
այդ փաստերը հաստատող ապացույցները:

Քրեական հետապնդում հարուցելու մա-
սին որոշման մեջ նշվում են մեղադրանքի փաս-
տական հիմքը և արարքի իրավական գնահա-
տականը: Դատախազն իրավունք չունի
քննիչին հանձնարարել ներկայացնելու անձի
նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու
մասին որոշակի բովանդակությամբ միջնորդու-
թյուն կամ կազմելու այդպիսի որոշման նախա-
գիծ:

Ըստ էության՝ Նախագծի 189-րդ հոդվա-
ծով սահմանված հանրային քրեական հետա-
պնդում հարուցելու մասին որոշումը գործող
օրենսգրքի՝ որպես մեղադրյալ ներգրավելու
մասին որոշմամբ ուրվագծվող մեղադրանքի
բովանդակությունն արտահայտող դատավա-
րական փաստաթղթի նոր դրսևորումն է:

Հատկանշական է, որ դեռևս 2007 թվա-
կանին Վճռաբեկ դատարանը Ա. Սերոբյանի
գործով⁹ արտահայտել էր հետևյալ դիրքորո-
շումը. «Եթե Հայաստանի Հանրապետության
քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ
հոդվածում օգտագործված «մեղադրանք» եզ-
րույթը հասկացվի սուսկ «քրեաիրավական
որակում» իմաստով և այն իր մեջ չներառի

արարքի քրեաիրավական որակման հիմքում
ընկած փաստական հանգամանքները, ապա
կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության
իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ
կլինի վերացական ու պատրանքային, քանի որ
առանց փաստական հիմքի քրեաիրավական
որակումից պաշտպանվելու իրավունքն առար-
կայազուրկ է»: Ուստի, մեղադրանքի փաստա-
կան հիմքի և իրավական գնահատականի
առանձնահատուկ նախատեսումը քրեական
հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ,
կարծում ենք, արդարացված է:

Նկատենք, որ քրեական հետապնդում
հարուցելու մասին որոշման կայացումը Նախա-
գծով վերածվել է դատախազի մենաշնորհային
իրավունքի՝ ի հաշիվ գործող օրենսգրքով առկա
քննիչի՝ համապատասխան իրավունքի սահմա-
նափակման: Գործող իրավակարգավորումնե-
րով դատախազն ստուգում է հետաքննության
և նախաքննության մարմինների գործողու-
թյունների և դրանց հիման վրա կայացվող դա-
տավարական փաստաթղթերի՝ այդ թվում
որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշ-
ման օրինականությունը: Գտնում ենք, որ
դրանց միայն օրինականությունը ստուգելը բա-
վարար չէ: Եթե հարցը դիտարկենք անձի իրա-
վունքների սահմանափակման տեսանկյունից,
ապա ակնհայտ է դառնում, որ անձի իրա-
վունքները սահմանափակվում են կամ դրանց
առավել սահմանափակման հնարավորու-
թյունները մեծանում են հենց մեղադրյալ
ներգրավելու մասին որոշման կայացման պա-
հից: Օրինակ՝ ինչպես գործող օրենսգրքով,
այնպես էլ Նախագծով կալանքի՝ որպես խա-
փանման միջոցի կիրառման իրավաչափության
պայման է հանդիսանում անձի՝ մեղադրյալի
կարգավիճակ ձեռք բերած լինելը: Հետևապես,
հարցը դիտարկելով այդ հարթությունում՝
գտնում ենք, որ դատախազի՝ որպես մեղա-
դրյալ ներգրավելու մասին որոշման՝ միայն
օրինականության ստուգումը բավարար չէ և
անհրաժեշտ է այս դեպքում կիրառել ստուգման՝
առավել բարձր չափանիշներ, որոնք պետք է
դրսևորվեն գործով առկա փաստերի անմիջա-
կան հետազոտմամբ և գնահատմամբ: Մեղա-
դրանքի պաշտպանության գործառույթը Սահ-

9. Արթուր Սերոբյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշում:

մանադրությունը վերապահել է դատախազին. ուստի, դատախազը պետք է պաշտպանի այն, ինչ ինքն է գնահատել և առաջ քաշել, այլ ոչ թե այն, ինչը ստուգել, իսկ որոշ դեպքերում ընդամենը թերթել, «վրայով անցել» և հաստատել է դրա օրինականությունը:

Անհրաժեշտ ենք համարում նաև Նախագծով քրեական հետապնդում հարուցելու մասին քննիչի միջնորդության ստացման պահից դրա բավարարման և համապատասխան դատավարական ակտի կայացման կամ միջնորդության մերժման մասին որոշման կայացման համար սահմանված 12-ժամյա պահանջը փոփոխել և դարձնել 36 ժամ՝ հիմնավորված, պատճառաբանված, պատշաճ և որակով դատավարական ակտ կայացնելու նկատառումով: Գտնում ենք, որ անձի իրավունքների վրա էականորեն ազդող՝ նման կարևորության փաստաթղթի կազմումը 12 ժամում կատարելու պահանջը կարող է հանգեցնել բազմաթիվ ծանր հետևանքների՝ մասնավորապես որոշ դեպքերում միջնորդության անհարկի բավարարման և հետևապես քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման կայացման կամ, թեկուզև, արդարացիորեն, սակայն թույլ պատճառաբանվածությամբ և հիմնավորվածությամբ միջնորդության բավարարման ու համապատասխան որոշման կայացման:

Նախագծի 190-րդ հոդվածը սահմանում է, որ քննիչը մեղադրյալին մեղադրանք է ներկայացնում քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը ստանալուց հետո 18 ժամվա ընթացքում: Այնուհետև քննիչը նրան է հանձնում քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը, պարզաբանում մեղադրանքի փաստական հիմքը և իրավական գնահատականը, պարզաբանում իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև մեղադրյալին հանձնում է դրանց ցանկը: Վերոնշյալ գործողությունների կատարումը հաստատվում է քննիչի կողմից կազմված արձանագրությամբ, որը ստորագրում են քննիչը, մեղադրյալը և մասնակցող այլ անձինք:

Ինչպես նկատում ենք՝ այս պարագայում ևս Նախագծում կա փոփոխություն առ այն, որ մեղադրանք առաջադրելու ինստիտուտը վերանվանվել է մեղադրանք ներկայացնելու, ինչն ավելի լավ է արտահայտում այդ քրեադատավարական ինստիտուտի էությունը: Կարծում ենք, որ առաջին հայացքից ձևական թվացող այս փոփոխությունն իրականում առավել քան բովանդակային բնույթ է կրում: «Առաջադրել» նշանակում է հայտնել, հայտարարել որևէ բանի մասին՝ պահանջելով բավարարում՝ բացատրություն: «Ներկայացնել» նշանակում է ցույց տալ որևէ բան հաստատող փաստաթուղթ և այլն¹⁰: Հաշվի առնելով բայերի իմաստային երանգները և մեղադրյալի՝ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը՝ կարծում ենք, որ «ներկայացնել» ձևակերպման կիրառումն օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Ինչ վերաբերում է հոդվածի բուն բովանդակության փոփոխությանը, ապա նշենք, որ այս պարագայում ևս հստակեցվել է մեղադրանքի էությունը՝ դրա բաժանումը փաստական հիմքի և իրավական գնահատականի, ինչը պարզաբանվում է մեղադրյալին:

Մեղադրանքին և դրա արտահայտման հիմնական եղանակներին՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմանը և մեղադրական եզրակացությանն անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներում: Ստորև անդրադառնանք դրանցից մի քանիսին՝ մեջբերելով նաև որոշումների հետ սերտ աղերս ունեցող որոշ իրավակարգավորումներ:

Ա.Պապյանի գործով¹² կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ քր. դատ. օր.-ի 202-րդ (որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը և կարգը) և 270-րդ (մեղադրական եզրակացությունը) հոդվածների վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը երկու դեպքում էլ օգտագործել է «մեղադրանքի ձևակերպում» եզրույթը, որի կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության

10. Աղայան Է.: Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976թ., էջեր 103, 1065.

11. Գործող օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած «մեղադրանքի էություն» ձևակերպումն ընդհանրական է և ոչ լիարժեք, ուստի չենք կարող չհամաձայնել Նախագծի հեղինակների հետ՝ այն որպես մեղադրանքի «փաստական հիմք և իրավական գնահատական» ներկայացնելու հարցում:

12. Արկադի Պատվականի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշում, 17-19 կետեր:

համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար՝ պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն:

Վճռաբեկ դատարանի կողմից մեղադրանքի ձևակերպման կարևորումը պայմանավորվել է այն հանգամանքով, որ համապատասխան դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն) դրա առկայությունը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման ենթարկվող անձին արդյունավետ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը:

Տեսության մեջ մեղադրանքի կառուցվածքի առումով առկա է երկու հիմնական տեսակետ: Առաջին տեսակետի կողմնակիցները մեղադրանքը դիտարկում են երկտարր կառուցվածքով: Դրանք են՝ մեղադրանքի ձևակերպումը գործով հաստատված՝ հանրության համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին, և մեղադրանքի իրավաբանական որակումը՝

քրեական օրենքի այն կոնկրետ նորմը, որի հատկանիշները համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերին¹³: Երկրորդ խումբ հեղինակներն առանձնացնում են կատարված հանցագործության փաստական հանգամանքները, մեղադրանքի իրավական ձևակերպումը, որն իրենից ներկայացնում է կոնկրետ հանցագործության հատկանիշները և արարքի իրավաբանական որակումը¹⁴: Այսինքն՝ հեղինակների այս խումբը մեղադրանքը դիտարկում է եռատարր կառուցվածքով:

Թե՛ Եվրոպական դատարանի, թե՛ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներում զարգացվել է մեղադրանքի երկտարր կառուցվածքի գաղափարը: Այսպես, անձի՝ իրեն առաջադրված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու իրավունքի մեկնաբանության համատեքստում Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ անձը պետք է պաշտոնապես տեղեկացվի իրեն առաջադրված մեղադրանքի փաստական հիմքի՝ իրեն մեղսագրվող արարքի փաստական հանգամանքների (մեղադրանքի հիմք) և մեղադրանքի իրավական հիմքի՝ իրեն մեղսագրվող արարքին տրված իրավական գնահատականի (մեղադրանքի բնույթ) մասին¹⁵: Ընդ որում, Եվրոպական դատարանը նշված իրավունքը դիտարկում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետով երաշխավորված՝ անձի՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություն ունենալու իրավունքի հետ փոխադարձ կապի մեջ¹⁶:

Ինչպես արդեն նշել ենք, մեղադրանքի կառուցվածքի վերաբերյալ¹⁷ նույնանման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Գ. Ճադարյանի և այլոց գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը նշել է. «Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար վտանգա-

13. Добровольская Т. Изменение обвинения в судебных стадиях советского уголовного процесса. М., 1977, էջեր 11-16.
 14. Фаткуллин Ф. Обвинение и изменение его в суде. Казань, 1963, էջ 35-43.
 15. Penev v. Bulgaria գործով Եվրոպական դատարանի 2010 թվականի հունվարի 7-ի վճիռ, գանգատ թիվ 20494/04, 33-րդ և 42-րդ կետեր:
 16. Pelissier and Sassi v. France գործով Եվրոպական դատարանի Մեծ պալատի 1999 թվականի մարտի 25-ի վճիռ, գանգատ թիվ 25444/94, կետ 54

վոր և հակաիրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշներին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրանքի ձևակերպմանը բովանդակային առումով ներկայացվող պահանջների բացահայտման հարցը պետք է քննարկել արդար դատաքննության՝ հիմնարար իրավունքի համատեքստում, և «...համապատասխան փաստաթղթերում մեղադրանքի ամրագրումը հանդիսանում է այն դատավարական միջոցը, որով ապահովվում է քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքը տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի իրավական և փաստական հիմքերի մասին (...): (...) [Մեղադրանքի ձևակերպման մեջ], բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ (...):»:

Տեսական գրականության մեջ առանձնացվում են նաև «պարզ» և «բարդ» մեղադրանքները: Այս դասակարգման հիմքում ընկած են մեղադրանքների ձևակերպման կառուցվածքների միջև օբյեկտիվորեն գոյու-

թյուն ունեցող տարբերությունները և դրանց հարաբերակցությունը քրեական օրենքի մեկ կամ մի քանի նորմերի հետ, մեղադրանքում ներառված հանցագործությունների քանակը, ինչպես նաև այն հանգամանքը, թե արարքը մեղսագրվում է մեկ, թե մի քանի անձանց:

Պարզ մեղադրանքն անձին մեղադրելն է մեկ պարզ հանցագործության կատարման մեջ: Այս դեպքում մեղադրյալին վերագրվում է մեկ պարզ հանցագործության կատարում, որը որակվում է քրեական օրենսգրքի մեկ նորմով և չի կարող բաժանվել առանձին հանցագործությունների¹⁹:

Բարդ մեղադրանքն առկա է, երբ անձին առաջադրվել է այնպիսի ձևակերպմամբ մեղադրանք,

ա) որը թեև համապատասխանում է քրեաիրավական մեկ նորմի հատկանիշներին, սակայն բաղկացած է մի քանի կետերից. օրինակ՝ մի քանի հանցավոր արարքների կատարելու մեջ անձին առաջադրված մեղադրանքը,

բ) որի ձևակերպումը բաժանված չէ կետերի, քանզի այն ներառում է քրեական օրենքի տարբեր նորմերով որակվող մի քանի հանցավոր արարքների կատարում: Դա կարող է լինել հանցագործությունների՝ իդեալական համակցության դեպքում²⁰:

«Բարդ» մեղադրանքի վերաբերյալ Ա. Մ. և Ա. Բադայանների գործով²¹ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի հանցակիցներից յուրաքանչյուրին մեղսագրվող գործողությունների (անգործության) մանրակրկիտ նկարագրությունը՝ այդ թվում հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները, որի դեպքում միայն հնարավոր կլինի ապահովել պաշտպանության իրավունքի և մրցակցային դատավարության իրականացումը: Բացի այդ, արարքը մի խումբ

17. Արդեն նշել ենք, որ մեղադրանքի կառուցվածքի վերաբերյալ Նախագծի մոտեցումը նույնպես երկտարր մոդելն է, ուստի կրկնությունից խուսափելու համար այստեղ չենք անդրադառնա այդ հարցին: Տես 2-րդ էջը:

18. Գևորգ Ճաղարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշում, 15-րդ, 16-րդ և 21-րդ կետեր:

19. **Ровнейко В.** Изменение обвинения в суде первой инстанции по Российскому уголовно-процессуальному законодательству. Дис... канд. юрид. наук. Ижевск, 1996. էջ 34-35:

20. **Добровольская Т.** Изменение обвинения в судебных стадиях советского уголовного процесса. М., 1977. էջ 22:

21. Արթուր, Մացակ և Արմեն Բադայանների գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0227/01/12 որոշում, 18-19 կետեր:

անձանց կողմից կատարված լինելու դեպքում մեղադրանք առաջադրելիս համապատասխան դատավարական փաստաթղթերում հանցակիցներից յուրաքանչյուրի հանցավոր գործողությունների նկարագրությունն անհրաժեշտ նախապայման է՝ անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան նրանց քրեական պատասխանատվության հարցը լուծելու համար:

Ուշագրավ է նաև Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքը Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվող՝ «քրեական մեղադրանք» հասկացության կապակցությամբ: Մասնավորապես, Դևեերն ընդդեմ Բելգիայի գործով վճռում²² Եվրոպական դատարանը նշել է, որ «քրեական մեղադրանք» եզրույթը պետք է հասկանալ ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային իմաստով: «Մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես իրավասու մարմնի կողմից անձին պաշտոնապես արված տեղեկացում այն մասին, որ առկա է նրա կողմից քրեորեն հետապնդելի արարք կատարելու վերաբերյալ ենթադրություն:

Հետագայում Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի գործով վճռում²³ Եվրոպական դատարանը զարգացնելով իր դիրքորոշումը, ընդգծել է, որ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետը սահմանում է, որ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին: Ի

պաշտպանություն այս դրույթի կենսագործմանը՝ Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի («ա») ենթակետի դրույթները թելադրում են շահագրգռված անձին «մեղադրանքի» մասին տեղեկացնելու հարցում ցուցաբերել ծայրահեղ զգուշավոր մոտեցում: Մեղադրական եզրակացությունը վճռորոշ դեր է խաղում քրեական հետապնդման մեջ. դրա հանձնման պահից մեղադրվող անձը համարվում է իրեն ներկայացված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին պաշտոնապես և գրավոր ձևով տեղեկացված»²⁴:

Ի զարգացումն վերոնշյալ դիրքորոշման՝ Եվրոպական դատարանը նշել է. «մեղադրյալին փոխանցման ենթակա անհրաժեշտ տեղեկատվությունը վերաբերում է հանցանքի «բնույթին և հիմքին»: «Բնույթ» նշանակում է այն հանցանքը, որի համար նա մեղադրվում է, իսկ «հիմք» բառը ցույց է տալիս այն գործողությունները, որոնք վերջինս ենթադրաբար կատարել է: Հանցագործության մանրամասները չափազանց կարևոր են, քանի որ դրանց մատուցման պահից է կասկածյալը պաշտոնապես տեղեկացվում իր դեմ ներկայացված մեղադրանքների փաստական և իրավական հիմքերի մասին»²⁵:

«Մեղադրանք» հասկացության վերաբերյալ պոզիտիվ իրավունքի և նախադեպային իրավունքի համակարգային դիտարկման և համադրման արդյունքում կարելի է նշել, որ նեղ իմաստով մեղադրանքն արտացոլվում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման մեջ կամ մեղադրական դատավճռում: Լայն իմաստով մեղադրանքն արտացոլվում է ցանկացած դատավարական ակտում, որտեղ տրվում են այնպիսի ձևակերպումներ կամ կատարվում են այնպիսի գործողություններ, որոնցից հետևում է, որ կոնկրետ անձը կատարել է քրեորեն պատժելի

22. Դևեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium) գործով Եվրոպական դատարանի 1980 թվականի փետրվարի 27-ի վճիռ, գանգատ թիվ 6903/75, կետ 44:
 23. Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia) գործով Եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 18-ի վճիռ, գանգատ թիվ 19611/04, կետ 62:
 24. Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի (Kamasinski v. Austria) գործով Եվրոպական դատարանի 1989 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռ, գանգատ թիվ 9783/82, կետ 79:

արարք (օրինակ՝ քրեական գործ հարուցելու մասին որոշում, անձի նկատմամբ ձերբակալում կամ խափանման միջոց կիրառելու մասին փաստաթղթերում և այլն)²⁶:

Այսպիսով, ընդհանրացնելով մեղադրանքի ձևակերպման շուրջ առկա օրենսդրական սահմանումները, Նախագծի մոտեցումը և քրեադատավարագետների կարծիքները՝ առաջարկում ենք դրա սահմանման հետևյալ տարբերակը. մեղադրանքը քր. դատ. օր.-ով նախատեսված կարգով իրավասու մարմնի կողմից որոշակի անձի վերաբերյալ ունեցած և պատշաճ

գնահատված տեղեկատվության հիման վրա առաջադրված, պատճառաբանված և հիմնավորված վարկածն է այդ անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու մասին, որի էությունն են կազմում դրա հիմքը՝ մեղսագրվող արարքի փաստական հանգամանքները, և բնույթը՝ անձին մեղսագրվող արարքին տրված իրավական գնահատականը:



9. Տե՛ս հետևյալ էլեկտրոնային հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18299> (20.12.2019 թ.):

ԲԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ՈՐՊԵՍ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԴՍՄԱՆԱՆ**

Արդի սահմանադրաիրավական զարգացումների պայմաններում պետական իշխանության համակարգում տեղի ունեցող գործընթացների վերլուծությունը վկայում է, որ իշխանության ցանկացած թևի պարագայում, ի թիվս այլ հատկանիշների և բնութագրիչների, առաջնային պլան է մղվում կայուն և արդյունավետ համակարգի կազմավորումը, որտեղ կարևոր դերակատարում ունեն մի շարք գործոններ: Բնական է, որ պետական իշխանության համակարգում գործադիր իշխանությունը, ի տարբերություն օրենսդիր և դատական իշխանությունների, իր ինստիտուցիոնալ և գործառնական առանձնահատկություններով ունակ է առավել արագ և վճռականորեն արձագանքել և դիմակայել առկա մարտահրավերներին¹:

Ժամանակին համընթաց ձևավորվող պետական իշխանության համակարգում անհրաժեշտ և բավարար լիազորություններով օժտված ուժեղ գործադիր իշխանություն ունենալու շեշտադրումն առաջնային պլան է մղում գործադիր իշխանության մարմինների կայուն համակարգի կազմավորման և նրա գործունեության շարունակականության ապահովման հրամայականը սահմանադրի կողմից համարժեք սահմանադրաիրավական հիմքերի ամրագրման պայմաններում, ինչը, ըստ էության, իր առաջնային ուղղակի ազդեցությունն է թողնում համակարգի գործունեության արդյունավետության վրա:

Այս տեսանկյունից կարևոր նշանակու-

թյուն ունի գործադիր իշխանության մարմինների համակարգի կազմավորման սահմանադրաիրավական հիմքերն ամրագրող իրավականոնակարգումների ուսումնասիրությունը և վերլուծությունը, ինչը հնարավորություն կտա բացահայտել դրանցում առկա խնդիրները և առաջադրել համարժեք լուծումներ դրանց հաղթահարման նպատակով:

Ներպետական սահմանադրաիրավական զարգացումների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ գործադիր իշխանության մարմինների համակարգի կազմավորման սահմանադրաիրավական հիմքերը գրեթե մշտապես ենթարկվել են փոփոխությունների, որպիսի մոտեցումն ուղղակիորեն իր բացասական ազդեցությունն է թողել համակարգի կայունության և արդյունավետության վրա: Մասնավորապես, 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության ընդունմամբ ամրագրվեց, որ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի կողմից: Հիմք ընդունելով հիշյալ սահմանադրական կանոնակարգումը՝ նշված հարցերն իրենց կարգավորումը ստացան Հանրապետության Նախագահի՝ 1995 թվականի հուլիսի 25-ի՝ «ՀՀ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-456 հրամանագրով, ինչպես նաև 2002 թվականի մարտի 16-ի՝ «ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանելու մա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

1. <https://www.yalelawjournal.org/essay/executive-branch-usurpation-of-power-corporations-and-capital-markets>.

սին» թիվ ՆՀ-1063 հրամանագրով:

2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրվեց, որ կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկությամբ սահմանվում է օրենքով: Այսինքն՝ կատարված փոփոխությունների արդյունքում կառավարությունն իր կառուցվածքի վերաբերյալ առաջարկություն էր ներկայացնում Ազգային ժողով, որի սահմանումը վերջինիս բացառիկ իրավասությունն է: Ազգային ժողովն օրենքով ամրագրելով կառավարության կառուցվածքը՝ դրանով իսկ սահմանում էր նաև կառավարության կազմը: Ուստի, կառավարություն կազմավորելիս Հանրապետության Նախագահն ու վարչապետը պարտավոր են գործել օրենքով սահմանված կառավարության կառուցվածքի շրջանակներում²:

Ակնհայտ է, որ 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով էապես սահմանափակվեց պետության գլխի գործառնական դերակատարումն այս հարցում: Դրա արդյունքում 2008 թվականի հունիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքը:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 147-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախարարությունների ցանկը և կառավարության գործունեության կարգը կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով: 2018 թվականի մարտի 23-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածի համաձայն՝ այն սահմանում է կառավարության կազմը, կառուցվածքը և գործունեության կարգը՝ Սահմանադրության 147-րդ հոդվածին համապատասխան, ինչպես նաև Կառավարության անդամների գործունեության երաշխիքները:

Գտնում ենք, որ միանշանակ ողջունելի է սահմանադրի մոտեցումն այս հարցում, քանի որ դրա արդյունքում բացառապես օրենսդրական կարգավորման դաշտ են տեղափոխվել գործադիր իշխանության մարմինների համակարգի կազմավորման և գործունեության կազմակերպման հարցերը: Նմանատիպ իրավակարգավորման մոդելը, կարծում ենք, հնարավորություն կտա որոշակի առումով գործադիր իշխանության մարմինների համակարգը զերծ պահել տարաբնույթ «քաղաքական» և «ոչ քաղաքական» գործոնների ազդեցության ներքո կատարվող անհիմն, անհարկի և հապճեպ փոփոխություններից, ինչը, անխոս, իր դրական ազդեցությունը կունենա նաև համակարգի կայունության և գործունեության արդյունավետության նկատմամբ: Այս առումով բավական է միայն հիշատակել, որ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմինների համակարգում մինչ օրս կատարված փոփոխությունների արդյունքում մի շարք նախարարություններ շատ հաճախ առանց որևէ պատշաճ հիմնավորման և գործառության հստակ վերլուծության միավորվեցին կամ տարանջատվեցին, իսկ որոշ նախարարություններ վերակազմավորվեցին կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների³:

Հարկ է նկատել, որ փոփոխությունների՝ նման տրամաբանությունից գործադիր իշխանության մարմինների համակարգը զերծ չի մնացել նաև առկա օրենսդրական կարգավորման պայմաններում: Մասնավորապես, 2008 թվականի հունիսի 17-ին «ՀՀ կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքի ընդունումից ի վեր ՀՀ կառավարության կառուցվածքը փոփոխության է ենթարկվել 5 անգամ⁴, իսկ 2018 թվականի մարտի 23-ին «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ՀՀ կառավարության

2. Տես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.- Եր., «Իրավունք», 2010.- էջ 848:

3. Օրինակ՝ Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 24-ի թիվ ՆՀ-196-Ա հրամանագրով 2014 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ՆՀ-602-Ա հրամանագրով ստեղծված ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը վերակազմակերպվեց ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության: 2016 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՆՀ-1091-Ն հրամանագրով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի:

4. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=44544>.

կազմը և կառուցվածքը ենթարկվել են արմատական փոփոխությունների 2019 թվականի մայիսի 8-ին ընդունված օրենքով, ըստ որի՝ պետական կառավարման առանձին բնագավառների և դրանց կառավարման գործառույթների միավորման կամ տարանջատման արդյունքում ՀՀ կառավարության կառուցվածքում նախատեսվեցին 12 նախարարություններ⁵:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներ են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների՝ առնվազն երեք հինգերորդով: Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքները, Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Հիշյալ սահմանադրական նորմերի՝ համադրված դիտարկումը թույլ է տալիս արձանագրել, որ 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ ևս գործադիր իշխանության սահմանադրաիրավական կարգավիճակի օրենսդրական կարգավորման հարցում նախատեսվեց տարբերակված մոտեցում, քանի որ դրա մարմինների համակարգի և գործունեության կազմակերպման կանոնակարգումը, պետական իշխանության մյուս թևերի համեմատությամբ, տեղափոխվել է հասարակ օրենսդրական կարգավորման դաշտ և սահմանվում է ոչ թե սահմանադրական, այլ հասարակ օրենքով՝ ընդունվելով քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

Մեր կարծիքով՝ այս մոտեցումը չի բխում

իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքից, քանի որ դրանով խախտվում է պետական իշխանության թևերի իրավահավասարությունը, որպիսի պայմաններում դրանցից երկուսի կազմավորման և գործունեությանն առնչվող հարցերը կարգավորված են Սահմանադրությամբ և սահմանադրական օրենքով, իսկ գործադիր իշխանության պարագայում ամրագրվել է հասարակ օրենսդրական կարգավորման մոդել, ինչն ուղղակիորեն իր բացասական ազդեցությունն է թողնում համակարգի կայունության վրա՝ հնարավոր դարձնելով խորհրդարանի ձայների՝ համեմատաբար ցածր համամասնությամբ դրա փոփոխումը: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք գործադիր իշխանության սահմանադրաիրավական կարգավիճակը ևս ամրագրել սահմանադրական օրենքով, որպիսի պարագայում խորհրդարանը զերծ կմնա այս հարցում հապճեպ լուծումներից և հնարավորություն կստանա հարցերն առավել խորը վերլուծության առարկա դարձնելով՝ ընդունել հիմնավորված և պատճառաբանված օրենսդրական լուծումներ՝ չխաթարելով գործադիր իշխանության մարմինների համակարգի կայունությունը և գործունեության արդյունավետությունը:

Դրա հետ մեկտեղ հարկ է նկատել, որ 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը զերծ չէ նաև այլ խնդրահարույց լուծումներից: Մասնավորապես, ՀՀ սահմանադրության 147-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը Կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով: Միաժամանակ 159-րդ հոդվածը սահմանում է, որ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով:

Տվյալ դեպքում վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունը վկայում է, որ գործադիր իշխանության մարմինների համակարգն առկա իրավական կարգավորմամբ սահման-

5. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130615>.

վում է երկու առանձին նորմատիվ-իրավական ակտերով, մասնավորապես՝ «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքներով, որոնց ընդունման հիմքում ընկած են ՀՀ Սահմանադրության 147-րդ և 159-րդ հոդվածների պահանջները: Ընդ որում, հիշյալ իրավական ակտերի հիմնական տարբերությունն ուսումնասիրության առարկա հարցի տեսանկյունից կայանում է նրանում, որ մի իրավական ակտով սահմանված է նախարարությունների ցանկը, իսկ մյուսով՝ պետական կառավարման համակարգի մարմինները՝ այդ թվում նախարարությունները: Գտնում ենք, որ նմանատիպ «համալիր» իրավակարգավորումը խնդրահարույց է իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից, քանի որ եթե մեկ համալիր իրավական ակտով կանոնակարգվում է պետական կառավարման համակարգն ամբողջությամբ, ապա որևէ այլ իրավական ակտով չեն կարող սահմանվել կամ արհեստականորեն կանոնակարգվել դրա բաղկացուցիչ տարրերը կամ դրանց ներկայացվող պահանջները: Այսինքն՝ այս պարագայում ստացվում է, որ միևնույն հարցը կանոնակարգվում է 2 տարբեր իրավական ակտերով: Ընդ որում, ուշագրավ է, որ առկա կարգավորմամբ գործադիր իշխանության համակարգն արհեստականորեն նույնացվել է պետական կառավարման համակարգի հետ այն դեպքում, երբ իրենց սահմանադրաիրավական բովանդակությամբ այդ երկու հասկացությունները միմյանցից էապես տարբեր են:

Այսպես՝ պետական կառավարում եզրույթը պետք է դիտարկել երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով դիտարկելիս այն իրենից ներկայացնում է պետության կանոնակարգող ներգործություն՝ ուղղված հասարակական հարաբերությունների նկատմամբ դրանց՝ որոշակի իրավիճակի բերելուն: Այս իմաստով դիտարկելիս պետական կառավարումն իրականացվում է ողջ պետական ապարատի կողմից և հանդիսանում է ողջ պետական իշխանության գործառույթը և նպատակը: Սոցիալական կառավարման այլ տարատեսակներից այն տարբերվում է իր հանրային իշխանական և իրավական բնույթով: Պետական կառավարումն իրականացվում է վարքագծի համապարտադիր կանոնների՝ իրավական նորմերի սահմանման

և նրանց կատարման ապահովման միջոցով՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով պետական հարկադրանքի միջոցներ: Ընդ որում, պետական կառավարման բաղկացուցիչ մաս հանդիսացող գործունեության բոլոր տեսակները կարգավորվում են իրավական նորմերով և պետական կառավարման իրականացման ժամանակ բոլոր պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք գործում են այն ձևերով և կարգով, որոնք սահմանված են Սահմանադրությամբ, օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով նախատեսված իրենց իրավասությամբ:

Նեղ իմաստով դիտարկելիս պետական կառավարումն իրենից ներկայացնում է գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացվող, սոցիալական հարաբերությունների՝ որոշակի օբյեկտների և բնագավառների՝ ինչպես, օրինակ, պետական սեփականության, կրթության, առողջապահության, պաշտպանության, սոցիալական ապահովության՝ ամենօրյա անմիջական կառավարմանն ուղղված գործադիր-կարգադրիչ գործունեություն: Պետական կառավարումը կրում է խիստ ենթաօրենսդրական բնույթ, այսինքն՝ իրականացվում է օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի պահանջների: Պետական կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասությունը վերապահվում է օրենսդիր և դատական իշխանության մարմիններին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարելի է եզրակացնել, որ գործադիր իշխանությունը նույնական չէ պետական կառավարման հետ, քանի որ վերջինս հանդես է գալիս որպես պետական-իշխանական գործունեության որոշակի տարատեսակ, որի շրջանակներում գործնականում իրականացվում է գործադիր իշխանությունը: Գործադիր իշխանությունը, ըստ էության, առավելապես քաղաքական-իրավական կատեգորիա է, իսկ պետական կառավարումը՝ կազմակերպական-իրավական: Այն իր գործառույթային նշանակությամբ, ըստ էության, կազմում է պետական կառավարչական գործունեության բովանդակությունը:

Այսինքն՝ պետական կառավարումն իր գործառնական նշանակությամբ ոչ այլ ինչ է, եթե ոչ պետական-իշխանական գործունեության տարատեսակ, որի շրջանակներում իրագործվում է գործադիր իշխանությունը: Չնայած վերոնշյալ հասկացությունների նույնացման

վերաբերյալ առկա մոտեցումներին՝ գտնում ենք, որ, այնուամենայնիվ, հիշյալ հասկացությունները չեն կարող փոխարինել միմյանց: Դա, թերևս, պայմանավորված է այն հանգամանքով, որ գործադիր իշխանության խնդիրները գործնականում իրականացվում են պետական գործունեության այնպիսի տարատեսակի շրջանակներում, ինչպիսին պետական կառավարումն է:

Ուստի, գտնում ենք, որ ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ օրենսդրության եզրութաբանության միասնականության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է հիշյալ հասկացությունները փոխարինել միասնական՝ «գործադիր իշխանության մարմիններ» եզրույթով, ինչը թույլ կտա խուսափել սահմանադրական և օրենսդրական նորմերի տարաբնույթ մեկնաբանություններից:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ սահմանադրության 147-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանափակվել միայն կառավարության գործունեության կարգի կանոնակարգման՝ սահմանադրաիրավական հիմքերի սահմանամբ, իսկ 159-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գործադիր իշխանության մարմինների համակարգն են կազմում նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են սահմանադրական օրենքով»:

Ինչպես նշվեց վերոշարադրյալում, 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 159-րդ հոդվածով սպառիչ թվարկվեցին այն մարմինները, որոնք պետք է ընդգրկվեին գործադիր իշխանության մարմինների համակարգում: Ի մասնավորի՝ 2018 թվականից դրանք են նախարարությունները, ինչպես նաև կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմինները:

Միաժամանակ, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը թույլ տվեց արձանագրել, որ առկա իրավական կարգավորմամբ հիշյալ խումբ մարմինների պարագայում բավարար չափով հստակեցված չէ դրանց միջև գործառնական տարանջատումը և չեն բացահայտված համակարգի կառուցման հիմնական սկզբունքները: Չնայած այն բանին, որ նրանք, ըստ էության, կոչված են իրականացնելու միև-

նույն պետաիշխանական գործառույթը, սակայն պարզ չէ, թե ինչ իրավական և գործառնական սահմանագիծ է դրված այդ մարմինների տարանջատման հիմքում: Ինչ մոտեցում է դրվել կառավարվող բնագավառների տարբերամասն հիմքում: Ինչու՞ որոշակի բնագավառների պետական քաղաքականությունը պետք է մշակվի և իրականացվի նախարարության կողմից, իսկ որոշ բնագավառների պետական քաղաքականությունը միայն պետք է իրականացվի կառավարությանը ենթակա մարմնի կողմից, իսկ առանձին դեպքերում դրանք պետք է աջակցեն դրա իրականացմանը: Բացահայտված չէ նաև տարբեր պետական մարմինների միջև ներհամակարգային գործառնական փոխհարաբերությունների բովանդակությունը:

Ելնելով վերոհիշյալ սահմանադրաիրավական կարգավորումների բովանդակային առանձնահատկություններից և հաշվի առնելով գործադիր իշխանության մարմինների համակարգում ինստիտուցիոնալ և գործառնական հստակ տարանջատման իրականացման անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք այդ խումբ պետական մարմիններից յուրաքանչյուրի համար սահմանադրական օրենքի մակարդակով ամրագրել հետևյալ իրավական կարգավիճակը.

Նախարարություն - գործադիր իշխանության մարմին, որը մշակում և իրականացնում է կառավարության քաղաքականությունը հասարակական կյանքի տարբեր բնագավառներում՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերով կանոնակարգելով դրանցում առաջացող կառավարչական հարաբերությունները:

Կառավարությանը ենթակա պետական մարմին - գործադիր իշխանության մարմին, որը կոչված է հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ապահովել պետական ծառայությունների մատուցումը, ինչպես նաև իրականացնել իրավակիրառական բնույթ ունեցող այլ պետական գործառույթներ:

Վարչապետին ենթակա պետական մարմին - հասարակական կյանքի տարբեր բնագավառներում հսկողական կամ վերահսկողական գործառույթներով օժտված գործադիր իշխանության մարմին, որն անմիջականորեն ենթակա և հաշվետու է կառավարության ղեկավարին:

Նախարարություններին ենթակա պետական մարմին - գործադիր իշխանության մարմին, որը գործում է նախարարության համակարգում, իսկ նրա գործունեության նպատակները և խնդիրները, ինչպես նաև գործառույթներն ուղղակիորեն բխում են նախարարության կանոնադրական խնդիրներից և կոչված են դրանց գործադրմանը:



ԼԻԼԻԹ ՍՈՒՔԻԱՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՈՒՄ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԶԱՐՅՆԵՐ

Իրավական և ժողովրդական պետության կայացման գործում կարևորագույն գործոններից է սահմանադրական այնպիսի արժեքների որդեգրումը, որոնք խարսխված կլինեն մարդու և քաղաքացու իրավունքների գերակայության սկզբունքի վրա: Մարդու իրավունքների համապարփակ ձևակերպումը տրվել է դեռևս 1948 թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որտեղ նշված է. «Մարդիկ ծնվում են ազատ, հավասար, իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով, և մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումը հանդիսանում է ազատության, արդարության եւ համընդհանուր խաղաղության հիմքը»:

«Հ-ում սահմանադրական մակարդակով է ամրագրվում իրավահավասարության սկզբունքը: Այնուամենայնիվ, դժվար թե հնարավոր լինի գտնել ավելի առանցքային և միաժամանակ ավելի բարդ հիմնախնդիր, քան տվյալ սկզբունքն է իր բազմեզր սոցիալական, հոգեբանական, բարոյաէթիկական և այլ դրսևորումներով: Բնական է, որ մարդիկ չեն ծնվում հավասար, սակայն ժողովրդավարական պետությունները սահմանադրությամբ ամրագրում են օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը (որոշ երկրներում, ինչպես ՀՀ-ում, նաև կնոջ և տղամարդու իրավահավասարությունը), ինչը, իր հերթին, կոչված է բացառելու ցանկացած կամայական խտրականություն՝ լինի դա իրավունքների, ազատությունների, թե պարտականությունների տեսքով: Այնուամենայնիվ, օբյեկտիվ իրականության մեջ անհնար է ապահովել իրավունքների և պարտականությունների բացարձակ հավասարությունը բոլորի համար. կախված անձի իրավական կարգա-

վիճակից, նրա զբաղեցրած պաշտոնից, իրավախախտում կատարելու փաստից, բնակչության խոցելի խավերին պատկանելու և այլ նմանօրինակ հանգամանքներից՝ օրենսդիրը նախատեսում է «իրավաչափ անհավասարության» դեպքեր արտոնությունների կամ իրավունքների սահմանափակումների ձևով:

2005 թ. Սահմանադրական փոփոխություններով ամրագրվեց, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, և որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք¹: 2015 թ. փոփոխություններով 3-րդ հոդվածը փոքր-ինչ այլ տեսք ստացավ: Այս դեպքում արդեն ամրագրվում է, որ ՀՀ-ում մարդն է միայն բարձրագույն արժեք: Իսկ երկրորդ նախադասությամբ անդրադարձ է կատարվում մարդու անօտարելի արժանապատվությանը, որը նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք է հռչակվում: Այս անգամ նույնպես սահմանվում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունքով հանրային իշխանության՝ սահմանափակված լինելու սկզբունքը: Սահմանադրական վերջին փոփոխություններն ավելի հեռուն են գնացել, ու կարևոր նորամուծությունը 3-րդ հոդվածում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը՝ որպես հանրային իշխանության **պարտականության** սահմանումն է: Վերոգրյալ երկու դեպքում էլ հանրային իշխանության գործունեության առանցքն ու դրա սահմանները, լիազորությունների թույլատրելի մասշտաբը, փաստորեն, որոշվում է մարդու իրավունքների

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

1. <http://www.concourt.am/armenian/constitutions/index2005.htm>, ՀՀ Սահմանդրություն (2005թ խմբ.) հոդ. 3:

ու ազատությունների իրականացման ապահովման առաջնայնությամբ: Բնական է, որ հանրային իշխանության լիազորությունների՝ ցանկացած սահմանանցում բերելու է մարդու իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման, իսկ ցանկացած քաղաքական միջոց, որը հանգեցնում է մարդու իրավունքների խախտման, ոտնձգություն է մարդու ազատության դեմ: Դրանից խուսափելու համար պետք է բալանսավորել իրավունքների և ազատությունների՝ պետության կողմից սահմանելու իրավասությունը մի կողմից (չբացարձակացնելով այն, քանզի բնական իրավունքի տեսանկյունից պետությունը որոշ անքակտելի և անօտարելի իրավունքները ընդամենը պոզիտիվացնում է²⁾ և մարդու իրավունքների և ազատությունների անկաշկանդ իրականացումն ու պաշտպանությունը մյուս կողմից, ինչը, իր հերթին, չի կարող ողջ ծավալով կյանքի կոչվել առանց պետության կողմից որոշ իրավունքների սահմանափակման, առանց հարկադրանքի միջոցների: Պետք է ոչ միայն հռչակվի մարդու սահմանադրական իրավունքը, այլև առավելագույնս հստակ սահմանվեն դրանց «իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները»³⁾:

Այսպիսով, հրն է այն առանցքը, որը կապահովի հավասարակշռությունն իրավական համակարգում, ինչպես են որոշվում իրավունքի սահմանափակման սահմանները, դրանց իրավաչափության հիմքերը:

Ամփոփելով Սահմանադրական արդարադատության միջազգային փորձը՝ իրավագետ Գ. Հարությունյանն առանձնացնում է իրավունքի սահմանափակման մի քանի հիմքեր. այսպես՝ պետությունը կարող է սահմանափակել իրավունքը, եթե սահմանափակումն արդարացված է այլ իրավունքների պաշտպանությամբ կամ որևէ այլ սահմանադրական արժեքի պաշտպանությամբ, կամ սահմանադրա-

կան նպատակով, եթե պաշտպանությունը կամ նպատակի ձեռքբերումը չի կարող իրականացվել որևէ այլ միջոցով՝ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից⁴⁾:

Վերը առաջադրված հարցին փորձ է արվել պատասխանել 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ, որում ամրագրվեցին իրավունքների սահմանափակման՝ օրենսդրի հայեցողությունը սահմանափակող ժամանակակից սահմանադրական իրավունքում համընդհանուր ճանաչում գտած 3 կարևորագույն սկզբունք՝ համաչափության, որոշակիության և իրավունքի էության անխախտելիության սկզբունքները (հոդ. 78-80): Դրանց հետևում է ևս մեկ պահանջ, ըստ որի՝ հիմնական իրավունքների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները (հոդ. 81, 2-րդ մաս): Սակայն այս սկզբունքներին անշեղորեն հետևելն անհրաժեշտ, բայց ոչ միակ պայման է իրավունքների սահմանափակման իրավաչափության գնահատման հարցում, ուստի վերոգրյալ երեք սկզբունքներից բաղկացած ցանկը սպառիչ չէ:

Համաչափության, որոշակիության և իրավունքի էության անխախտելիության սկզբունքների բացահայտմանը դեռ կանդրադառնանք ստորև, մանավանդ, որ դրանք գրեթե ամբողջությամբ՝ բացառությամբ մեր կողմից առանձնացված իրավունքների սահմանափակման օրինականության պահանջին, համընկնում են այդ սահմանափակումներին վերաբերող իրավաբանական գրականության մեջ արտահայտված ընդհանուր տեսակետների հետ:

Այդ սկզբունքների էության հաշվառմամբ կարծում ենք, որ իրավունքի սահմանափակումն իրավաչափ կարող է համարվել, եթե առկա են հետևյալ չափանիշները՝

- Սահմանափակման նպատակը
- Սահմանափակման անհրաժեշտությունը
- Սահմանափակման օրինականությունը

2. Վ. Ներսիսյանը գտնում էր, որ «Միայն որպես իրավունքի արտահայտման ձև է օրենքը (պոզիտիվ իրավունքը) իրավական երևույթ» և որ «Լինելով միայն իրավունքի օբյեկտիվորեն պայմանավորված հատկությունների արտահայտման ձև՝ օրենքը դառնում է իրավական օրենք»:

3. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները եվ դրանց իրացման հիմնական ուղղությունները հայաստանի հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն): Գ. Դանիելյան, Վ. Այվազյան, Երևան, «Հայրապետ», 2015 թ. էջ 35:

4. Սահմանադրական մշակույթ, Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Գ. Գ. Հարությունյան, Երևան, 2005, էջ 188:

Անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

Սահմանափակման նպատակը: Իրավունքի տեսության մեջ «նպատակ» հասկացության տակ արտահայտվում է ցանկալի ապագա իրողություն, որին ուղղված է սուբյեկտի գործունեությունը: Եթե 2005 թ. Սահմանադրության 43-րդ հոդվածով էին տրվում սահմանադրական իրավունքների սահմանափակման նպատակները (ոչ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ), ապա 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության՝ իրավունքի սահմանափակման հնարավորություն նախատեսող յուրաքանչյուր նորմ սպառիչ ձևով նախատեսում է նաև այն նպատակը կամ նպատակները, որոնց հասնելուն ուղղված էլ կարող է այդ իրավունքը սահմանափակվել: Այս բարեփոխումը թույլ է տալիս վեր հանել առանձին իրավունքների սահմանափակման առանձնահատկությունները և ուղղված է կանխելու իրավակիրառողի կողմից հնարավոր կամայականությունները: Սահմանադրության մեջ հիշյալ նպատակներից հանդիպում ենք պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության, երեխայի կենսական շահերն ապահովելու և այլ նպատակներ: Միայն նպատակի գոյությունը, թերևս, բավարար չէ իրավունքների սահմանափակման համար: Իրավունքների սահմանափակման նպատակի և սահմանափակման միջոցի կիրառման անհրաժեշտության կապն առավել խորությամբ կքննարկենք ստորև՝ համաչափության սկզբունքի համատեքստում:

Սահմանափակման անհրաժեշտությունը: Իրավունքների սահմանափակման երկու հիմքերը, դրանց նպատակն ու իրականացման անհրաժեշտությունն անքակտելիորեն կապված են ու փոխլրացնում են իրար: Դրանք մաս են կազմում համաչափության սկզբունքի, որն էլ ՀՀ 2015 թ. փոփոխված սահմանադրությամբ առաջին անգամ ամրագրվեց: Կարևորագույն այս սկզբունքն իրավական պետության հիմնաքարերից է և իրավամբ ժամանակակից իրա-

վական մտքի բարձրագույն նվաճումներից մեկը: Մինչև այս սկզբունքի՝ սահմանադրական մակարդակով ամրագրումը Սահմանադրական Դատարանն իր՝ 2010 թ. հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-920 որոշման մեջ նշել է, որ հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող համաչափության ընդհանուր սկզբունքով: Բացի այդ, համաչափության սկզբունքը պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև: Այժմ արդեն Սահմանադրության հոդված 78-ի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է **պիպանի** և **անհրաժեշտ** լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Իսկ Հոդված 71-ով նախատեսվում է պատժի համաչափության սկզբունքը, ըստ որի՝ նշանակված պատժատեսակն ու պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին: Իրավունքի գերակայության համատեքստում համաչափության սկզբունքի մասին նշում կա նաև 2014 թ. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում, որտեղ այն իր արտացոլումն է գտնում հետևյալ ձևակերպմամբ. «հիմնական իրավունքներին ցանկացած միջամտություն և իշխանության ցանկացած գործողություն պետք է բխեն համաչափության սկզբունքից»⁵:

Սահմանադրական վերջին փոփոխությունների մասնագիտական հանձնաժողովի անդամ Վ. Պողոսյանի՝ համաչափության սկզբունքի վերաբերյալ տված համառոտ պարզաբանմամբ. «հետապնդվող նպատակին հասնելու համար միջոցը պիտանի է այն դեպքում, եթե այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակին հասնելուն: Հիմնական իրավունքին միջամտել անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ

5. Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, հոկ. 2014 թ., էջ 16:

ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի խնդրո առարկա հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը: Բացի այդ, միջամտությունը պետք է համարժեք կամ չափավոր լինի, այսինքն՝ միջամտության սաստկությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը և կշռին»⁶: Լիարժեքորեն կիսելով իրավագետի կարծիքը՝ գտնում ենք, որ վերը տրված պարզաբանումն ամբողջությամբ չի արտացոլվում Սահմանադրության 78-րդ հոդվածում, որում համաչափության սկզբունքի բաղադրատարրերից նշվում են միայն պիտանիությունը, անհրաժեշտությունը և իրավունքի սահմանափակման միջոցի ու դրա հետապնդած նպատակի, դրանց նշանակության համարժեքությունը: Կարծում ենք, որ Սահմանադրությամբ պաշտպանվող արժեքների վրա ազդող պետական միջամտությունը, Սահմանադրորեն ամրագրված օրինական նպատակին հասնելու համար պետք է լինի ոչ միայն պիտանի և անհրաժեշտ, այլև չափավոր: Այսինքն՝ հնարավոր միջոցներից պետք է ընտրվի այնպիսին, որը նվազագույնս կազդի Սահմանադրությամբ պաշտպանվող բարիքների վրա (less restrictive means):

Իրավամբ, համաչափության սկզբունքի բաղադրատարրերից նաև չափավորության սահմանումը լրացուցիչ զսպիչ օղակ կձառայի հանրային իշխանության լիազորություններն իրականացնելիս՝ բացառելով իրավունքի սահմանափակման այնպիսի միջոցների կիրառումը, որոնք թեև պիտանի և անհրաժեշտ են Սահմանադրությամբ նախատեսված նպատակին հասնելու համար, բայց, այնուամենայնիվ, կա սահմանափակման մեկ այլ՝ իրավունքների իրացմանն առավել նվազ չափով միջամտող միջոց:

Իր «Սահմանադրական մշակույթ» աշխատության մեջ Գ. Հարությունյանը, անդրադառնալով համաչափության սկզբունքի ապահովմանն ու գնահատմանը, վեր է հանում մի շարք հարցեր, որոնց պարտավոր է պատասխանել սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատություն իրականացնելիս: Դրանք են՝

1. Եղել են արդյոք իրական պատճառներ իրավունքի սահմանափակման համար,

2. առկա է սահմանափակման որևէ այլ միջոց, որը կունենար նույն ազդեցությունը,

3. արդյո՞ք սահմանափակման՝ ընտրված միջոցն արդյունավետ է տվյալ իրավաչափ նպատակին հասնելու համար,

4. արդյո՞ք սահմանափակումն այն ծավալի է, որ ընդունելի է տվյալ իրավաչափ նպատակի համար⁷:

Վերը բերված հարցերից երկրորդն ու չորրորդն անմիջականորեն վերաբերում են իրավունքի սահմանափակման՝ կիրառվող միջոցի չափավորությանը: Այսպես՝ եթե առկա է սահմանափակման այլ միջոց, որն ունակ է հասնելու տրված նպատակին և ավելի փոքր մասշտաբի սահմանափակումներ է առաջարկում, ապա պետք է կիրառվի վերջինը: Եվ սրան հավելված չորրորդ հարցին տրված դրական պատասխանը. այն է՝ սահմանափակումն իրոք այն ծավալի է, որ ընդունելի է տվյալ իրավաչափ նպատակի համար, կապահովի իրավունքի սահմանափակման չափավորության պայմանը:

Սահմանափակման օրինականությունը:

Պլատոնը գտնում էր, որ այնտեղ, որտեղ օրենքը չունի ուժ և գտնվում է ինչ-որ մեկի իշխանության ներքո, այդ պետությունը դատապարտված է կործանման: Օրինականության սկզբունքն իրավական նորմին առաջադրվող մի քանի պարտադիր հատկանիշների կոնգլոմերատ է, որոնցից իրավունքի տեսության մեջ առավել հաճախ հանդիպում են օրենքի որոշակիությունը, դրա լրիվությունը, կանխատեսելի և երաշխավորված լինելը: Օրինականության սկզբունքին անշեղորեն հետևելու խնդիրն առավել շոշափելի է դառնում իրավունքների սահմանափակման հիմնահարցը քննարկելիս: Անդրադառնալով դրանց ներկայացվող չափորոշիչին՝ հարկ է հիշատակել ժամանակակից սահմանադրական իրավունքի մոտեցումները, ըստ որոնց՝

- սահմանափակման ենթակա են ոչ բոլոր իրավունքները,
- այդ իրավունքները ենթակա են սահմանափակման **միայն օրենքով,**

• ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

6. Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Երևան, 2015, էջ 82:

7. Սահմանադրական մշակույթ, Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Գ. Գ. Հարությունյան, Երևան 2005, էջ 191:

• սահմանափակման ենթակա իրավունքները կարող են սահմանափակվել միայն որոշակի՝ Սահմանադրությամբ տրված հիմքերի առկայության դեպքում,

• սահմանադրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում ևս հիմնական իրավունքները չեն կարող սահմանափակվել ցանկացած ծավալով⁸:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում երկրորդ՝ իրավունքների սահմանափակման՝ բացառապես օրենքով կարգավորվածության պահանջը: ՀՀ Սահմանադրության՝ իրավունքի սահմանափակում նախատեսող ցանկացած նորմ պարունակում է նաև նշում առ այն, որ այդ իրավունքները ենթակա են սահմանափակման միայն օրենքով: Բացի այդ, հոդված 76-ում նույնպես հստակ ամրագրվում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ և ռազմական դրության ժամանակ իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

Դեռևս 2006 թվականի ապրիլի 18-ին ՀՀ ՍԴ-ն իր ՍԴՈ-630 որոշմամբ հստակեցրել է, որ *կառավարությունը չի կարող իր որոշումներով սահմանել պետության կարիքների համար սեփականության օտարման կարգը, որն ուղղակիորեն առնչվում է սեփականության իրավունքի սահմանափակման հիմնախնդրին...* և որ օրենքը պետք է սահմանի, թե ինչպես որոշել հասարակական եւ պետական կարիքը:

2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 79 հոդվածում տեղ գտավ խիստ կարևոր որոշակիության սկզբունքը: Ինչպես արդարացիորեն նկատում է իրավագետ Գ. Դանիելյանը՝ իրավական համակարգը սկզբունքորեն պետք է բացառի իրավակարգավորման այնպիսի երևույթ, ինչպիսին է թերի և տարակարծությունների տեղիք տվող, ինչպես նաև հակասական իրավական ակտերի ընդունումը: Ուսումնասիրելով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի և ՀՀ ՍԴ որոշումներն ու փորձագիտական զեկույցները՝ իրավագետը եզրահանգում է, որ ներկայումս իրավական

որոշակիության հիմնական երաշխիք է համարվում իրավական նորմերի, դրանցում օգտագործված եզրույթների անհրաժեշտ հստակությունը. մասնավորապես, նախապատվությունը տրվում է այնպիսի եզրույթների օգտագործմանը, որոնց իրազեկվածության առնչությամբ գործնականում խնդիրներ չեն ծագում⁹:

Իրավաբանական գրականության մեջ որոշակիության սկզբունքը, որպես կանոն, հանդիպում է կանխատեսելիության, իսկ որոշ դեպքերում նաև՝ իրավաչափ (լեգիտիմ) ակնկալիքների պաշտպանության սկզբունքի հետ միասին¹⁰: Եվ սա տրամաբանական է, քանի որ իրավական նորմի՝ որոշակիորեն ձևակերպված լինելը թույլ է տալիս կանխատեսելի դարձնել դրանից բխող հետևանքները, ունենալ որոշակի հիմնավորված ակնկալիքներ և հակառակը՝ ոչ որոշակի, այսինքն՝ տարաբնույթ մեկնաբանությունների տեղ թողնող իրավական նորմը դաշտ է ստեղծում օպորտունիստական նկրտումների իրացման համար: Այս առիթով ՀՀ Սահմանադրական դատարանը 2014 թ. իր ՍԴՈ 1176 որոշման մեջ արձանագրել է, որ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության: Իսկ իրավական նորմի կանխատեսելիության սկզբունքի պահպանության մասով անդրադարձ է արվել 2015 թ. ՍԴՈ 1213 որոշման մեջ առ այն, որ իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների՝ այդ թվում իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

8. Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, ՀՀ Սահմանադրության փոփոխությունները/համառոտ պարզաբանումներ/, Երևան, 2005, էջ 64-68:
 9. http://ysu.am/files/01G_Danielyan-1476101269-.pdf Գ. Դանիելյան, Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համամասնության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները, «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն», էջ 3-5:
 10. Ինչպես օրինակ ՄԻԵԴ 1988թ. J. Mulder v Minister van Landbouw en Visserij Case 120/86 գործում:

ՄԻԵԴ մի շարք գործերում նույնպես անդրադարձ է արվում իրավական որոշակիության սկզբունքի հարցին՝ ամրագրելով, որ իրավական նորմի որոշակիության պայմանը չապահովելը խարխուլում է իրավունքի գերակայության սկզբունքն ամբողջությամբ (the rule of law), քանի որ այս երկու սկզբունքները հարաբերակցվում են այնպես, ինչպես մասն ամբողջին¹¹, և որ որոշակիության սկզբունքը չհարգելը հանգեցնում է ընդհանուր դատական համակարգի հանդեպ վստահության անկման¹²:

Ուսումնասիրության արժանի է նաև ՀՀ սահմանադրության 80 հոդվածում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների էության անխախտելիության սկզբունքը: Բանն այն է, որ երբ տվյալ նորմը դիտարկում ենք հոդված 78-ում տեղ գտած իրավունքների սահմանափակման համար ընտրված միջոցների՝ սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը համարժեք լինելու պահանջի հետ միասնության մեջ, պարզ է դառնում, որ սահմանադրական նորմերի վերաբերյալ ձևակերպումները համատեղված ոչ այլ ինչ են, քան իրավունքի սահմանափակման հետևանքով

իրավունքի էության անխախտելիության պահանջ, այսինքն՝ սահմանափակվող իրավունքի իմաստին և բովանդակությանը հետևելու սկզբունք, որը ենթադրում է, որ իրավունքները պետք է սահմանափակվեն միայն այն չափով և սահմանափակման այնպիսի միջոցներով, որոնք չեն բերի իրավունքի էության խեղաթյուրման:

Ժամանակակից ակնառու իրավագետ Գ. Հարությունյանը, օրինակ, վերը քննարկված համաչափության (համամասնության) սկզբունքի տարրերից իրավաչափ նպատակի առկայությանն ու սահմանափակման անհրաժեշտությանն ավելացնում է նաև սահմանափակող միջոցի *արդարացիությունը*: Չնայած այն հանգամանքին, որ արդարությունը, արդարացիությունը դժվար բանաձևելի սուբյեկտիվ կատեգորիաներ են՝ կարծում ենք, որ բացառելով իրավունքների սահմանափակման այնպիսի կարգավորման նախատեսումը, որը ոտնձգություն կլինի իրավունքի էության դեմ կամ կհանգեցնի իրավունքի էության կորստին¹³՝ հնարավոր կլինի ապահովել նաև իրավունքի սահմանափակման միջոցին առաջադրվող արդարացիության պայմանը:



11. http://ysu.am/files/01G_Danielyan-1476101269-.pdf Գ. Դանիելյան, Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համամասնության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները, «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն», էջ 3-5:

12. Ինչպես օրինակ ՄԻԵԴ 1988թ. J. Mulder v Minister van Landbouw en Visserij Case 120/86 գործում:

13. Սահմանադրական մշակույթ, Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Գ.Գ.Հարությունյան, Երևան 2005, էջ 191:

Մանուկ Մուրադյան

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության գնդապետ

Վահե Թորոսյան

Եվրոպական համալսարանի իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄՈՉՍՈՒՆՔԻ ԱՉՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԱՇԱՀՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ինստիտուտի համակարգային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն առավելապես հետազոտվել է քաղաքացիական իրավունքի գիտության ներկայացուցիչների կողմից¹: Ցավոք, հիմնահարցը հայրենական իրավագիտության մեջ բավարար ուշադրության չի արժանացել և կատարված հետազոտությունները եզակի են: Ընդգծվում է, որ հեղինակները չեն տարանջատում «սուբյեկտիվ իրավունքի չարաշահում» և «իրավունքի (մասնավորապես լիազորության) չարաշահում» հասկացությունները² առաջացնելով անորոշություն իրավական վարքագծի՝ նշված տեսակների տարբերակման հարցում: Հետազոտման համար սկզբունքային համարվող հասկացությունների (սուբյեկտիվ իրավունքի չարաշահում, հանրային իրավական լիազորության չարաշահում) վերաբերյալ մոտեցումը պետք է լինի այնպիսին, որ առաջինը վերաբերի *անձերի կողմից իրենց սուբյեկտիվ իրավունքների այնպիսի իրականացմանը, որը հակասում է վերջիններիս էությանը*, մյուսը՝ իրավասու սուբյեկտների կողմից հանրային իրավական լիազորությունների չարաշահման ձևով իրավախախտումների կատարմանը³:

Սույն հոդվածի հետազոտման առարկա է

անձերի՝ իրենց սուբյեկտիվ իրավունքների այնպիսի իրականացումը, որը հակասում է վերջիններիս էությանը, նպատակին: Սուբյեկտիվ իրավունքների կիրառման սահմանների հստակեցումը վերջիններիս անշեղ կենսագործման կարևոր երաշխիքներից է: Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հիմնահարցը հետազոտման նյութի շրջանակներում ձեռք է բերում յուրահատուկ գիտագործական նշանակություն հատկապես այն պատճառով, որ այն փոխկապակցվում է բարոյաէթիկական, փիլիսոփայական, հոգևոր այնպիսի երևույթի հետ, ինչպիսին *կրոնական համոզմունքի ազատության իրավունքն է:*

Ամենաընդհանուր բնորոշմամբ՝ սուբյեկտիվ իրավունքի չարաշահումը կամ, ինչպես ընդունված է ասել, ի չարս գործադրելը, պետք է հանգեցնի տվյալ սուբյեկտիվ իրավունքի էությունից և (կամ) նպատակից շեղման՝ վնասելով հասարակության կենսագոյի ներդաշնակությունը: Ինչպես իրավագիտորեն նշում է Ժան-Լուի Բերթելը. «*համեմատելով իրավունքի փառը ոգու հետ, լինում են դեպքեր, երբ անձինք իրենց իրավունքները կիրառելիս դրանց փալիս են իրավաբանական ճշտություն (հեղինակը նկատի ունի սուբյեկտիվ իրավունքի՝ օրենքի*

1. Տե՛ս **Волков А. В.**, Злоупотребление гражданскими правами: проблемы теории и практики: Автореф. дис. ... д-ра юрид. наук: 12.00.03 / А.В. Волков. - М., 2010. - 53 с., **Покровский И.А.**, Основные проблемы гражданского права. Изд. 3-е. испр. / И.А. Покровский. - М.: Изд-во «Статут», 2001. - 354 с., **Агарков М.М.**, Проблема злоупотребления правом в советском гражданском праве / М.М. Агарков // Известия Академии наук СССР. Отделение экономики и права. - 1946. - № 6. - с. 424-436., Бару М.И., О ст. 1 Гражданского кодекса / М.И. Бару // Советское государство и право. - 1958. - № 12. - с. 117-120., Грибанов В.П., Осуществление и защита гражданских прав. Изд. 2-е. испр. / В.П. Грибанов. - М.: Изд-во «Статут», 2003. - 411 с., **Малиновский А. А.**, Злоупотребление субъективным правом как юридический феномен: Автореф. дис. ... д-ра юрид. наук: 12.00.01 / А.А. Малиновский. - М., 2008. - 52 с.
 2. Տե՛ս **Самойлова М. В.**, Право личной собственности граждан СССР: авт. дис. ...канд. юр. наук. Л., 1965. С. 11., **Трубникова Т.В.**, Злоупотребление правом в уголовном процессе: критерии и пределы вмешательства со стороны государства / Вестник Томского государственного университета. Право. 2015. №3 (17) С. 69.
 3. Տե՛ս **Մուրադյան Մ. Հ.**, Դատավարական իրավունքների չարաշահման հիմնախնդիրը քրեադատավարական օրենսդրության բարեփոխումների լույսի ներքո: «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր: 2019, № 07, էջ՝ 36-37

դատին համապատասխան իրականացումը), սակայն դրանք իրականացվում են այլ նպատակներով, քան վերջիններիս էությունը կամ գործառույթն է: Այլ կերպ պահպանվում է իրավունքի փառը, վնասվում ոգին: Հեղինակն ընդգծում է, որ հատկապես իրավունքի ոգին պետք է լինի ուշադրության կենտրոնում, քանզի ոգին է իրավունքի վերջնական նպատակը: Ճարտանակելով միտքը՝ Բերժելն ընդգծում է, որ անհրաժեշտ է համապատասխան արձագանք այն դեպքերին, երբ խեղվում է իրավունքի ոգին⁴:

Հատկանշական է, որ մասնագիտական գրականությունում սուբյեկտիվ իրավունքի չարաշահման առանցքային հատկանիշ է վնասակար հետևանքի առաջացումը⁵: Ընդ որում, վնասակարությունը կարող է լինել ոչ միայն նյութական, այլև բարոյական, հոգեբանական, հոգևոր-կրոնական: Վերջինիս առկայությունն անմիջականորեն կապված է այնպիսի սոցիալ-իրավական գործոնի հետ ինչպիսին է կրոնական համոզմունքի ազատությունը:

Հատկանշական է, որ եթե «միտք», «խիղճ», «կրոն» եզրույթները խիստ էթիկական և ինչ-որ տեղ նաև վերացական լինելու պատճառով արդարացիորեն չունեն իրավական սահմանում, ապա մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, հավաքական իմաստով համարվելով մարդու իրավունքների հայեցակարգի անքակտելի տարրը, տեղ է գտել ինչպես միջազգային իրավունքի փաստաթղթերում, այնպես էլ՝ ներպետական իրավական ակտերում:

ՀՀ սահմանադրության 41-րդ հոդված

1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք, ինչը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատություն»: Հատկաշնական է, որ 2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխությունների տեքստը, ըստ էության, կրկնում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 9-րդ հոդվածի դրույթը⁶:

Կրոնական համոզմունքի ազատության իրավունքի պաշտպանության առարկան՝ որպես մարդկային կեցության հոգևոր նախապայման, ըստ էության, ընդգրկում է անձերի ազատության երկու ոլորտ՝ (1) անհատի ներքին ազատությունը (*forum internum*)⁷, սեփական գիտակցության մեջ մտքեր և համոզմունքներ ունենալու⁸, դրանք փոխելու ազատությունը, այլ կերպ՝ կրոնական համոզմունք ունենալու ազատության իրավունքը, (2) արտաքին կողմը (*forum externum*). այն է՝ սեփական մտքերն ու կրոնաբարոյական պատկերացումներն արտահայտելու ազատությունը⁹, այլ կերպ՝ կրոնական համոզմունքն արտահայտելու ազատության իրավունքը: Ընդ որում, եթե ներքին ազատությունն անձի մեջ պարփակված լինելու ուժով ենթակա չէ վերահսկման, կանոնակարգման, իրավաչափ սահմանափակման¹⁰ և հետևաբար՝

4. Տե՛ս **Бержель Ж. Л.**, Общая теория права. М., 2000. С. 441.

5. Տե՛ս **Малиновский А. А.**, Злоупотребление правом. – М.: МЗ-Пресс, 2002. – 122 с. 36.

6. Հատկանշական է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի պաշտպանության առարկան ՄԻԵԴ-ի պրակտիկայի արդյունքում էականորեն ընդլայնվել է, որի հիմքը դրվեց «**Kokkinakis v. Greece**» գործով: Նշվում է, որ 9-րդ հոդվածի պաշտպանության առարկան որոշակիացնում է հավատացյալների անհատականությունը և վերջիններիս պատկերացումները կյանքի մասին, սակայն այն կարևոր արժեք է նաև աթեիստների, ագնոստիկների, սկեպտիկների համար: Արդյունքում, 9-րդ հոդվածը երաշխավորում է պաշտպանություն ոչ միայն հասատատված կրոնների կրողներին (Բուդդիզմ՝ **X. v. UK**, № 5442/72, 1 DR 41, Քրիստոնեություն՝ **Stedman v. UK**, № 29107/95, 23 EHRR CD 168, Իսլամ՝ **X. v. UK**, № 8160/78, 22 DR 27, Սիկիսիզմ՝ **X. v. UK**, № 8231/78, 28 DR 5, Հնդուիզմ՝ **ISKCON v. UK**, № 20490/92, 18 EHRR CD 133, Հուդայականություն՝ **D. v. France**, № 10180/82, 35 DR 201), այլև՝ համեմատաբար նոր կրոնական կազմակերպությունների հետևորդներին՝ եհովականներին՝ **Manoussakis v. Greece**, 1996-IV, 23 EHRR 387, սեկուլյարիզմի կողմնակիցներին՝ **Lautsi and Others v. Italy**, HUDOC (2011), 54 EHRR 60, § 58, GC և այլն:

7. Տե՛ս **Evans M.** Religious Liberty and International Law in Europe, 1997, P. 284-286.

8. Տե՛ս **Gomien**. Short guide to the European Convention on Human Rights, 1991, P. 69.

9. Տե՛ս **Թորոսյան Վ. Ա.**, Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սահմանադրաիրավական բնութագիրը. տեսական-իրավական վերլուծություն: Առենախոսություն ի.գ.թ.-ի, ԺԲ.00.02, Երևան 2018 թ. էջ՝ 87-88:

10. Տե՛ս **Darby v. Sweden**, A 187 (1990), 13 EHRR 774, §44.

չարաշահման, ապա կրոնը կամ համոզմունքները միայնակ կամ այլոց հետ դավանելու, այն քարոզելու, որևէ կերպ արտահայտելու ազատությունը բազմաթիվ տարրնկալումների և վեճերի առիթ է հանդիսանում: Առաջին հայացքից պարզ թվացող խնդրի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ «forum internum»-ի և «forum externum»-ի հարաբերակցության միջև, այնուամենայնիվ, որոշակիությունը թույլ է¹¹: Հարկանշական է, որ ՄԻԵԴ-ը վերջին տարիներին ցույց է տալիս իր պատրաստակամությունը՝ հատուկ ուշադրություն հարկացնել պետությունների ոլորտին վերաբերող օրենսդրությանը և քաղաքականությանը, որոնք սահմանում են անձնական հայացքների բացահայտման համար նախատեսված միջամտության կանոններ: Օրինակ՝ «Alexandridis v. Greece» գործի շրջանակներում դատարանն ընդգծեց, որ խախտվում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, եթե դիմողից պահանջվում է փաստաբանի երդում տալու ընթացքում բացահայտել այն փաստը, որ նա չի հանդիսանում ուղղափառ եկեղեցու անդամ¹²:

Նկատենք, որ խղճի ազատության և հատկապես նրա բաղադրատարր հանդիսացող կրոնի ազատության իրավունքի կենսագործումն իր յուրահատուկ դրսևորումներով¹³ շատ հաճախ ուղեկցվում է այլ անձանց իրավունքների ու ազատությունների ոտնահարումներով, չարաշահումներով և այդպիսով ձևախեղում հասարակական հարաբերությունների բնականոն ընթացքը: Խնդիրն առավել բարդանում է, երբ միջազգային իրավունքը հետևողականորեն պահանջում է, որ կրոնական միավորումների կամ անձանց խմբերի համոզմունքների ազատության կամ դրանք արտահայտելու իրավունքը չպետք է կախված լինի պետական գրանցման հանգամանքից: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը «Masaev v. Moldova»-ի (12/05/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 6303/

05 գործով, § 26) գործի շրջանակներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ *Դատարանը չի վիճարկում պետության իրավունքը՝ սահմանելու կրոնական միավորման գրանցվելու պահանջ Կոնվենցիայի 9-րդ և 11-րդ հոդվածներով սահմանված պահանջների ներքո: Այդուհանդերձ, դրանից չի հետևում, ինչպես կառավարությունն է պնդում, որ Կոնվենցիային համահունչ կլինի, եթե պետությունը պատասխանատվության ենթարկի չգրանցված կրոնական միավորման անհատ անդամներին՝ աղոթելու կամ իրենց կրոնական համոզմունքներն այլ կերպ արտահայտելու համար: Հակառակն ընդունելը կնշանակի բացառել պետության կողմից չգրանցված կրոնական փոքրամասնությունների համոզմունքները, որն էլ, արդյունքում, կնշանակի ընդունել, որ պետությունը կարող է թելադրել, թե ինչ համոզմունք պետք է անձն ունենա¹⁴:*

Հակված ենք այն մտքին, որ կրոնական աշխարհայացքի արտահայտման խնդիրը անզամ աշխարհիկացման սրընթաց գործընթացների պարագայում չի կորցնում իր արդիականությունը: Միևնույն ժամանակ ներկայիս գլոբալացվող իրականության մեջ աշխարհիկացման գործընթացներին զուգահեռ չենք կարող չնկատել նաև հակադիր միտումը՝ ապաաշխարհիկացումը (desecularization), որի դեպքում կրկին ակտիվանում է կրոնը¹⁵: Որքան էլ այս պնդումն իրարամերժ թվա, այդուհանդերձ փաստ է, որ այսօր աշխարհիկ պետություններում կրոնական գաղափարախոսության վերածնունդն առավելապես պայմանավորված է տարաբնույթ արհեստաձին կրոնական ուղղությունների ծագմամբ և առաջխաղացմամբ: Ի սկզբանե նպատակ հետապնդելով կոտրել դավանական մեծամասնության ավանդական պատկերացումները, հարվածել ազգային եկեղեցիների բազմադարյա առաքելությանը և սպասարկել այլ՝ քաղաքական, տնտեսական

11. Տե՛ս **Petkoff**, Religion and Human Rights 183 at 185 (2012).
 12. Տե՛ս **Право Европейской конвенции по правам человека / Харрис, О'Бойл и Уорбрик**; (пер. с англ. Власихин В. А. И др.). – Науч. Изд. – М.: Развитие правовых систем, 2016. С. 803.
 13. Նկատենք, որ կրոնական համոզմունքն արտահայտելու ազատության իրավունքը դրսևորվում է այն իրացնելու չորս հիմնական ձևերով՝ ուսուցում, քարոզ, արարողություններ, ծիսակատարություններ:
 14. Տե՛ս **Ջեյնալյան Ա.**, ՄԻԵԴ նախադեպային իրավունքը վարչական դատավարությունում. Արդարադատության ակադեմիա, Երևան 2015, էջ 34-35:
 15. Տե՛ս **Berger P. L.**, The Desecularization of the World: Resurgent Religion and World Politics. Front Cover, Ethics and Public Policy Center, 1999, 135 էջ:

շահեր՝ այս կազմակերպությունները գտել են ամենահարմար և հուսալի պաշտպանության եղանակը՝ կրոնական գործունեությունը: Այն թույլ է տալիս հեշտությամբ թափանցել անհատի ներաշխարհի և անթույլատրելի միջոցների ներգործությամբ տարակողմնորոշել և ոտնահարել նրա կրոնական զգացմունքները: *Այսպիսով՝ տեղի է ունենում կրոնական համոզմունքն արտահայտելու ազատության իրավունքի օգտագործում՝ վերջինիս իրական նպատակին և գործառույթին հակառակ:* Այդպիսի ներգործության եղանակներից են, օրինակ, բարեգործությունը, հիպնոսը, կեղծ բժշկությունը և այլն: Վերջինի դեպքում առավել «մասնագիտացված» են Գիտաբանները (Սայենսոլոգիայի եկեղեցի), որոնք թմրամոլության դեմ կախվածությունը բուժելու նպատակով՝ հիվանդին տրամադրած դեղերի ներգործությամբ վերջինիս հեշտությամբ ներքաշում են իրենց կազմակերպության շարքերը: Ուշագրավ է, որ ԵԽԽՎ-ի 02.04.2003թ. թիվ 9771 որոշման մեջ անդամներն իրենց մտահոգությունն էին հայտնում հիշյալ մեթոդի՝ քողարկված նպատակների, մոլորեցնող ազդեցությունների և վնասակար հետևանքների վերաբերյալ: Նշենք նաև, որ Սայենսոլոգիայի եկեղեցու գործունեությունը որոշ երկրներում դադարեցված է (Հունաստան, Ֆինլանդիա), իսկ մի շարք երկրներ խիստ վերահսկողություն են սահմանել այդ կառույցի գործունեության նկատմամբ (Գերմանիա, Իսպանիա, Ֆրանսիա):

Ինչպես իրավացիորեն նկատում է Գ. Տերտերյանը, նոր ժամանակի աղանդները, մոլորեցնող անվանումների ներքո չարաշահելով իրենց տրված կրոնական ազատությունները և այդ կերպ խուսափելով հարկային պարտավորություններից, ըստ էության հանդես են

գալիս որպես ապակրոնական կամ նույնիսկ հակակրոնական շարժումներ¹⁶: Կրոնական գործունեության անվան ներքո նյութապատական նպատակներ են քողարկում, օրինակ, Մունի եկեղեցին, որը, ինչպես հետագայում պարզվեց, ստեղծվել էր Կորեայում գործող ամերիկյան հատուկ ծառայությունների ֆինանսավորմամբ [3, էջ 23-29]: Պատահական չէ, որ Եվրոպական խորհրդարանը միայն 1984-1985 թվականներին Մունի եկեղեցու դեմ ընդունել է շուրջ 47 որոշում: Հավելենք, որ կրոնադավանական գործունեությունը շահադիտական մղումներով ուղղորդելուց զատ, շատ հաճախ կրոնն ինքն է դառնում միջոց և գործիք տնտեսական գործունեության իրականացման համար, որն էլ, ըստ էության, հանգեցնում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ազատության իրավունքի չարաշահմանը¹⁷:

Գաղտնիք չէ, որ տոտալիտար բնույթի կրոնական կազմակերպությունները շատ հաճախ ներգրավված են նաև քաղաքական գործընթացներում կամ առավելապես ծառայում են այդ նպատակին: Նրանց անդամները միսիոներական գործունեության անվան ներքո անհրաժեշտ տեղեկատվություն են հավաքում և որոշակի քաղաքական ու նյութական խնդիրներ լուծում¹⁸: Հաշվի առնելով այս՝ ՌԴ սահմանադրական դատարանն իր որոշմամբ անթույլատրելի համարեց այնպիսի միսիոներական գործունեությունը, որը «...անհամատեղելի է մտքի, խղճի և կրոնի ազատության հարգման, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների հետ և, մասնավորապես, երբ այն ուղեկցվում է նյութական և սոցիալական օգնության միջոցով եկեղեցու նոր անդամների հավաքագրմամբ, աղքատության և կարիքի մեջ գտնվող անձանց նկատմամբ ոչ իրավաչափ

16. Տես **Տէրտերյան Գ.**, Եկեղեցի-Պետութիւն յարաբերութիւններ եւ նոր աղանդաւորականներ, ներածական ակնարկ, Պէյրուօ, 2003թ., էջ՝ 7-8:

17. Առևտրային կազմակերպությունները հանրության գիտակցությունը շեղելու նպատակով օգտագործում են կրոնական խորհրդանիշներ, փակցնում կրոնական իմաստ կրող արտահայտություններ՝ այդ կերպ ներգործելով հաճախորդների կրոնական զգացմունքների վրա: ՄԱԿ-ի միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) գործադիր խորհուրդը ընդգծելով վերջին ժամանակներում նման գործելաճի դրսևորման արդիականությունը, դատապարտել է կրոնական խորհրդանիշների՝ որպես մարքեթինգային հնարքների գործածման միջոցով իրավունքի չարաշահումը, Տես https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000136204_rus (Մուտք՝ 20.01.2020):

18. Քաղաքականության և կրոնի տարանջատման նկատառումներով մի շարք պետությունների իրավական ակտերով սահմանվում է հոգևոր սպասավորների քաղաքականությամբ զբաղվելու արգելքը: Կան երկրներ, որոնք արգելում են կրոնական հիմքով քաղաքական կուսակցությունների ստեղծումը կամ առհասարակ կրոնական հաստատությունների օգտագործումը քաղաքական նպատակներով (տես, Բուլղարիայի սահմանադրության 11-րդ և 13-րդ հոդվածները):

ներգործությամբ...»¹⁹: Նշված համատեքստում զարմանալի չէ միսիոներական գործունեությունն առհասարակ արգելելու վերաբերյալ որոշ պետությունների որդեգրած քաղաքականությունը²⁰:

Ինչպես նկատեցինք, պետությունները, երաշխավորելով մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, գործուն քայլեր են ձեռնարկում այդ իրավունքի նպատակային իրականացման ուղղությամբ, այլ կերպ՝ փորձում են կանխել դավանանքի ազատության չարաշահումը: Դա վերաբերում է նաև կրոնական արարողությունների անցկացման վայրի և ժամանակի ընտրությանը: Բանն այն է, որ կան կրոնական համայնքներ, որոնք կրոնական ծեսի անցկացման պատրվակով միանգամայն այլ իմաստ ու բովանդակություն են նախանշում: Օրինակ՝ Ռուանդայում գիշերային ժամերին արգելվում է կրոնական երկրպագությունը, քանի որ ողջամիտ վտանգ կա, որ դրա անցկացման ներքո պետության ապստամբ ուժերը կարող են համախմբվել:

Մեկ այլ խնդիր, որը կարող է առնչվել կրոնի ազատության իրավունքի չարաշահմանը, զինված ուժերում դավանաբանական համոզմունքների հիմքով ծառայությունից ազատվելու ինստիտուտն է: Առանձին պետություններում նշված իրավունքը ստացել է հիմնական իրավունքի ռանգ: Մասնավորապես, ՀՀ սահմանադրության 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք»: Առանձին պետություններ՝ այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, ընդունել են այլընտրանքային ծառայության մասին օրենքներ՝ հաշվի առնելով միջազգային իրավունքով ամրագրված նորմերն ու սկզբունքները, համաձայն որի՝ մահացու ուժ գոր-

ծադրելու հետ կապված պարտավորությունները կարող են լուրջ հակասության մեջ մտնել խղճի ազատության և կրոնը կամ համոզմունքը դավանելու իրավունքի հետ²¹:

Հատկանշական է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածն ուղղակի չի երաշխավորում կրոնադավանական և համոզմունքի հիմքերով զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքը: Սակայն ՄԻԵԴ-ի համար այս հարցում սկզբունքային հանդիսացավ հենց ՀՀ-ի դեմ գործը («Bayatyan v. Armenia»), որի շրջանակներում հաստատվեց, որ համոզմունքի շարժառիթով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը ենթակա է պաշտպանության Կոնվենցիայի 9-րդ հոդվածով²²: Նշված հիմքերով անձանց զինվորական ծառայությունից ազատելու հարցում ՄԻԵԴ-ը տարբեր գործերով տարբեր կերպ է գնահատել փաստական հանգամանքները: Այստեղ նաև կարևոր է այն հանգամանքը, որ չդրսևորվի խտրական վերաբերմունք առանձին կրոնական կազմակերպությունների անդամների նկատմամբ: Օրինակ՝ «Lang v Austria»-ի գործի շրջանակներում ՄԻԵԴ-ը պետության միջամտությունը գնահատեց որպես անթույլատրելի և արձանագրեց խախտում Կոնվենցիայի 14-րդ և 9-րդ հոդվածների համադրությամբ, սակայն մեկ այլ՝ «Koppi v. Austria»-ի գործի շրջանակներում նշված հոդվածների համադրությամբ խախտում չարձանագրվեց՝ հաշվի առնելով դիմումատուի՝ կրոնական նշված կազմակերպության անդամ չհանդիսանալու հանգամանքը²³: Կարծում ենք՝ այստեղ առկա են նաև ՄԻԵԴ դիմելու իրավունքի չարաշահման տարրեր Կոնվենցիայի 17-րդ հոդվածի իմաստով, ինչը քննարկման այլ հարց է:

Նկատենք, որ քննարկվող իրավունքն իրականացնելու նպատակը կարող է տրամադծորեն այլ ուղղություն որդեգրել: Օրինակ՝ խղճի ազատության իրավունքը կարող է չարաշահվել պարտադիր զինվորական ծառայու-

19. Տե՛ս <http://legalacts.ru/doc/postanovlenie-konstitutsionnogo-suda-rf-ot-23111999-n/> (Մուսը՝ 20.01.2020):

20. Տե՛ս [https://nrm.uz/contentf?doc=25735_zakon_respubliki_uzbekistan-_ot_14_06_1991_g_n_289-xii_o_svobode_sovesti_-_i_religioznyh_organizaciyah_\(novaya_redakciya\)_\(utverjdjena_zakonom_ruz_ot_01_05_1998_g_n_618-i\)&products=1_zakonodatelstvo_respubliki_uzbekistan.](https://nrm.uz/contentf?doc=25735_zakon_respubliki_uzbekistan-_ot_14_06_1991_g_n_289-xii_o_svobode_sovesti_-_i_religioznyh_organizaciyah_(novaya_redakciya)_(utverjdjena_zakonom_ruz_ot_01_05_1998_g_n_618-i)&products=1_zakonodatelstvo_respubliki_uzbekistan.) (Մուսը՝ 20.01.2020):

21. Տե՛ս <https://www.refworld.org/docid/453883fb22.html%D6%89> (Մուսը՝ 20.01.2020):

22. Տե՛ս **Баятян против Армении** [Bayatyan v. Armenia] (жалоба № 23459/03) Постановление от 27.10.2009 [Третья Секция].

23. Տե՛ս **Lang v Austria**, HUDOC (2009), 51 EHRR 700, **Koppi v. Austria**, HUDOC (2009), 52 EHRR 411.

թյունից հրաժարվելու կեղծ շարժառիթով՝ վնասելով ոչ միայն հասարակական բարօրությունը, այլև պետական անվտանգությունը: Ակնհայտ է, որ այստեղ բախվում են անձնական համոզմունքի ու պետական շահի երկընտրանքը, և ելակետային է պարզել՝ նման հրաժարումն իսկապես պայմանավորված է կրոնական աշխարհայացքով, թե՛ զինվորական ծառայությունից խուսափելու միջոց է՝ այդպիսով չարաշահելով կրոնական համոզմունքն արտահայտելու ազատության իրավունքը: Առանձին պետություններում նման չարաշահման դեմ պայքարի գործուն միջոց է այն, որ իրավասու մարմինները չեն սահմանափակվում միայն *անձի խոսքովանությանը*, այլ տարբեր կառուցակարգերի միջոցով ստուգում են այդ իրողության հավաստիությունը՝ ներգրավելով, օրինակ, կրոնական ոլորտի ներկայացուցիչների, զինվորական հոգեբանների և այլ անկախ մասնագետների: Խնդիրն առավել ընդգծված բնույթ է ստանում ոչ թե ամբողջական ծառայությունից, այլ դրա ընթացքում տեղի ունեցող որոշակի ռազմական գործողություններից հրաժարվելու պարագայում՝ ինքնին հանդիսանալով ոչ թե «խղճի թելադրանքի, այլ՝ քաղաքական հաշվարկի հետևանք»²⁴: Հայաստանի Հանրապետության օրինակով Եհովայի վկաներ կազմակերպության անդամները, ելնելով իրենց կրոնական համոզմունքներից, հրաժարվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայելուց՝ ողջամտորեն բորբոքելով հասարակության հակազդեցությունը և ինչ-որ տեղ նաև անհանդուրժող վերաբերմունքը: Կարծում ենք, որ նորանկախ շրջանում պետք է օր առաջ սահմանվի կրոնական անվտանգության հայեցակարգը, որտեղ կսահմանվեն ինչպես պետության կրոնական քաղաքականության իրականացման ուղենիշները, այնպես էլ՝ հասարակության բարոյաֆիզկական անվտանգությանն սպառնացող մարտահրավերները: Մեր համոզմամբ՝ նման նախաձեռնությունը կնպաստի նաև կրոնական համոզմունքն արտահայտելու ազատության իրավունքի՝ հնա-

րավոր չարաշահումների բացառմանը կամ ռիսկերի նվազեցմանը:

Իրավաբանական գրականությունում հիշատակվող կրոնական համոզմունքի ազատության իրավունքի չարաշահման առավել տարածված տեսակներից է կրոնական աշխարհայացքը, համոզմունքները մեկ այլ անձի պարտադրելը (անհատի, խմբի կողմից)²⁵: Հատկանշական է, որ քննարկվող հիմնական իրավունքի պաշտպանության առարկան ներառում է նաև այլ անձանց համոզելու կամ սովորեցնելու ձևով կրոնական այս կամ այն գաղափարախոսությանը հակելու ազատությունը: ՄԻԵԴ-ն ընդգծում է, որ դա ընդգրկվում է կրոնական համոզմունքն ընտրելու, այն փոխելու ազատության մեջ²⁶: Այստեղ հարց է առաջանում, թե ինչ չափանիշներով պետք է տարանջատել նման ձևով քննարկվող ազատության կիրառումը սուբյեկտիվ իրավունքի չարաշահումից: Թերևս այստեղ միակ հանգամանքը, որը կարող է որոշիչ լինել իրավական վարքի (չարաշահման ձևով) գնահատման համար, անձին, ում վրա կիրառվում է նման «ազդեցությունը», որևէ ձևով վնաս հասցնելու մեջ է: Դա կարող է դրսևորվել, օրինակ, անձին իր իրական համոզմունքներից, կրոնական հայացքներից շեղելով՝ բարոյական, հոգեբանական վնաս պատճառելու մտադրությամբ:

Ինչպես նշվեց, քննարկվող հիմնական իրավունքի պաշտպանության առարկան ներառում է նաև այլ անձանց համոզելու կամ սովորեցնելու ձևով կրոնական այս կամ այն գաղափարախոսությանը հակելու ազատությունը: Այս իմաստով, որպես տեսական մոդել, հնարավոր է, որ որևէ կրոնական գաղափարախոսություն կրող անձ կամ կազմակերպություն, նպատակ ունենալով վնասել «պոպուլիստիկ զոհի» ամուսնաընտանեկան հարաբերությունները, օգտագործում է իր համոզմունքները: Այստեղ կարծում ենք՝ առկա է սուբյեկտիվ իրավունքի չարաշահում այն տրամաբանությամբ, որ նման քարոզը պետք է ուղղված լինի վնասելու ամուսնաընտանեկան հարաբերու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

24. Տե՛ս Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, «Ասողիկ» էջ 114:
 25. Տե՛ս **Мордовцева Т. В.**, Этические и юридические аспекты злоупотреблений правом в сфере свободы совести и вероисповедания. Журнал Юристы - Правоведь, 2013. С. 18.
 26. Տե՛ս Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения. Под общ. ред. д.ю.н. **В. А. Туманова**, д.ю.н. Л. М. Энтина. Изд. НОРМА, -М, 2002. С. 148.

թյունները և ոչ թե սեփական կրոնական հայացքները ներկայացնելու ճանապարհով անձին ներքաշել կոնկրետ կրոնական միավորի շարքերը: Ինչպես իրավացիորեն նշվում է իրավաբանական գրականության մեջ՝ նման դեպքերում հնարավոր են անձի՝ սեփական ընտանիքից հեռանալու, վերջիններիս հետ կապերը խզելու իրավիճակներ: Ընդգծվում է, որ առանձին կրոնական միավորների գաղափարախոսության մաս են կազմում այնպիսի կոչերը, որոնք ունեն հետևյալ բովանդակությունը. «աշխարհի վերջից փրկվել հնարավոր է միայնակ» կամ «ձեր ընտանիքը ոչ թե ձեր կինը, երեխաները, ծնողները, քույրն ու եղբայրն են, այլ կոնկրետ կրոնական միավորի անդամները»²⁷: Նման գաղափարախոսության գոյությունը per se չարաշահում գնահատելը վիճելի է: Այստեղ կարևոր է այն, որ դա քարոզվում է կոնկրետ անձի ամուսնաընտանեկան հարաբերություններին վնասելու չար մտադրությամբ:

Իրավաբանական գրականությունում (Ա. Ա. Մալինովսկի) քննարկվող սուբյեկտիվ իրավունքի չարաշահման ձև է դիտարկվում ինքնասպանության հակելը: Ընդգծվում է նաև, որ այն «չպետք է շփոթել ինքնասպանության հակելու հանցակազմի հետ...»²⁸: Առանձին հեղինակներ չեն կիսում այդ տեսակետը՝ նշելով, որ օրենսդրությամբ դա հիմք է նման կրոնական կազմակերպության լիկվիդացիայի և դատական կարգով գործունեության դադարեցման համար²⁹: Այստեղ հեղինակն անուղղակի ձևով ակնարկ է կատարում նաև առանձին անձանց ինքնասպանության հակելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Հակված ենք կիսելու հեղինակի մտահոգությունն առանվազն այն տեսանկյունից, որ եթե ինքնասպանության հակելը նման կրոնական կազմակերպությունների և խմբերի գործունեության դադարեցման հիմք է, ապա դա բավարար է՝ իրավական վարքագիծը սուբյեկտիվ իրավունքի չարաշահում չգնահատելու համար, քանզի գործ ունենք փաստացի իրավախախտման հետ:

Նկատենք, որ ՀՀ օրենսդրության շրջանակներում քննարկվող հարցը, մեղմ ասած, անմխիթար վիճակում է: Մասնավորապես, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե այն ի թիվս այլ պայմանների (որոնք թվակարված են 5-րդ հոդվածում) չի հակասում սույն օրենքի 3-րդ հոդվածի դրույթներին»: Օրենքի 3-րդ հոդվածի մեկնաբանության արդյունքում կարել է պարզել, որ քաղաքացիների խումբը չպետք է ճանաչվի որպես կրոնական կազմակերպություն, եթե ունենա ժամերգությունների, կրոնական ծիսակատարությունների և արարողությունների ժամանակ կրոնի ուսուցմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ քաղաքացիների վերաբերմունքը որոշելիս նրանց (քաղաքացու) նկատմամբ հարկադրանք կամ բռնություն կիրառելու նպատակ: Հատկանշական է, որ այստեղ խոսքն իրավաբանական անձ ճանաչելու մասին չէ: Ինչ վերաբերում է կրոնական համայնքի կամ կազմակերպության իրավասուբյեկտության ճանաչմանը (որպես իրավաբանական անձ), ապա մինչև կրոնի գործերով պետական լիազորված մարմնի փորձագիտական եզրակացությունը ստանալը կրոնական կազմակերպությունը պետք է ներկայացնի Օրենքի 5-րդ հոդվածի պայմանները հավաստող փաստաթուղթ: Քննարկվող իմաստով քաղաքացու նկատմամբ հարկադրանք կամ բռնություն կիրառելու նպատակներ չհետապնդելու վերաբերյալ տեղեկատվության աղբյուր պետք է հանդիսանա տվյալ կրոնական հանրույթի՝ պատմականորեն կանոնացված սուրբ գիրքը: Եթե Օրենքի 3-րդ հոդվածում նշված «բռնություն» եզրույթը մեկնաբանենք որպես անձի մոտ «այլ միջոցով» (քրեաիրավական իմաստով հաշվի առնելով այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդված, որը պատասխանատվություն է նախատեսում ինքնասպանության հակելու համար, բացի հորդորը, խաբեությունը

27. Տե՛ս **Малиновский А.А.**, Злоупотребление субъективным правом. (теоретико-правовое исследование) М., Юрлитинформ, 2007. С. 82-83.
 28. Տե՛ս նույն տեղում, էջ 96:
 29. Տե՛ս **Мордовцева Т. В.**, Этические и юридические аспекты злоупотреблений правом в сфере свободы совести и вероисповедания. Журнал Юрист - Правоведь, 2013. С. 19-20.

անձի մոտ ինքնասպանություն կատարելու վճռականություն հարուցելու միջոցների շարքում նշում է խիստ վերացական «այլ միջոցով» ձևակերպումը՝ այս դեպքում հոգեբանական բռնությամբ ինքնասպանության հակելու վճռականություն հարուցելու համատեքստում, ապա ստացվում է, որ ՀՀ-ում ևս ինքնասպանության հակելու նպատակներ ունեցող կրոնական կազմակերպության գրանցումը Օրենքի 16-րդ հոդվածի հիմքով պետք է մերժվի կամ դադարեցվի դատարանի որոշմամբ:

Այն, որ հատկապես ՌԴ օրենսդրությամբ քննարկվող հիմքի առկայությունը նման կրոնական կազմակերպությունների գործունեության դադարեցման հիմք է, կարծես թե կասկած չի հարուցում: Սակայն այստեղ խնդիր ենք տեսնում նշված երևույթը չարաշահում կամ հանցանք որակելու իմաստով այն տեսանկյունից, թե արդյո՞ք ժամերգությունների, կրոնական ծիսակատարությունների ժամանակ ինքնասպանության հակելու հետ կապված խոսքերը բավարար են՝ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածի հատկանիշներով որակելու համար:

Այստեղ օբյեկտիվորեն ունենք պատճառահետևանքային կապի գնահատման խնդիր: Այն, որ որևէ գաղափարախոսություն իր հետևորդներին ինքնասպանության կոչեր է անում, դա անհրաժեշտ պայման է, բայց ոչ բավարար պատճառ նման գործողությունները հանցագործություն կամ չարաշահում որակելու համար: Այստեղ կարևորն այն է, որ ենթադրյալ չարաշահողը կամ հանցագործը նշված օբյեկտիվ պայմանին զուգահեռ օգտագործի մեկ այլ օբյեկտիվ պատճառ (օրինակ՝ կոնկրետ անձի հոգեկան ծանր վիճակը), որի արդյունքում էլ անձն ինքնասպան լինի: Այլ կերպ՝ միայն գա-

ղափարախոսական օբյեկտիվ պայմանն ի զորու չէ, չունի այն ներուժը, ինչն անձին ինքնասպանության կհակի: ՀՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ինքնասպանության հակելու համար, համաձայն որի՝ «Ինքնասպանության հակելը՝ հորդորելու, խաբեության կամ այլ միջոցով անձի մոտ ինքնասպանություն կատարելու վճռականություն հարուցելը, եթե անձն ինքնասպանությամբ կյանքին վերջ է տվել կամ ինքնասպանության փորձ է կատարել»: Արարքի՝ օբյեկտիվ կողմից գնահատման համար բավարար չէ միայն հորդորը. այն օբյեկտիվ անհրաժեշտ պայման է, բայց ոչ բավարար պատճառ՝ ինքնասպանություն գործելու կամ դրա փորձի համար: Քննարկվող օրինակում արարքը կորակվի 111-րդ հոդվածի հատկանիշներով, եթե բացի նման հորդորից, պոտենցիալ հանցագործի դիտավորությունն ուղղված լինի մեկ այլ օբյեկտիվ բավարար պատճառ օգտագործելով անձին ինքնասպանության հակելու համար: Այսինքն՝ այն պնդումները, որ զուտ օբյեկտիվ հորդորը կամ նման գաղափարախոսության ներկայացումն ինքնին հանցագործություն է, մեր կողմից ընդունելի չեն:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հակված չենք սպառնալ թվարկելու կրոնական համոզմունքի ազատության իրավունքի չարաշահման հնարավոր դեպքերը: Այսպիսով, կատարված վերլուծությունները թույլ են տալիս արձանագրելու, որ կրոնական համոզմունքի ազատության իրավունքի չարաշահման տակ պետք է հասկանալ այլ շահերի վնասելու նպատակով սուբյեկտիվ այդ իրավունքի այնպիսի իրացում, որի արդյունքում խոտորվում է վերջինիս գործառույթը, սոցիալական նշանակությունը և բարոյական առաքելությունը:



ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱԼ

ՀՀ փոխվարչապետի խորհրդական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱՄԹԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման համակարգերի լայնածավալ զարգացման համատեքստում կարևոր նշանակություն է ձեռք բերում էլեկտրոնային հաղորդակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծումը և էլեկտրոնային ծանուցումների գործիքակազմի օգտագործումը՝ իրավապահ համակարգի, դատարանների և վարչական մարմինների արդյունավետության բարելավման համար: Նշված խնդրի լուծման հրատապությունն առավել վառ է արտահայտվում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների ամենօրյա գործունեության ընթացքում՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատշաճ ծանուցելու հարաբերությունների շրջանակում: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ ծանուցման ժամանակակից և արդյունավետ համակարգերի առկայությունը կարևորվում է ծանուցմանն ուղղված ռեսուրսների ծախսատարության և ժամանակատարության կրճատման, վարչարարության պարզեցման, ինչպես նաև տարբեր վարույթների շրջանակում անձանց իրավունքների ապահովման և արդյունավետ պաշտպանության տեսանկյունից: Վերջինը հատկապես վառ է արտահայտվում դատական համակարգում ծանուցումների խնդրի համատեքստում,

ինչը կարևոր գործոն է նաև ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի երաշխավորման տեսանկյունից:

Այսպես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի»¹ (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 63-րդ² հոդվածի 1-ին մասը, արդար դատաքննության իրավունքի բովանդակության մեջ առանձնացնելով ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, իրավական համակարգում այն ապահովելու ուղղակի պարտականություն են սահմանում պետության համար³: Հետևաբար, հայրենական իրավական համակարգում պետք է անհրաժեշտ և բավարար կառուցակարգեր ներդրվեն, որոնք ուղղված կլինեն այս իրավունքի ապահովմանը⁴: Աշխարհի շատ երկրներ, բախվելով գործերի ծավալների կայուն դինամիկ աճի և, որպես հետևանք նաև, դատարանների գերծանրաբեռնվածության խնդիրներին, մշակել ու ներդրել են տարաբնույթ կառուցակարգեր, որոնք թույլ են տալիս կրճատել գործերի քննության տևողությունը, խնայել դատական համակարգի ռեսուրսները և նվազեցնել դատարանների բեռնվածությունը⁵:

1. Ընդունվել է 04.11.1950թ.: Ուժի մեջ է մտել 26.04.2002թ.: ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13):
2. Ընդունվել է 06.12.2015թ.: Ուժի մեջ է մտել 22.12.2015թ.: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:
3. Տե՛ս Վ. Հովհաննիսյան, Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում ՀՀ սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017, N 3 (24), էջ 67, հասանելի է՝ http://www.yсу.am/files/06V_Hovhannisyаn-1516339029-.pdf հղումով՝ 06.02.2020 թվականի դրությամբ:
4. Տե՛ս Վ. Հովհաննիսյան, Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2018, էջ 430, հասանելի է՝ http://www.yсу.am/files/26Vahe_Hovhannisyаn.pdf հղումով՝ 06.02.2020 թվականի դրությամբ:
5. Տե՛ս այս միտքը Ս. Մեղրյան, Հեռակա դատաքննության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան 2017, N 1 (22), հասանելի է՝ http://ysu.am/files/02S_Meghryan.pdf հղումով՝ 06.02.2020 թվականի դրությամբ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

Այս առումով հատկանշական է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) դիրքորոշումն առ այն, որ Կոնվենցիան պայմանավորվող պետություններին պարտավորեցնում է իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որ դատարանները կարողանան ապահովել 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, և որ ներպետական դատարանների ժամանակավոր ծանրաբեռնվածությունը չի հանգեցնում պետության պատասխանատվության, եթե պետությունն անհապաղ ձեռնարկում է նման իրավիճակը շտկելուն ուղղված արդյունավետ գործողություններ⁶: Պատահական չէ նաև ՄԻԵԴ-ի դիրքորոշումն այն մասին, որ Կոնվենցիան նշանակություն է տալիս այն հանգամանքին, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ընդհատումներով, որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը⁷:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրականացման խնդիրը կարևորվել է նաև միջազգային իրավական ասպարեզում: Մասնավորապես, Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի կողմից (CEPEJ) 2016 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված «Դատավարության եվրոպական ժամանակացույց» ուղեցույցի (այսուհետ՝ Ուղեցույց) 1-ին կետով սահմանվում է, որ «ժամանակացույց»-ն այն տևողությունն է, որի ընթացքում որոշակի քանակի կամ տոկոսի գործեր պետք է լուծվեն՝ հաշվի առնելով ընթացիկ (չավարտված) գործերի տևողությունը: Ուղեցույցի համաձայն՝ նման ժամանակացույց պետք է նախատեսել ոչ միայն քաղաքացիական, քրեական և վարչական, այլ նաև այլ գործերի համար (ընտանեկան, սնանկության, աշխատանքային և այլն)՝ հաշվի առնելով իրավական մշակույթը, **ընթացակարգային հարցերը, առկա և**

հասանելի ռեսուրսները⁸:

Վերը նշվածից կարելի է գալ այն եզրահանգմանը, որ գնալով առավել արդիական է դառնում պետության կողմից այնպիսի կազմակերպական կառուցակարգերի և մեխանիզմների ներդրումը, որոնք, ի թիվս այլ բաղադրիչների, հնարավորինս կերաշխավորեն անձանց իրավունքների ապահովումը: Նշվածի համատեքստում հակիրճ անդրադառնանք տարբեր օրենսդրական ակտերով նախատեսված ծանուցումների հարցերի կարգավորմանը՝ փորձելով վեր հանել առկա խնդիրները և նախանշելով դրանց լուծման հնարավոր ուղիները: Ըստ այդմ՝ հերթականությամբ անդրադառնանք վարչական վարույթի, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության շրջանակում ծանուցումների հարցերի լուսաբանմանը:

Ծանուցումները վարչական վարույթի շրջանակում:

Վարչական վարույթի շրջանակում ծանուցման հետ կապված հարցերը կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով⁹ (այսուհետ՝ Օրենք): Չմանրամասնելով Օրենքի կարգավորումները՝ հարկ է միայն նշել, որ Օրենքում օգտագործվում են «ծանուցելով դիմողին», «ծանուցելով վարչական վարույթի մասնակիցներին», «պատշաճ ծանուցելով դիմողին» եզրույթներն առանց ներկայացնելու ծանուցման մանրամասները և ծանուցման եղանակները: Օրենքը մանրամասն կարգավորում է վարչական ակտի հանձման հարցերը՝ որպես հնարավոր եղանակներ մատնանշելով պատվիրված փոստով ակտը հանձնելը, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակները, որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ պատշաճ ծանուցված լինելու փաստը: Այսինքն՝ Օրենքը թույլատրում է հանձնման

6. Տե՛ս http://www.yso.am/files/06V_Hovhannisyan-1516339029-.pdf և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի նոյեմբերի 4-ի կոնվենցիայի մեկնաբանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը». գիտական խմբագիր Գ. Հարությունյան, Եր., 2005, էջ 212-214:
 7. Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.10.1989 թվականի Հ. ընդդեմ Ֆրանսիայի գործով 10073/82 վճիռը:
 8. Տե՛ս European Commission for the Efficiency of Justice (CEPEJ), Towards European Timeframes for Judicial Proceedings, Implementation Guide, CEPEJ(2016)5E 07, 2016:
 9. Ընդունվել է 18.02.2004թ.: Ուժի մեջ է մտել 31.12.2004 թ.: ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413:

ցանկացած եղանակի ընտրություն և ազատություն վարչական մարմնի համար միայն այն պայմանով, որ այդ եղանակներն ակտը ստանալու փաստը հավաստելու հնարավորություն ընձեռեն: Այնուամենայնիվ, հարկ է արձանագրել, որ ներկայիս դրությամբ գործնականում ծանուցումների գերակշիռ մասն իրականացվում է թղթային եղանակով՝ անձամբ հանձնելու կամ փոստային ծառայությունների միջոցով: Այս պարագայում մեծ է ծանուցումները չստանալու պատճառով վարույթի ձգձգման կամ բողոքարկելու ռիսկը:

Ծանուցումները քաղաքացիական դատավարությունում: Դատական ծանուցումների և դատավարական փաստաթղթերի ուղարկման, հանձնման հետ կապված հարաբերություններն առավել մանրամասն կարգավորված են ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգրքը)¹⁰ 9-րդ գլխով: Հարկ է արձանագրել, որ Օրենսգրքով ծանուցման հարցի կապակցությամբ որդեգրվել է արդի ժամանակաշրջանին և առկա տեխնոլոգիական հնարավորություններին համահունչ մոտեցում. մասնավորապես, Օրենսգրքով (94-րդ հոդված 4-րդ մաս) որպես դատական ծանուցագրերի հանձնման եղանակ առանձնացվում է ոչ միայն պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ ուղարկելը, առձեռն հանձնելը, այլև էլեկտրոնային հաղորդակցության միջոցով առաքելը:

Այսպես՝ Օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասով որպես պահանջ է սահմանվում պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով պետական և տեղական ինքնակառավարման մարմնին, իրավաբանական անձին, անհատ ձեռնարկատիրոջը, ինչպես նաև փաստաբանի կարգավիճակ ունեցող ներկայացուցչին հասցեագրված դատական ծանուցագիրն ուղարկելը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման եղանակով ծանուցում իրականացնելն անհնար է: Ընդ որում, նշված սուբյեկտներն են կրում դատական ծանուցագիրը չկարդալու անբարենպաստ հետևանքները (97-րդ հոդված, 3-րդ մաս): Բացի այդ, նույն հոդվածի 2-րդ մասով դատավարության մասնակիցները դատարանին կարող են գրավոր ներկայացնել իրենց

հաղորդակցության միջոցները՝ միջնորդելով ծանուցումը կատարել այդ միջոցով: Այդուհանդերձ, գործնականում այս դրույթներն ամբողջովին կամ մասամբ չեն կիրառվում և ծանուցումները մեծամասամբ իրականացվում են թղթային եղանակով: Դատական ծանուցագիրն էլեկտրոնային փոստին ուղարկելու դեպքում գործին կցվում է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստումը (97-րդ հոդված 4-րդ մաս): Սակայն գործնականում այս դրույթը ևս ամբողջովին չի գործում:

Օրենսգրքով նախատեսված են նաև էլեկտրոնային ծանուցման այլ ձևեր, որոնք թեպետ թեթևացնում են դատական ծառայողների կողմից իրականացվող վարչարարության բեռը, սակայն կարող են հանգեցնել անձանց՝ պատշաճ ծանուցված լինելու իրավունքի խախտման: Մասնավորապես, Օրենսգրքով (97-րդ հոդված 5-րդ մաս) սահմանված է, որ «Հայցադիմումը (...) վարույթ ընդունելու մասին որոշումը, գործին մասնակցող անձ ներգրավելու որոշումը կամ դատական ծանուցագիրն ստանալու օրվանից (...) գործին մասնակցող անձը հերթական դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ ծանուցվում է դատական իշխանության պաշտոնական կայքում համապատասխան տեղեկությունները տեղադրելու միջոցով: Գործին մասնակցող անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ՝ գործով դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ դատական իշխանության պաշտոնական կայքից տեղեկություններ ստանալու համար: Նա պարտավոր է գործը քննող դատարանին անհապաղ գրավոր տեղեկացնել դատական իշխանության պաշտոնական կայքից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման դեպքում դատարանը ծանուցումն իրականացնում է սույն օրենսգրքի 94-րդ հոդվածով նախատեսված այլ եղանակներով»: Այս առումով ակնհայտ է, որ արդի ժամանակաշրջանում պետք է ներդրվեն այնպիսի թվային գործիքներ, որոնք առնվազն պետք է ապահովեն պաշտոնական էլեկտրոնային փոստին նման ծանուցումները ուղարկելու հնարավորությունը:

10. Ընդունվել է 09.02.2018թ.: Ուժի մեջ է մտել 09.04.2018թ.: ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208:

Ծանուցումները քրեական դատավարությանում: Քրեական դատավարության օրենսգրքի¹¹ վերլուծությունը ևս վկայում է, որ քրեական դատավարության ընթացքում ծանուցումն իրականացվում է հիմնականում փաստաթղթերը վարույթի մասնակիցներին առձեռն կամ փոստին հանձնելու միջոցով:

Ծանուցումները վարչական դատավարությանում: Վարչական դատավարության օրենսգրքի¹² (գլուխ 11) նույնպես մանրամասն կարգավորել է ծանուցումների հետ կապված հարաբերությունները: Ի տարբերություն քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Վարչական դատավարության օրենսգրքը (հոդված 63) «Պատշաճ ծանուցում» եզրույթի տակ ամրագրում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքով¹³ սահմանված կարգով ծանուցագրի հանձնումը, իսկ իրավաբանական անձանց ծանուցումը կատարվում է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի¹⁴ 10-րդ հոդվածով սահմանված կարգով: Նույն հոդվածի 8-րդ մասը պատշաճ ծանուցում է դիտարկում նաև դատավարության մասնակիցների կամ նրանց ներկայացուցիչների ծանուցումը «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքով՝ ինտերնետի միջոցով անհատական ծանուցման համար նախատեսված կարգով:

Վարչական վարույթի, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության շրջանակում ծանուցումների իրավական կարգավորումների վերլուծությունից կարելի է առանձնացնել ՀՀ ծանուցումների համակարգում առկա հետևյալ հիմնական խնդիրները.

1. Ծանուցումները, հիմնականում, իրականացվում են թղթային եղանակով՝ նույնիսկ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված է էլեկտրոնային եղանակով ծանուցելու հնարավորություն կամ սահմանված է նման եղանակով ծանուցման պարտադիր պահանջ,

2. Ծանուցումների համակարգում առկա թերությունների արդյունքում երկար, ծախսա-

տար և անարդյունավետ են դառնում վարչարարությունն ու դատական գործընթացները,

3. Ծանուցումների համակարգում առկա թերությունները լուրջ վտանգ են ներկայացնում նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների խախտման տեսանկյունից,

4. արդյունավետ չեն օգտագործվում պաշտոնական էլեկտրոնային փոստի ընձեռած հնարավորությունները (առկա կարգավորվումները, իրենց հերթին, թերի են):

Այսպես՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է միայն կողմերի համաձայնության դեպքում ծանուցումն ստանալուն հաջորդող հինգերորդ օրվանից պատշաճ ծանուցված համարվելու հնարավորություն, եթե առկա է ծանուցումը ստանալու մասին էլեկտրոնային հավաստում՝ նույնիսկ այն պարագայում, երբ բացակայում է այն կարգալու մասին էլեկտրոնային հավաստումը: Մնացած դեպքերում նույն հոդվածի կարգավորումների (10-րդ հոդված, 3-րդ մաս) համաձայն՝ ծանուցումն ուղարկող մարմինը կարգալու մասին հավաստումը չստանալու պարագայում կրկին այն ուղարկում է փոստով՝ պատվիրված նամակի տեսքով:

Այսպես՝ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցումները չընթերցելու դեպքում ծանուցող մարմինն ի վերջո այն ուղարկում է թղթային տարբերակով և հետևաբար ստացվում է, որ առաքման ծախսերը չեն նվազում, այլ հակառակը՝ փոստային ծախսերին գումարվում են նաև էլեկտրոնային ծանուցման վրա կատարվող ծախսերը: Այս պայմաններում պետական մարմինները նախընտրում են ծանուցումները միանգամից ուղարկել փոստային եղանակով՝ հավելյալ ծանրաբեռնվածությունից և ծախսերից խուսափելու համար.

4. տարբեր իրավական ակտերով ծանուցումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են տարբեր կերպ՝ նախատեսելով ծանուցումների ոչ միանման ընթացա-

11. Ընդունվել է 01.07.1998թ.: Ուժի մեջ է մտել 12.01.1999թ.: ՀՀՊՏ 1998.09.21/22(55):
 12. Ընդունվել է 05.12.2013թ.: Ուժի մեջ է մտել 07.01.2014թ.: ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1:
 13. Ընդունվել է 09.04.2007թ.: Ուժի մեջ է մտել 26.05.2007թ.: ՀՀՊՏ 2007.05.16/25(549) Հոդ.609:
 14. Ընդունվել է 09.04.2007թ.: Ուժի մեջ է մտել 26.05.2007թ.: ՀՀՊՏ 2007.05.16/25(549) Հոդ.610:

կարգեր և տարաբնույթ եղանակներ, ինչը ծանուցագրի հասցեատիրոջ համար չի ապահովում ծանուցման ընթացակարգի կանխատեսելիությունը, մինչդեռ միատեսակ մոտեցման որդեգրումը (հաշվի առնելով նաև առանձին վարույթների առանձնահատկությունները) կապահովեր ծանուցման ողջ պրոցեսի որոշակիությունը ոչ միայն ծանուցագրի հասցեատիրոջ, այլև դրանք ուղարկողի համար, կթեթևացներ իրավասու մարմինների աշխատանքի ծանրաբեռնվածությունը, կնպաստեր նաև ծախսվող ռեսուրսների և ժամանակի խնայողությանը:

Այս տեսանկյունից մենք կարծում ենք, որ խնդրի լուծման գործուն տարբերակ կարող է լինել պաշտոնական ծանուցումների միասնական համակարգի ստեղծումը (այսուհետ՝ Պաշտոնական ծանուցումների համակարգ)՝ այն գրանցելով e-notification.am կամ համանման այլ տիրույթում:

Ուշադրության է արժանի նաև այն, որ համանման համակարգեր են գործում այլ երկրներում ևս: Այսպես՝ **Միացյալ Թագավորություն**¹⁵: <https://www.thegazette.co.uk> կայքում տեղադրվում են պաշտոնական հրապարակային ծանուցումներ. ընդ որում, դրանք կարող են տեղադրվել միայն գրանցված և իրավասու սուբյեկտների կողմից, օրինակ՝ սնանկության գործով կառավարիչներ, փաստաբաններ և այլն¹⁵: **Դանիայում** դեռևս 2011 թվականից ֆիզիկական անձանց և բիզնես ոլորտի ներկայացուցիչների համար պարտադիր է թվային փոստի առկայությունը: Թվային փոստը օգտագործվում է վերջիններիս և պետական մարմինների միջև հաղորդակցության նպատակով¹⁶: Պաշտոնական էլեկտրոնային փոստին ստացված նամակներն ընթերցելու և համապատասխան գործողություններ կատարելու պարտականությունը կրում է քաղաքացին¹⁷: **Շվեդիայում** չնայած պետական մարմինների կողմից քաղաքացու հետ թվային կապի ապա-

հովմանն ուղղված միջոցառումների ձեռնարկմանը՝ փոստային արկղերը հիմնականում սպասարկվում են մասնավոր կազմակերպությունների կողմից¹⁸: Խորվաթիայում, իր հերթին, 2014 թվականի հունիսից գործարկվել է e-citizen հարթակը, որի միջոցով քաղաքացիներին մատուցվում է 54 էլեկտրոնային ծառայություն: e-citizen հարթակի միջոցով իրավասու մարմիններն օգտատերերի անհատական էլեկտրոնային փոստերին կարող են ուղարկել 66 տեսակ անհատականացված էլեկտրոնային նամակներ, տարբեր բնույթի ծանուցումներ¹⁹: Ինչպես տեսնում ենք, այլ երկրները ևս հետևողական քայլեր են ձեռնարկում ծանուցումների համակարգի կատարելագործման և հատկապես էլեկտրոնային եղանակների կիրառման ծավալների շարունակական ընդլայնման կապակցությամբ:

Գտնում ենք, որ ՀՀ-ում ևս պաշտոնական ծանուցումների համակարգ ստեղծելու և գործարկելու կարևորությունը բխում է այն հանգամանքից, որ ցանկացած մարմին քաղաքացու կամ իրավաբանական անձի հետ պաշտոնապես հաղորդակցվելու և օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցելու համար չի ստեղծելու ծանուցման առանձին համակարգ, այլ պաշտոնական ծանուցումն ուղարկելու է պաշտոնական ծանուցումների միասնական համակարգի միջոցով, որն էլ, իր հերթին, օրենսդրությամբ սահմանված հերթականությամբ և եղանակերով (պաշտոնական էլ. փոստ, հիբրիդ կամ թղթային փոստ, հրապարակային ծանուցումների միասնական հարթակ, էլ. հաղորդագրության այլ եղանակներ) կիրականացնի անձի ծանուցումը և համապատասխանաբար ծանուցումն ուղարկող մարմին (համակարգին) հետադարձ եղանակով կտեղեկացնի ծանուցման ընթացքի վերաբերյալ: Ընդ որում, ծանուցումն ուղարկող համակարգը պետք է հնարավորություն ունենա նաև առանց

15. Տե՛ս <https://www.thegazette.co.uk/about> կայքը, հասանելի է 06.02.2020թ. դրությամբ:

16. Տե՛ս A stronger and more secure digital Denmark, Digital Strategy 2016-2020, Agency for Digitization, 2016, էջ 13, հասանելի է https://digst.dk/media/16165/ds_singlepage_uk_web.pdf հղումով՝ 06.02.2020 թվականի դրությամբ:

17. Տե՛ս <https://lifeindenmark.borger.dk/Living-in-Denmark/Digital-Post>, հասանելի է 06.02.2020թ. դրությամբ:

18. Տե՛ս Digital Government Review of Sweden, towards a data-driven public sector, OECD Digital Government studies, 2018, հասանելի է <https://www.oecd.org/gov/digital-government/digital-government-review-of-sweden-2018.pdf> հղումով, էջ 5:

19. Տե՛ս Digital Government Factsheet 2019, Croatia, 2019, էջ 22:

մարդու միջամտության ինքնաշխատ եղանակով ապահովել գործի հետագա ընթացքը, եթե հասցեատերը ստացել է ծանուցումը: Հարկ է նշել նաև, որ պաշտոնական ծանուցումների միասնական համակարգ ստեղծելու արդյունքում անհրաժեշտ է նաև վերանայել ՀՀ քաղաքացիական, վարչական դատավարության,

քրեական դատավարության օրենսգրքերը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև հարակից այլ իրավական ակտերը՝ փորձելով հնարավորինս միասնականացնել ծանուցումների հարցերին վերաբերելի կանոնակարգումները:



ԷՂԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«ԱՐԱՐԱՏՔԱՆԿ» ԲԲԸ, իրավաբան,
ՀԵՀ մագիստրատուրայի ուսանող

**ՄՈՌԱՅՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՂԵՍ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՔ**

Մոռացված լինելու իրավունքի ճանաչման օբյեկտիվ անհրաժեշտությունն առաջացավ տեղեկատվական տեխնոլոգիաների տարածմամբ, որի արդյունքում ցանկացած անձ միայն ինտերնետային հասանելիության առկայությամբ հնարավորություն ունեցավ ծանոթանալ այլ անձանց վերաբերող ցանկացած տեղեկատվության՝ ծննդյան օրվանից մինչև ներկա գործունեություն: Համացանցի ստեղծմամբ ձեվավորվեց այնպիսի հարթակ, որը ցանկացած անձի հնարավորություն տվեց համացանցում տեղադրելու ցանկացած տեղեկատվություն (տեքստային, լուսանկարի և տեսանյութի տեսքով)՝ այդ թվում տեղեկատվություն ոչ միայն իրենց, այլ նաև այլ անձանց վերաբերյալ: Համացանցում տեղեկատվություն տեղադրողները պետք է գիտակցեն, որ տվյալ տեղեկատվությունը համացանցում մնալու է հավերժ:

Նման պարագայում հաճախ համացանցում հայտնվում է տվյալ անձի համար ոչ ցանկալի տեղեկատվություն (երբեմն ոչ հավաստի ու ոչ իրական աղբյուրներից): Համացանցի բարդ վերահսկման հատկությունը նաև դրանում տեղեկատվության տեղադրման ու տարածման հետ է կապված: Արդյունքում առաջանում է մի իրավիճակ, երբ համացանցում տեղադրվող ու տարածվող տեղեկատվությունը հաճախ առաջացնում է անձանց իրավունքների խախտումներ:

Նման իրավիճակում էլ հենց անհրաժեշտություն առաջացավ կիրառել մի նոր՝ մոռացված լինելու իրավունքը: Համաձայն Ռոլֆ Վեբերի՝ մոռացվելու իրավունքն անհատի իրավունքն է՝ պահանջել վերացնել իրեն վերաբերող

որոշակի ինֆորմացիա, որն անհասանելի կդառնա երրորդ անձանց համար¹: Այլ խոսքով՝ մոռացված լինելու իրավունքը, ամենալայն բնորոշմամբ, անձի վերաբերյալ արդիականությունը կորցրած, ինչպես նաև ոչ հավաստի, վիրավորանք ու զրպարտություն պարունակող տեղեկատվությունը համացանցից վերացնելու՝ նրա իրավունքն է:

Մոռացված լինելու իրավունքը հայտնվել է դեռևս շատ տարիներ առաջ և մինչև միջազգայնորեն ճանաչվելը դրսևորվել է տարբեր դատական գործերով: Օրինակ՝ 1990 թ. Իտալիայի Գերագույն դատարանը հակաօրինական ճանաչեց Messaggero թերթի գործունեությունը, որն իր էլեկտրոնային կայքում դրել էր դատվածությունը վաղուց մարված և բնականոն կյանքի վերադարձած նախկին հանցագործի նկարը: Այս տեղեկատվության վերհիշումը ճանաչվեց հասարակական նշանակություն չունեցող և Մարիո Կեզան, որն արդեն պաշտոնյա էր, դատական կարգով ստացավ այդ տեղեկատվության ոչնչացման իրավունքը: Հետագայում մեկ այլ նմանատիպ՝ Ջուլիա Կարադոննայի գործով Օրտոնա քաղաքի դատարանը Primadanoi էլեկտրոնային կայքին ենթարկեց 17 հազար եվրո տուգանքի իր արխիվում գտնվող երկու գործարարների մասին դատական գործի վերաբերյալ նյութերի ոչնչացման պահանջը մերժելու համար: Դատարանը նշեց, որ բավականին ժամանակ է անցել այդ դեպքից և այդ տեղեկատվությունն արդեն հասարակական հետաքրքրություն չի առաջացնում: Արդյունքում, այդ տեղեկատվությունը ոչնչացվեց նշված կայքի արխիվից²:

1. Weber H. Rolf The Right to Be Forgotten: More than a Pandora box? <https://www.jipitec.eu/issues/jipitec-2-2-2011/3084/>.
2. Punto Informatico Italia, diritto di cronaca nell'oblio, <https://www.punto-informatico.it/italia-diritto-di-cronaca-nellobloio/>.

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

ՀՀ-ում ևս եղել են դատական գործեր, որոնցով շոշափվել է մոռացված լինելու իրավունքը և որտեղ հայցվորները պահանջել են ինտերնետային կայքից հեռացնել արդիականությունը կորցրած կամ պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություններ պարունակող նյութը: Օրինակ՝ «Լիլիթ Հովհաննիսյանն ընդդեմ «ԲլոգՆյուզ.ամ» լրատվական կայքի գլխավոր խմբագիր Արամ Անտինյանի» գործով հայցվորը բացի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքումից, պահանջել էր նաև նման տեղեկատվություն պարունակող նյութը հեռացնել ինտերնետային տվյալ կայքից³: Ըստ վերոգրյալ դատական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դիրքորոշման՝ «նյութն ինտերնետային կայքից հեռացնելու պահանջը՝ որպես պարասխանարվության միջոց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 7-րդ կետով (վիրավորանքի դեպքում անձի կողմից դատական կարգով ներկայացվող պահանջները) նախատեսված չէ, իսկ Դատարանն իրավասու չէ կիրառել պարասխանարվության այնպիսի միջոց, որը նախատեսված չէ օրենքով...: Նյութը հեռացնելու պահանջը կարող է կատարվել «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի հիմքով արարադատական կարգով, իսկ դատական կարգով վեճի դեպքում՝ Հայցվորը կարող է պահանջել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 7-րդ կետով սպառիչ սահմանված պարասխանարվության միջոցներից մեկը կամ մի քանիսը»: Ինչպես տեսնում ենք, մոռացված լինելու իրավունքի՝ ՀՀ-ում չճանաչված լինելը պրակտիկայում առաջացնում է իրավունքի պաշտպանության որոշակի խնդիրներ:

Մոռացված լինելու իրավունքի՝ «օրենսդրական ծագումը» տեղի է ունեցել 2010 թվականին Ֆրանսիայում, որտեղ մշակվեց մոռացված լինելու իրավունքը նախատեսող առաջին օրենսդրական նախագիծը⁴: Արդյունքում, ըն-

դունվեց Մոռացված լինելու իրավունքի խարտիան, որը նախատեսում էր մոռացված լինելու իրավունքի կամավոր կիրառում խարտիային միացած կազմակերպությունների կողմից, մինչդեռ այնպիսի մեծ կազմակերպություններ, ինչպիսիք են, օրինակ, «Ֆեյսբուքը» և «Գուգլը», չմիացան խարտիային:

Հետագայում նույն թվականի նոյեմբերին, ԵՄ Հանձնաժողովն «Անձնական տվյալների պաշտպանության 95/46 հրահանգով» ստանձնեց մոռացված լինելու իրավունքի ճանաչումը, սակայն դրա պրակտիկ կիրառումը դեռևս անորոշ էր: Համաձայն ԵՄ՝ վերոնշյալ հրամանագրի՝ մոռացվելու իրավունքով անձը հնարավորություն էր ստանում պահանջելու՝ այլևս չմշակել և համացանցից հեռացնել իր վերաբերյալ ոչ անհրաժեշտ (օրինական նպատակներով չօգտագործվող) տեղեկատվությունը (2.1.3 կետ):

Այնուամենայնիվ, մոռացվելու իրավունքը, կարելի է ասել, առաջին անգամ միջազգայնորեն ճանաչվել և ամրագրվել է Եվրոպական միության արդարադատության դատարանի վճիռներից մեկում: 2014 թ. Եվրոպական միության արդարադատության դատարանը քննեց Իսպանիայի քաղաքացի «Մարիո Կոստեխա Գոնսալեսն ընդդեմ «Google-ի»» գործը: Քաղաքացու բողոքի էությունն այն էր, որ «Google»-ի որոնողական համակարգը շարունակում էր տվյալներ ներկայացնել ժամանակին պարտքերի դիմաց աճուրդի հանված իր տան վերաբերյալ այն պարագայում, երբ համապատասխան վարույթն արդեն մի քանի տարի էր, ինչ փակվել էր, և հետևաբար ներկայացված տվյալները բացի իր անձնական կյանքի անձեռնմխելիությունը ոտնահարելուց, ուրիշ ոչ մի բանի պիտանի չէին: 2014 թ. մայիսի 13-ի վճռի համաձայն՝ «Google»-ը պարտավորվեց ոչնչացնել այդ հոդվածի հղումը «Google»-ի Inc. ենթադոմենից՝ Իսպանիայի տարածքում հիմք ընդունելով 95/46 EC հրահանգը՝ չնայած տվյալները մշակվել էին ԱՄՆ տարածքում: Բուն տեղեկա-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

3. Թիվ ԵԱԲԴ/2638/02/14 քաղաքացիական գործ:
 4. «Համագործակցող և անհամ կայքերի որոնման համակարգերում մոռանալու իրավունքի կանոնադրություն», հոկտեմբերի 13, 2010: http://www.aidh.org/Actualite/Act_2010/Images/Charte_oubli_La_Charte.pdf.
 5. A comprehensive approach on personal data protection in the European Union, COM(2010) 609 final of November 4, 2010. <https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2010:0609:FIN:EN:PDF>.

տվությունը մնաց հասանելի La Van-guradia թերթի կայքում, իսկ «Google»-ի որոնողական հղումը հանվեց⁶:

Այս վճիռն առաջին դատական նախադեպն էր նմանատիպ գործերով: Կարևոր է, որ դատարանը որոշեց, որ այս գործը համընդհանուր չէ, իսկ մոռացվելու իրավունքը՝ բացարձակ: Նմանատիպ գործերով որոշումներ պետք է կայացվեն՝ կոնկրետ հանգամանքներ հաշվի առնելով, որպեսզի բացառենք մարդու՝ այս երկու հիմնարար իրավունքների (խոսքի և մամուլի ազատություն) հակասությունը և անհիմն սահմանափակումը:

Գործը շատ մեծ արձագանք ունեցավ. Եվրոպական Միության արդարադատության դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու առաջին իսկ օրը «Google»-ը 12000 դիմում ստացավ տեղեկատվության ոչնչացման պահանջով: «Google»-ը ստիպված եղավ ոչնչացնել այդ տեղեկատվությունը, սակայն 2014 թ. Եվրոպական Միության արդարադատության դատարանը նոր վճիռ ընդունեց, որի համաձայն՝ «Google»-ը պարտավոր չէ վերացնել այն տեղեկատվությունը, որը մարդիկ պահանջում են, քանի որ այն կարող է իրենից հասարակական հետաքրքրություն ներկայացնել, այս կամ այն նշանակություն ունենալ կամ վնասել հենց ոչնչացման պահանջ ներկայացնող անձի շահերը: Նմանատիպ դեպքերում մարդու անձնական անձեռնմխելիության և մոռացվելու իրավունքի հավասարակշռությունը պահպանելու համար «Google»-ը պետք է այդ գործը փոխանցի տվյալ պետության համապատասխան մարմին՝ գործակալությանը և միայն այդ մարմնի որոշումից հետո գործի⁷:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշ դատական գործերով ևս անդրադարձել է մոռացված լինելու իրավունքին: Հատկանշական է «Դելֆին ընդդեմ Էստոնիայի» գործը, որով ՄԻԵԴ-ն «ավելի հեռուն գնաց» և լրատվամիջոցի վրա պատասխանատվություն դրեց իր հրապարակած հոդվածի

տակ գրված ակնհայտ վիրավորական մեկնաբանությունները չհեռացնելու համար: Այսպես՝ 2006 թ. հունվարին «Delfi» լրատվամիջոցը հրապարակում է մի առևտրային ընկերության գործունեության մասին հոդված, որը հակասական արձագանքներ է ստանում: Շատ ընթերցողներ հոդվածի տակ թողնում են ընկերության հասցեին վիրավորական մեկնաբանություններ ու սպառնալիքներ, ատելության խոսք և բռնության կոչեր: Լրատվամիջոցն այդ մեկնաբանությունները չի հեռացնում իր կայքից, քանի որ համարում է, որ քանի դեռ ընկերությունը գրավոր չի ծանուցել քոմենթները հեռացնելու մասին, ինքը պարտավոր չէ դրանք հեռացնել սեփական նախաձեռնությամբ: Ընկերությունից գրավոր ծանուցումը ստացվում է վեց շաբաթանց: Այն ստանալուն պես լրատվամիջոցը քոմենթները հեռացնում է իր կայքից: Եվրոպական դատարանը որոշեց, որ քոմենթները հեռացնելու պարտականությունը լրատվամիջոցի համար ծագել էր ոչ թե ծանուցումը ստանալու պահից, այլ այն ժամանակից, երբ ընկերությունը տեղեկացել էր դրանց գոյության մասին: Տվյալ դեպքում փաստերը ցույց էին տալիս, որ լրատվամիջոցը տեղյակ էր խնդրին նախքան ծանուցում ստանալը, քանի որ այդ քոմենթներում առերևույթ վիրավորական արտահայտությունները և նույնիսկ ատելության խոսքն այն աստիճան բացահայտ էին, որ լրատվամիջոցը չէր կարող անտեղյակ լինել իր վերահսկման և կառավարման տիրույթում դրանց առկայության մասին: ՄԻԵԴ-ը, փաստորեն, տվյալ գործում Մարդու իրավունքների կոնվենցիայի 10-րդ հոդվածի (արտահայտվելու ազատություն) խախտում չի հայտնաբերել, քանի որ լրատվամիջոցը չէր գործել բարեխղճորեն⁸:

Միջազգային և տեղական պրակտիկայի՝ վերագրյալ ուսումնասիրությունը փաստում է քննարկվող իրավունքի կարևորությունն ու անհրաժեշտությունը: Թեև ՀՀ-ում դեռևս մոռացված լինելու իրավունքը ճանաչված չէ, iravaban.net լրատվական կայքն իր ընթերցող-

6. Google Spain SL, Google Inc. v. Agencia Espanola de Proteccion de Dators and Mario Costeja Gonzalez. Եվրոպայի արդարադատության դատարան, թիվ C-131/12, 13/05/2014թ. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62012CJ0131>.
 7. «Մոռացվելու իրավունքը՝ որպես մարդու անձնական անձեռնմխելիության իրավունքի բաղադրատար», Վ. Պողոսյան, Արդարադատություն ամսագիր, 2018-5, էջ 22.
 8. Դելֆին ընդդեմ Էստոնիայի, 16.06.2015թ. վճիռ:[https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-155105%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-155105%22]})
 9. <https://iravaban.net/the-right-to-be-forgotten-hy>.

ներին հնարավորություն է տվել դիմելու իրենց լրատվական կայքին՝ դիմումատուի վերաբերյալ նյութը հեռացնելու խնդրանքով⁹: Սրանով ևս մեկ անգամ ապացուցվում է քննարկվող իրավունքի ճանաչման կարևորությունն ու անհրաժեշտությունը ՀՀ-ում:

ՀՀ-ում գործող օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշակի նորմատիվ ակտերում տեղ գտած նորմերը կարող են որոշ չափով փոխարինել մոռացված լինելու իրավունքին և հասնել դրանով հետապնդվող նպատակին: Սակայն այդ ամենը կարող է իրականացվել միայն տվյալ նորմերի ճիշտ մեկնաբանման դեպքում:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը վիրավորանքի և զրպարտության դեպքում անձի կողմից ներկայացվող պահանջների սպառիչ ցանկի մեջ (հոդվ. 1087.1) չի ներառել նյութը համացանցից հեռացնելու պահանջը, ինչը, ինչպես տեսանք վերոգրյալ դատական գործով, անձանց հնարավորություն չի տալիս դատական կարգով վիրավորանք կամ զրպարտություն պարունակող նյութը հեռացնելու պահանջ ներկայացնել, հետևաբար՝ նաև մոռացված լինելու իրավունքին հետապնդող նպատակին հասնել:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն իրավունքի պաշտպանության եղանակների մեջ առանձնացնում է *մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելը* (հոդվ. 14-րդ, 2-րդ կետ): Եթե վիրավորանք պարունակող նյութ է տեղադրվել համացանցում և անձը պահանջում է վերականգնել մինչև իրավունքի խախտումը (վիրավորանք պարունակող նյութի տեղադրումը համացանցում) եղած դրությունը, ստացվում է, որ տվյալ նյութ տեղադրողը պետք է վերականգնի նախկին դրությունը (*մինչև համացանցում նյութը տեղադրելը եղած դրությունը, համացանցում տվյալ նյութ առկա չլինելու դրությունը*) և հեռացնի տվյալ նյութը համացանցից:

Մոռացված լինելու իրավունքը, ինչպես նշեցինք, ընդգրկում է նաև անձի վերաբերյալ արդիականությունը կորցրած, սակայն դեռևս

համացանցում գոյություն ունեցող տվյալների հեռացումը: Մոռացված լինելու իրավունքի՝ սույն նպատակին հասնելու որոշակի հնարավորություն է նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ կետով, որի համաձայն՝ դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Այս նորմի լայն մեկնաբանումը, մեր կարծիքով, կարող է հասցնել նաև տվյալ անձի քրեական գործի, դատվածության վերաբերյալ տվյալների՝ համացանցից հեռացմանը:

Այսպիսով, ինչպես վերոգրյալ ուսումնասիրությունը ցույց է տալիս, ՀՀ օրենսդրությունում առկա են նորմեր, որոնք միայն հստակ մեկնաբանման դեպքում կկարողանան հասցնել մոռացված լինելու իրավունքով հետապնդվող նպատակներին: Կարծում ենք՝ սա ոչ բավարար և անորոշ է: Այդ պատճառով առաջարկում ենք մոռացված լինելու իրավունքի ճանաչում ՀՀ-ում՝ համապատասխան օրենսդրությունում փոփոխություն կատարելով:

Առաջարկում ենք Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք) նախատեսել անձի՝ մոռացված լինելու իրավունքը, համաձայն որի՝ անձն իրավունք կունենա դիմելու անձնական տվյալներ մշակող մարմնին (այդ թվում անձի վերաբերյալ տվյալներ մշակող ցանկացած ինտերնետային կայքի) կամ դատարան՝ պահանջով, որ համացանցից հեռացվեն և երրորդ անձանց համար անհասանելի դարձվեն իր անձնական տվյալները (*անձնական տվյալ՝ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս*) կամ անձնական տվյալ պարունակող տեղեկատվությունն ամբողջությամբ¹⁰, որը՝

1. կորցրել է արդիականությունը և այլևս չի կարող հասնել այդ տվյալի հրապարակմամբ հետապնդվող նպատակին,
2. դատարանի վճռով ճանաչվել է վիրա-

10. Նշենք, որ տվյալ դեպքում մեր կողմից առաջարկվող տեղեկատվությունը համացանցից հեռացնել և երրորդ անձանց համար անհասանելի դարձնելը չպետք է նույնացվի Օրենքի իմաստով անձնական տվյալի ուղեփակմանը կամ ոչնչացմանը, քանի որ մեր առաջարկի դեպքում խոսքը գնում է միայն տեղեկատվության համացանցից հեռացման և երրորդ անձանց համար անհասանելի դարձնելուն, մինչդեռ ոչնչացում կամ ուղեփակում կարող է տեղի ունենալ առանց համացանցից տվյալի հեռացման:

վորանք կամ զրպարտություն պարունակող տեղեկատվություն,

3. պարունակում է ոչ հավաստի տեղեկատվություն: Տվյալ դեպքում տեղեկատվության ոչ հավաստի լինելն ապացուցում է նյութը հեռացնելու պահանջ ներկայացրած անձը:

Կարծում ենք՝ ներկայացված փոփոխությունները որոշ չափով կավելացնեն անձանց՝ օրեցօր ոտնահարվող և մեծ արդիականություն ունեցող իրավունքի խախտումների պաշտպա-

նության հնարավորությունը ՀՀ-ում: Մինչդեռ, հաշվի առնելով համացանցում առկա օտարերկրյա կայքերի մեծ թիվը (հիմնականում սոցիալական ցանցերում)՝ կարծում ենք, որ մեր կողմից առաջ քաշված մոտեցումները ևս բավարար չեն, քանի որ դրանք կարող են տարածվել միայն ՀՀ-ում գրանցված կայքերի վրա, իսկ ՀՀ-ում գործող օտարերկրյա կայքերի դեպքում խնդիրը կշարունակի մնալ չլուծված:



ԴԱԿԻԹ ՕՀԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՂՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացուն մահ պատճառելու դեպքում պատճառված վնասը կարող է արտահայտվել նաև մահացածի հուղարկավորության ծախսերի ձևով: Հետևաբար, տուժողի մահվան հետ կապված վնասի համար պատասխանատու անձինք պարտավոր են հատուցել հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերն այն անձին, որն այդ ծախսերը կատարել է: Այդ ծախսերը կատարած քաղաքացիների կողմից հուղարկավորության համար ստացած նպաստները չեն հաշվարկվում վնասների հատուցման հաշվում (քաղ. օր. 1087 հոդված): Պրակտիկ կիրառության տեսանկյունից բավականին վիճելի հարց է այս հոդվածում առկա «հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսեր» ձևակերպումը: Գործերից մեկով Վճռաբեկ դատարանն (այսուհետ՝ Դատարան) անդրադարձավ այդ խնդրին. «Հուղարկավորության ծախսերի հատուցումը պետք է լինի այն չափով, ինչ չափով ապացուցված է, որ այդ ծախսերն արվել են փաստացի և անհրաժեշտաբար ու ողջամիտ են իրենց ծավալով: 2006 թվականի փետրվարի 27-ին ընդունված «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի¹ (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը սահմանում է, որ սույն օրենքը կարգավորում է գերեզմանատների և դիակիզարանների շահագործման հետ կապված իրավահարաբերությունները և սահմանում է հուղարկավորության արարողությունների կազմակերպման պետական կարգավորման հիմնական սկզբունքներն ու պայմանները: Նշված օրենքի 2-րդ հոդվածում, որտեղ շարադրված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, հուղարկավորությունը բնորոշվում է որպես «մարդու մահից հետո նրա մարմինը հողին հանձնելու կամ դիակիզելու

արարողություն»: Օրենքի 16-րդ հոդվածը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածում նշված հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերի շարքն է դասում անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը, դիակերծումը, դագաղի հատկացումը, մահացածի մարմնի (ածյունի) տեղափոխումը գերեզմանատուն, հուղարկավորումը, մեղադրե ցուցաբերակի տեղադրումը: Հուղարկավորության հետ կապված ծախսերը պետք է լինեն ողջամիտ ըստ արժեքի և անհրաժեշտ ըստ նպատակահարմարության. դագաղի արժեքը, դիակերծարանի ծառայությունները, դագաղը գերեզման հասցնելը, գերեզման փորելը, թաղման ծիսակարգի ծախսերը (հուղարկավորման կարգը, արարողությունը եկեղեցում, հոգեհացը):

Ինչպես երևում է գործի նյութերից, հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերից, հուղարկավորության և հոգեհացի արարողության համար կատարվել են 643.000 ՀՀ դրամի ծախսեր, որոնք հաշվարկվել են Օրենքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ամբողջությամբ ընդգրկել են միայն հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը, որոնք արվել են փաստացի և անհրաժեշտաբար ու ողջամիտ են իրենց ծավալով և անատարկելիորեն ընդունվել են դատարանի մասնակիցների կողմից: Ինչ վերաբերում է **յոթերորդ, քառասուներորդ արարողությունների, գերեզմանի կառուցապատման և գերեզմանաքարի տեղադրման հետ կապված ծախսերին, ապա դրանք հանցագործությամբ անմիջականորեն պայմանավորված գույքային վնաս չեն**, դուրս են Օրենքով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածով սահմանված հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերից (տես 2007 թվա-

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

1. Stu՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=97874>.

կանի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-150/07 որոշումը)»²:

Վճռաբեկ դատարանի այս որոշումը տարակարծությունների տեղիք է տալիս:

Դատարանը գտնում է, որ Օրենքի 16-րդ հոդվածն ուղղակիորեն սպասարկում է ՀՀ քաղ. օր. 1087-րդ հոդվածին: Մասնավորապես, իր պատճառաբանական մասում Դատարանը գտնում է. «Օրենքի 16-րդ հոդվածը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087-րդ հոդվածում նշված հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսերի շարքն է դասում...»: Դժվար է պատկերացնել, թե ինչի հիման վրա է Դատարանն Օրենքի այդ հոդվածը դիտարկում որպես սպասարկող քաղ. օր. 1087-րդ հոդվածին: Արդյո՞ք միայն այն փաստը, որ երկու ակտերն էլ կարգավորում են համանման հարաբերություններ, բավարար է՝ եզրակացնելու է, որ դրանք ոչ միայն փոխկապակցված են, այլ նաև բլանկետային:

Օրենքի 1-ին հոդվածում, որը սահմանում է օրենքի կարգավորման առարկան և նպատակները, նշվում է հուղարկավորության արարողությունների կազմակերպման պետական կարգավորման հիմնական սկզբունքներն ու պայմանները³: Ստացվում է, որ սույն իրավական ակտի նպատակն է կարգավորել ոչ թե ցանկացած հուղարկավորության իրավահարաբերություն, այլ տալ այդ հարաբերությունների վերաբերյալ պետական մոտցումներ:

Սույն Օրենքի կարգավորումներով «շահառուներ» են հանդիսանում ոչ թե բոլոր հանգուցյալները, այլ հանգուցյալների որոշակի շրջանակ: Մասնավորապես, այդպիսի «շահառուներ» հանդիսանում են՝

1. ծառայողական գործունեության կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողները (Օրենքի 14-րդ հոդված),

2. ազատագրկման վայրերում, բուժհաս-

տատություններում, ծերանոցներում և մանկատներում մահացած անձինք (Օրենքի 15-րդ հոդված, 1-ին մաս),

3. այն քաղաքացիները, որոնց հուղարկավորության կազմակերպման գործը ստանձնողներ չկան (Օրենքի 15-րդ հոդված, 2-րդ մաս):

Ստացվում է, որ սույն Օրենքով պետությունը ցանկացել է կարգավորել առավել խոցելի խմբերի հուղարկավորության հարաբերությունները: Որոշ դեպքերում անմիջականորեն, որոշ դեպքերում համայնքների միջոցով⁴ պետությունն իր հոգածության տակ է վերցրել վերոթվարկյալ սուբյեկտներին: Պատահական չէ, որ Օրենքի 16-րդ հոդվածում թվարկված ծառայությունները օրենսդիրը համարում է **պարտադիր**:

Ստացվում է, որ դրանք այն նվազագույն ստանդարտներն են, որ պետությունը պարտավորվում է իրականացնել, երբ կա հանգուցյալ, բայց չկան հուղարկավորության կազմակերպման գործը ստանձնողներ: Հետևաբար, հարց է առաջանում՝ արդյո՞ք ճիշտ է վարվել Դատարանը, երբ արհեստական հավասարության նշան է դրել այս երկու իրավահարաբերությունների և այդ իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերի միջև: Կարծում ենք, որ ոչ:

Որպես իր որոշման լրացուցիչ հիմնավորում Դատարանը նշում է Օրենքի 16-րդ հոդվածում թվարկված միջոցառումներից դուրս կատարված բոլոր ծախսերը (յոթերորդ, քառասուներորդ օրվա արարողությունները, գերեզմանի կառուցապատում, գերեզմանքարի տեղադրում) **հանցագործությամբ⁵ անմիջականորեն** պատճառված գույքային վնասներ չեն⁶:

Դելիկտային պարտավորությունների առաջացման համար անհրաժեշտ է 4 տարրերի միաժամանակյա առկայությունը, որոնց մեջ իր ուրույն տեղն է գրավում պատճառական կապը:

2. Տես՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41572>.

3. Ընդ որում, օրենքի կարգավորման առարկային և նպատակին հղում է կատարում հենց ինքը՝ Դատարանը:

4. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մահացածի հարազատների, ազգականների և այլ անձանց կողմից հուղարկավորության կազմակերպումից հրաժարվելու կամ դրանց բացակայության դեպքում այն ստանձնում է քաղաքացու մահվան վերջին մշտական բնակության վայրի համայնքի ղեկավարը:

5. Կարծում ենք հանցագործություն բառը քննարկվող իրավահարաբերություններում տերմինաբանական առումով այդքան էլ ճիշտ չէ. գույքային վնասը հետևանք է ոչ թե հանցագործության, այլ հակաիրավական վարքագծի, այլ կերպ ասած դելիկտի:

6. Հատկանշական է այն հանգամանքը, որ Դատարանը, պարզ չէ ինչ տրամաբանությամբ, հոգեհացը համարում է որպես հուղարկավորության անհրաժեշտ ծախս:

Այս ինստիտուտի վերաբերյալ Գ. Բեքմեզյանը գրում է. «շատ դեպքերում, պատճառական կապի առկայությունը պարզելու համար անգլիական պրակտիկան ընդունում է «but for» (եթե չլիներ կամ եթե ապա) թեստի կիրառումը, ինչի առանձնահատկությունը հետևյալն է. յուրաքանչյուր դեպքում արարքի և վնասի միջև պատճառական կապի առկայությունը պարզելու համար պետք է հարցնել. եթե չլինեին պատասխանողի գործողությունները, ապա տուժողին վնաս կպատճառվե՞ր, թե՞ ոչ: Եթե պատասխանը «այո» է, ապա վնասի հատուցման պարտականություն պատասխանողը չի ունենա, եթե պատասխանը «ոչ» է, ապա պատասխանողը ենթակա է պատասխանատվության պատճառված վնասի համար»⁷:

Եթե փորձենք այս թեստը կիրառել քննարկվող հարաբերություններում, ապա պատասխանը ակնհայտ է՝ եթե չլիներ հակաիրավական վարքագիծը, ապա չէր լինի տուժողի մահը և, համապատասխանաբար, չէին լինի այդ ծախսերը:

Կարծում ենք՝ անմիջականության տակ Դատարանը նկատի է ունեցել ժամանակային խզումը հուղարկավորության պահի և այդ արարողությունների պահի միջև: Այն փաստը, որ դրանց միջև կա ժամանակային խզում, քննադատության չի դիմանում, սակայն ժամանակային խզումը խիստ նորմալ է դեղիկտային պարտավորություններում ընդհանրապես, իսկ կյանքին պատճառված վնասի պարտավորություններում մասնավորապես⁸:

Հուղարկավորության անհրաժեշտ ծախսերի որոշակիացման հարցն ակտուալ է արտասահմանյան և հատկապես ռուսական օրենսդրությունում ու դատական պրակտիկայում:

Այսպես՝ Հուղարկավորության և հուղարկավորական գործի մասին ՌԴ Դաշնային օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հուղարկա-

վորության անհրաժեշտ ծախսերի չափը պետք է որոշել՝ հաշվի առնելով հանգուցյալի դիակի և նրա հիշատակի նկատմամբ արժանի վերաբերմունք ապահովելու անհրաժեշտությունը⁹: Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ հուղարկավորությունը դիտարկվում է որպես հանգուցյալի մարմնի (մնացորդների) թաղման արարողակարգային միջոցառումներ՝ սովորույթներին և ավանդույթներին համապատասխան: Հուղարկավորման գործողությունների կազմում մտնում են դագաղի և այլ ծիսական առարկաների (ծաղկեպսակ և այլն) տրամադրման ծառայությունները, հանգուցյալի մարմնի տեղափոխումը գերեզմանատուն, հուղարկավորության վայրի նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը, հուղարկավորությունը, ցանկապատի անցկացումը, հուշարձանի տեղադրումը գերեզմանում:

Գործերից մեկով Զիրյանսկի շրջանային դատարանը նշեց, որ ելնելով ազգաբնակչության սովորույթներից և ավանդույթներից՝ արժանապատիվ հուղարկավորության ծախսերը ենթադրում են ծիսական ծառայությունների մատուցում, մասնավորապես՝ հուշարձանի պատրաստում և տեղադրում, ծաղկամանի տեղադրում, գերեզմանի բարեկարգում, քանի որ այս գործողությունները համընդհանուր են և համապատասխանում են Ռուսաստանի ազգաբնակչության ավանդույթներին: Ինչպես ընդունված է՝ քրիստոնեական ավանդույթներով այդ միջոցառումների շարքին են դասվում նաև հոգեհանգստի և հոգեհացի արարողությունները¹⁰:

Մեկ այլ գործով Սանկտ-Պետերբուրգի քաղաքային դատարանը նշեց, որ՝ արժանապատիվ հուղարկավորության ծախսերն ընդգրկում են ծիսական ծառայությունները (դագաղ, բարձ, սավան, խաչ, ծաղկեպսակ, ծաղիկներ, գերեզմանի փորում, նվագախմբի տրամադրում, դիահերձարանից տեղափոխում, դիա-

7. Տես՝ Գ. Բեքմեզյան, Պատճառական կապը դեղիկտային պարտավորություններում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. –Եր., ԵՊՀ, 2017, էջ՝ 231-242:

8. Ժամանակային խզումը ավելի վառ է դրսևորվում հատկապես կերակրողին կորցնելու հետևանքով հատուցվող վնասի հարաբերություններում: Տես քաղ. օր. 1081 հոդված:

9. Տես՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_8919/be25a90cbbcc5b45a99eb66de0479ff4a3ff1b559/.

10. Տես՝ Определение Зырянского районного суда Томской области в с.Зырянское от 30 мая 2017г. по делу №2-56/2017.

տարի տրամադրում, հոգևորականի ծառայություններ, ավտոբուսի տրամադրում դեպի գերեզմանատուն և այլն), դիախերձարանի բժշկական ծառայությունները (դիակի վերականգնում, կոսմետիկ աշխատանքներ, պահում և այլն): Դրա մեջ են մտնում նաև գերեզմանի բարեկարգությունը և հուշաքարի տեղադրումը: Ըստ դատարանի՝ հուշաքարի վրա մերձավորները հավերժացնում են հանգուցյալի մասին տվյալները, նվիրում են նրան բառեր. հիշատակման (ոգեկոչման) օրը հարազատները հավաքվում են հուշաքարի մոտ և հարգանքի տուրք մատուցում մահացածի հիշատակին: Հուշաքարը մերձավորին կորցրած մարդկանց համար հանդիսանում է իրենց անդառնալի կորուստը սփոփելու կարիքը ռեալիզացման միջոց¹¹:

Միևնույն ժամանակ կան այնպիսի դատական ակտեր, որոնցով գերեզմանաքարի տեղադրումը և գերեզմանի բարեկարգությունը չի դիտարկվում որպես անհրաժեշտ ծախս: Այսպես՝ գործերից մեկով Չեչյաբինսկի շրջանային դատարանը եկավ այն եզրահանգմանը, որ ցանկապատի պատրաստման, սեղանիկի, ծաղկամանի և գերեզմանաքարի ծախսերը չեն հանդիսանում անհրաժեշտություն¹²:

Կարծում ենք, որ ավելի ճիշտ և փաստարկված են այն դատարանների տեսակետները, որոնք գերեզմանաքարի տեղադրումը և գերեզմանի բարեկարգությունը դիտարկում են որպես անհրաժեշտ ծախսեր:

Ինչ վերաբերվում է հոգեհացի, իններորդ և քառասուներորդ օրերի արարողություններին, ապա այս հարցերով ևս ռուսական դատական

պրակտիկան միասնական չէ: Լինում են որոշումներ, որոնցով դատարանները չեն դիտարկում այդ արարողությունները որպես անհրաժեշտ ծախսեր՝ հիմնավորելով, որ այդ ծախսերը դուրս են գալիս հուղարկավորությամբ անմիջականորեն կատարվող գործողությունների շրջանակից¹³:

Միևնույն ժամանակ, կան դատական ակտեր, որոնցով այս արարողակարգային ծախսերը դիտարկվում են որպես անհրաժեշտ: Մասնավորապես, Մոսկվայի քաղաքային դատարանն ընդգծեց նմանատիպ ծախսերի իրավաչափությունը՝ նշելով, որ դրանք համարվում են անհրաժեշտ ժառանգատուի արժանապատիվ հուղարկավորության համար¹⁴:

Ինչպես տեսնում ենք, ռուսական դատական պրակտիկան ևս այս հարցում աչքի է ընկնում անորոշությամբ: Հետևաբար, ինչպես վարվել հուղարկավորության՝ անհրաժեշտ ծախսերի հետ¹⁵:

Գաղտնիք չէ այն փաստը, որ նույնիսկ ամենակատարյալ քաղաքացիական օրենսդրությունն ունակ չէ հաշվի առնել հասարակական հարաբերությունների բազմազանությունը, որոնք կարիք ունեն իրավական կարգավորման: Այդ իսկ պատճառով որոշ դեպքերում հարաբերությունները միանշանակ կարգավորելու օբյեկտիվ անհնարինության ուժով պայմանավորված՝ օրենսդիրը կիրառում է անորոշ բովանդակությամբ հասկացություններ¹⁶:

Իրավիճակը նույնն է նաև հուղարկավորության՝ անհրաժեշտ ծախսերի պարագայում: Նմանատիպ հասկացությունները խիստ փոփո-

11. Стн Апелляционное определение Санкт-Петербургского городского суда от 26 марта 2014 г. N 33-4426 по делу N 2-53/14.

12. Стн Апелляционное определение Челябинского областного суда от 4 июля 2014 г. по делу N 11-6516/2014.

13. Стн Апелляционное определение Алтайского краевого суда от 11 февраля 2014 г. по делу N 33-123/14 //, Апелляционное определение Свердловского областного суда от 2 июля 2014 г. по делу N 33-7908/2014 //, Апелляционное определение Нижегородского областного суда от 9 апреля 2013 г. по делу N 33-2997 //, Апелляционное определение Самарского областного суда от 29 октября 2012 г. по делу N 33-9930 //.

14. Стн Определение Московского городского суда от 25 июня 2013 г. по делу N 4г/8-5985 //.

15. Ընդ որում, այս եզրույթի հստակեցումը կարևոր պրագմատիկ նշանակություն ունի ոչ միայն դեյլիտային պարտավորություններում (քաղ. օր. 1087-րդ հոդված), այլ նաև ժառանգման հարաբերություններում: Մասնավորապես, քաղ. օր. 1242-րդ հոդվածում տրվում է ժառանգության հաշվին հատուցվող ծախսերի հերթականությունը և առաջին հերթին հատուցման ենթակա են ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը: Ինչպես տեսնում ենք, այստեղ օրենսդիրը ավելի որոշակի է գտնվել և հուղարկավորության անհրաժեշտ ծախսերը բնորոշել է պատշաճ: Ողջունելով օրենսդիրի նման մոտեցումը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ պատշաճ բառը տերմինաբանական առումով չի համապատասխանում և անբարեհունչ է հուղարկավորությանը: Ավելի ճիշտ կլիներ այն բնորոշել արժանապատիվ (достойный) բառով, ինչպես արված է ՌԴ քաղ. օր. 1174րդ հոդվածում:

16. Стн Лукьяненко М.Ф. Оценочные понятия гражданского права: разумность, добросовестность, существенность. М.: Статут, 2010г., С-7.

խական են տարածության և ժամանակի մեջ: Որպեսզի ավելի պարզ լինի, բերենք մեկ օրինակ հայկական իրականությունից. ոչ վաղ անցյալում թաղման ծիսակատարությունները (հոգեհանգիստ և այլն) կատարվում էին հանգուցյալի տանը. ներկայումս բավականին տարածված են սգո սրահները, սակայն դրանք տարածված են առավելապես մայրաքաղաքում և ոչ թե ամբողջ հանրապետությունում: Ստացվում է, որ այժմ առնվազն մայրաքաղաքի մակարդակով կարող ենք քննարկել սգո սրահի անհրաժեշտությունը որպես հուղարկավորության ծախս:

Մեզ թվում է, որ այստեղ գործ ունենք իրավունքի այնպիսի պրոբլեմի հետ, որի լուծումն ավելի հեշտ է գտնել կոնկրետ իրադրության պայմաններում, քան թե դոկտրինալ սահմանումների կամ օրենսդրական կարգավորումների միջոցով¹⁷:

Ամեն դեպքում կարելի է բերել որոշակի հատկանիշներ, որոնք կարող են կողմնորոշիչ բնույթ ունենալ այս իրավիճակում: Մասնավորապես, կոնկրետ գործով հուղարկավորության՝ անհրաժեշտ ծախսերը սահմանելիս դատարանը հաջորդաբար պետք է պատասխանի երկու հարցի՝

1. արդյո՞ք այդ ծախսերը անհրաժեշտ են՝ ըստ նպատակահարմարության,
2. արդյո՞ք այդ ծախսերը ողջամիտ են՝

ըստ ծավալի:

Այս հարցերի պատասխանը ստանալու ճանապարհին դատարանը կարող է օգտագործել և հաշվի առնել տարբեր հանգամանքներ: Այդ հանգամանքների շարքում, թերևս, ամենակարևորը հանդիսանում են սովորույթները և ավանդույթները: «Նմանատիպ դեպքերում, նկատում է Ա. Մալիշկինը, սովորույթների և ավանդույթների իմացությունն անհրաժեշտ է հուղարկավորության ժամանակ կատարվող գործողությունների ծավալը որոշելու համար»¹⁸: Ընդ որում, կարծում ենք, որ խոսքը վերաբերում է ոչ միայն կրոնական ավանդույթներին, այլ առհասարակ ազգաբնակչության շրջանում տարածված ցանկացած սովորույթային նորմի: Որպես կողմնորոշիչ հանգամանք կարող է դիտարկվել նաև հանգուցյալի՝ մինչ մահն ունեցած սոցիալական կարգավիճակը: Ակնհայտ է, որ հասարակ քաղաքացու և զինվորականի հուղարկավորության արարողություններն օբյեկտիվորեն տարբերվում են իրենց բովանդակությամբ, հետևաբար՝ նաև անհրաժեշտ ծախսերով:

Այնուամենայնիվ, վերոթվարկյալ ուղենիշները, չնայած շատ կարևոր են, սակայն օրինաչափություն չեն, և դատարանը վճիռ կայացնելիս պետք էլնի կոնկրետ գործի փաստական հանգամանքներից:



17. Օրենսդրությամբ որոշակի շրջանակ սահմանելը ոչ միայն կարող է խնդիրը չլուծել, այլ ընդհակառակը կարող է խճճել հարաբերությունները և բերել կարգավորման փակուղու, ինչպես դա, ըստ էության, եղավ մեր կողմից բերված ներպետական դատական ակտում:

18. Տե՛ս Малышкин А.В. Обычай и традиции в судебной практике судов общей юрисдикции // Российский судья. 2013. N 3. С. 7:

ԼԻԱ ԹԵՎՈՍՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի հայրորդ

**ԱՐՀԵՏՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Այսօր արհեստական բանականության սրընթաց զարգացումն ի զորու է վերափոխել աշխարհը և նոր արդյունաբերական հեղափոխություն կատարել¹: Հետևաբար, երիցս ճիշտ է Նոբելյան մրցանակակիր Հենրի Բիսինցերը, որը 2018 թ. “The Atlantic” ամսագրում «Ինչպե՞ս է ավարտվում լուսավորությունը» թեմայով հրապարակած իր հոդվածում նախազգուշացրել է, որ տեղեկատվությունը սպառնում է ջախջախել իմաստությանը²:

«Արհեստական բանականություն» հայեցակարգը (հայտնի է նաև AI անվանումով) պատկանում է ամերիկացի գիտնական Ջոն Մաքքարթիին, որն առաջին անգամ այն ներկայացրեց 1956 թ. գիտաժողովում: Վերջինս մեծ ազդեցություն ունեցավ տեխնոլոգիաների ոլորտի վրա: Այդ ժամանակից ի վեր այս հայեցակարգը լայնորեն տարածվել է ամբողջ աշխարհում³:

Արհեստական բանականությունն արհեստական երևույթ է, իսկ մարդկային բանականությունը՝ բնական: Մարդկային բանականությունն աշխատում է ազդանշանների տեսքով, իսկ արհեստական բանականությունը՝ թվային: Արհեստական բանականությունը հիմնված է

սարքերի և ծրագրերի վրա: Այդ իսկ պատճառով որոշ հետազոտողներ մեքենաները համարում են նույնքան կարևոր և ունակ, որքան մարդկային բանականությունը⁴:

Արհեստական բանականությունը կարող է գոյություն ունենալ մեքենայից (ռոբոտից) առանձին, միայն թվային տեսքով՝ կիբեռֆիզիկական համակարգի և այլ արհեստական համակարգերի ձևով, ինչը թույլ է տալիս նմուշավորել (մոդելավորել) համապատասխան գործողությունները⁵:

Հայաստանի Հանրապետությունում, ի թիվս նաև աշխարհի մեծաթիվ երկրների, կան բազմաթիվ նախագծեր, որտեղ օգտագործվում է արհեստական բանականությունը: Այս կապակցությամբ մեր շրջանում ևս առաջ է եկել «խելացի-մեքենաների», դրանց կողմից ստեղծված արդյունքների շուրջ ծագող իրավահարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտություն, որը թելադրում է ուշադրության կենտրոնում պահել արհեստական բանականության արագ բարեշրջումը և ձեռնարկել քայլեր հեղինակային իրավունքի տեսակետից իրավական կարգավորման ուղղությամբ, քանի որ, ինչպես նշում է Պ. Մ.

1. Տե՛ս **Maikel Leyva-Vázquez**, Florentin Smarandache, Inteligencia Artificial retos, perspectivas y papel de la neutrosofía, Artificial intelligence challenges, perspectives and neutrosophy role, 05 November 2018, էջ 15:
2. Տե՛ս **Henry A. Kissinger**, How the Enlightenment Ends, Philosophically, intellectually in every way human society is unprepared for the rise of artificial intelligence. June 2018 ISSUE. Հղումը՝ <https://www.theatlantic.com/magazine/archive/2018/06/henry-kissinger-ai-could-mean-the-end-of-human-history/559124/> (30.01.2020):
3. Տե՛ս **Título**: Inteligencia artificial. Sitio: Definición ABC. Fecha: 14/08/2013. Autor: Florencia Ucha. Հղումը՝ URL: <https://www.definicionabc.com/tecnologia/inteligencia-artificial.php> (30.01.2020):
4. Տե՛ս **Gagan Pabby**, Neeraj Kumar, A Review on Artificial Intelligence, Challenges Involved & Its Applications, International Journal of Advanced Research in Computer Engineering & Technology (IJARCET) Volume 6, Issue 10, October 2017, էջ 1569:
5. Տե՛ս **Лантев В. А.**, Понятие искусственного интеллекта и юридическая ответственность за его работу, // Право. Журнал Высшей школы экономики. № 2. 2019, էջ 83:

Մորիսատը, մեքենաները չպետք է մեկուսացված լինեն մարդկանցից⁶:

Այսպես՝ ամբողջ աշխարհում թվային տեխնոլոգիաները սկսում են թելադրել իրենց սեփական պայմանները և, ինչպես իրավա-ցիորեն նշվում է 2015 թ. մտավոր սեփա-կանության համաշխարհային զեկույցում, ար-հեստական բանականության հետ կապված տեղեկատվական ու հաղորդակցման տեխնոլո-գիաների նորամուծությունների հաջորդ սե-րունդը մեծ ներուժ ունի⁷:

Ըստ Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանի արհեստական բանականու-թյան հետազոտության ինստիտուտի պրոֆեսոր Վ. Բոտտիի՝ մարդը երբեմն-երբեմն կորցնում է վերահսկողությունն իր ստեղծած տեղեկատվա-կան, հաղորդակցական տեխնոլոգիաների և արհեստական բանականության նկատմամբ և որպեսզի դա տեղի չունենա, անհրաժեշտ է արհեստական բանականության նվաճումներն ուղղորդել դեպի տեխնոլոգիական համակար-գերի թափանցիկություն, որոնք համատեղելի են մեր բարոյական, սոցիալական և մշակու-թային այնպիսի արժեքների հետ, ինչպիսիք են անվտանգությունը, կայունությունը և այլն⁸:

Ելնելով արհեստական բանականության շուրջ ծագող իրավահարաբերությունների իրա-վական կարգավորման անհրաժեշտու թյունից՝ կարծում ենք, որ պետք է անդրադարձ կատա-րել՝

ա) արհեստական բանականության կող-մից ստեղծված գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները որպես հեղինակային իրավունքի օբյեկտ դիտարկելուն և

բ) արհեստական բանականությունը որ-պես հեղինակային իրավունքի սուբյեկտ դի-տարկելուն:

Ըստ ՀՀ-ում գործող քաղաքացիական օրենսգրքի «Հեղինակային իրավունքի օբյեկտ չհամարվող ստեղծագործությունները» վերտա-նությամբ 1114-րդ (5-րդ կետ) ու «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» օրենքի՝ համանուն վերնագրով 4-րդ հոդվածի ((գ) ենթակետ)՝ հեղինակային իրավունքի օբյեկտ չեն համարվում առանց մարդու ստեղծագոր-ծական գործունեության, սուկ տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված արդյունք-ները: Այլ կերպ ասած՝ արհեստական բանա-կանության կողմից ստեղծված գիտության, գրականության և արվեստի ստեղծագործու-թյունները չեն կարող համարվել հեղինակային իրավունքի օբյեկտ:

2014 թ. Եվրասիական տնտեսական միու-թյան հետ ՀՀ-ն կնքել է տնտեսական պայմա-նագիր, որի XXIII բաժինը վերաբերում է մտա-վոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության և պաշտպա-նության ոլորտում ԵԱՏՄ անդամ պետություն-ների համագործակցության ուղիներին: Այդ համագործակցության շրջանակներում Կառա-վարությունը նախաձեռնել է օրենսդրության բարեփոխումներ՝ նոր «Հեղինակային իրավուն-քի և հարակից իրավունքների» օրենքի նախա-գծով⁹, որտեղ չպահպանվող ստեղծագործու-թյունների շարքում տեղ չեն գտել առանց մարդու ստեղծագործական գործունեության և միայն տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված արդյունքները (նախագծի 5-րդ հոդ.): Ավելին, համաձայն նույն նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետի 14-րդ ենթակետի՝ «Հեղի-նակային իրավունքի օբյեկտներ համարվում են մասնավորապես՝... այն ստեղծագործություն-ները, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջ-ներին»: Իսկ 4-րդ հոդվածի 1-ին կետը սահ-

6. Стн Право будущего: Интеллектуальная собственность, инновации, Интернет: Ежегодник. Вып. 1 / РАН. ИНИОН. Центр. социал. науч.-информ. исслед. Отд. правоведения; Каф. предпринимательского права МГУ им. М.В. Ломоносова; Отв. ред. Афанасьева Е.Г. – М., 2018, П.М. Морхат Особенности развития права интеллектуальной собственности в контексте использования искусственного интеллекта (Статья) էջ 69:

7. Стн Доклад о положении в области интеллектуальной собственности в мире, Революционные инновации и эконо-мический рост, WIPO, 2015, էջ 16:

8. Стн Vicent Botti es catedrático del Instituto Valenciano de Investigación en Inteligencia Artificial (VRAIN). Universitat Politècnica de València, Una inteligencia artificial responsable, El ser humano está perdiendo el control sobre las tecnologías de la información y las comunicaciones que ha creado y la Inteligencia Artificial no es una excepción, 1 AGO 2019. Հղումը՝ https://elpais.com/elpais/2019/07/31/ciencia/1564584742_962030.html (01.02.2020):

9. Стн Հայաստանի Հանրապետության «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծ. հղումը՝ <https://www.e-draft.am/projects/1170/about> (28.01.2020):

մանում է, որ «Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործություն է համարվում գրականության, գիտության և արվեստի բնագավառներում ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացված ստեղծագործական աշխատանքի արդյունքը, որն արտահայտված է գրավոր, բանավոր կամ այլ օբյեկտիվ ձևով՝ ներառյալ մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրոնային ձևը՝ անկախ դրա ծավալից, նշանակությունից, արժանիքներից և ստեղծման նպատակից»: Այսինքն՝ առանց մարդու ստեղծագործական գործունեության, տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված արդյունքները նշված օրինագծով դիտարկվում են որպես ստեղծագործություններ, հեղինակային իրավունքի օբյեկտներ: Հետևաբար, անհրաժեշտ է, որպեսզի օրենսդրական բարեփոխումներն ուղղորդվեն նաև առանց մարդու ստեղծագործական գործունեության, տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված արդյունքները որպես հեղինակային իրավունքի օբյեկտ դիտարկելուն:

Հեղինակային իրավունքի ճանաչման կարևորությունից ելնելով՝ արհեստական բանականության կողմից ստեղծված ստեղծագործության նկատմամբ անհրաժեշտ է քննարկել նաև հեղինակային իրավունքի սուբյեկտի հարցը:

Ըստ Մտավոր սեփականության Համաշխարհային կազմակերպության՝ «Հեղինակ է այն անձը, որը ստեղծում է ստեղծագործությունը»¹⁰: Համաձայն Հեղինակային և հարակից իրավունքների մասին ՀՀ գործող օրենքի 6-րդ հոդվածի՝ «ստեղծագործության հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ով ստեղծել է ստեղծագործությունը»: Նման ձևակերպում է տրված նաև Եվրոպական միության անդամ հանդիսացող Իսպանիայի Թագավորության Մտավոր սեփականության մասին օրենսգրքում (հոդ. 5, կետ 1):

Վերը նշված հոդվածի տեքստից պարզ է, որ ստեղծագործության հեղինակ է դիտարկ-

վում միայն ֆիզիկական անձը: Սակայն, ինչպես արձագանքում են աշխարհում տեղի ունեցող զարգացումները, ավանդական և նոր հետազոտությունների տարբեր ոլորտների համադրություններում, ներառյալ արհեստական բանականությունը, ինքնավար «զարգացած» ռոբոտների ստեղծումը, որոնց օգտագործման ավելի լայն ներուժ ունեն տնտեսության և կյանքի բոլոր ոլորտները, հանգեցրել է նրան, որ ժամանակն է որպես հեղինակ միանշանակ չընկալել միայն ֆիզիկական անձին, քանի որ ստեղծագործությունը կարող է ստեղծվել անմիջապես արհեստական բանականության կողմից¹¹:

Ասվածը հաստատելու համար որպես օրինակ դիտարկենք 2019 թ. Երևանում տեղի ունեցած «WCIT 2019» SS համաշխարհային համաժողովի ընթացքում WCIT նվազախմբի կողմից արհեստական բանականությամբ ստեղծված երաժշտության կատարումը¹², որտեղ որպես ստեղծագործության հեղինակ հանդես է գալիս ոչ թե ֆիզիկական անձը, այլ արհեստական բանականությունը:

Եթե մի պահ ընդունենք, որ արհեստական բանականությունը կարող է համարվել հեղինակային իրավունքի սուբյեկտ (քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ), ապա դրան հաջորդում է իրավունակության՝ իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակության հարցը (ՀՀ քաղ. օր. հոդ. 20):

Եթե նույնիսկ հաշվի առնենք այն հանգամանքը, որ մինչև բուն ստեղծագործությունը ստեղծելն արհեստական բանականությունը կառավարվել է ֆիզիկական անձի կամ անձանց կողմից, միևնույն է՝ բուն ստեղծագործությունը ստեղծելիս այն ինքնուրույնաբար է ստեղծվել: Բացի այդ, եթե արհեստական բանականությունը չի կարող համարվել հեղինակային իրավունքի սուբյեկտ, ապա ու՛մ պետք է դիտարկել որպես գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության հեղինակ և ու՛մ հե-

10. Sfu Глоссарий терминов по авторскому праву и смежным правам ВОИС. 2000. – էջ 43:

11. Sfu М. Морхат. Особенности развития права интеллектуальной собственности в контексте использования искусственного интеллекта, Право будущего: Интеллектуальная собственность, инновации, Интернет: Ежегодник. Вып. 1 / РАН. ИНИОН. Центр. социал. науч.-информ. исслед. Отд. правоведения; Каф. предпринимательского права МГУ им. М.В. Ломоносова; Отв. ред. Афанасьева Е.Г. – М., 2018, էջ 66:

12. Sfu WCIT 2019 held historic Opening Concert in Republic Square. Հղումը՝ <https://wcit2019.org/fr/news/wcit-2019-held-historic-opening-concert-in-republic-square> (02.02.2020):

ղինակության իրավունքները պետք է պաշտպանվի:

Համակարգչային ծրագրակազմը, որն ունակ է ինքնաբերաբար ծրագրավորելու, ինդուկտիվ վերլուծություն և հիմնախնդիրների հիմնահարցեր լուծել, շուտով կվիճարկի հեղինակային իրավունքի և ինքնատիպության իրավական հասկացությունները, որոնք կենտրոնացված են ընդհանուր օրենքի և հեղինակային իրավունքի կանոնադրական հիմքերի վրա¹³:

Մտավոր իրավունքի իրացմանը և պաշտպանության իրավական կարգավորմանը վերաբերող մոտեցումների որոշակի վերանայման անհրաժեշտությունը որոշ հեղինակների կողմից հիմնավորված է նաև այն հանգամանքով, որ նոր տեխնոլոգիաների ոլորտում արհեստական բանականության օգտագործումն իզուրու է ինքնուրույն արարել ստեղծագործություն, որն էլ սպառնում է ստեղծարար արդյունաբերությանը և նույնիսկ հանգեցնում է մարդու ստեղծագործական գործունեության որոշակի ձևերի արժեզրկմանը, սպառնում է բիզնես մոդելների նորարար արդյունաբերությանը և նույնիսկ հանգեցնում է մարդու ստեղծագործական գործունեության որոշակի ձևերի արժեզրկմանը¹⁴: Ավելին, առկա է մտավախություն, որ տեսանելի ապագայում կհայտնվեն արհեստական ինտելեկտի կողմից ստեղծված այնպիսի օբյեկտներ, որոնք մարդու կողմից կընկալվեն որպես արվեստի գործեր¹⁵: Կան ինքնավար արհեստական բանականություններ, որոնք գրում են բանաստեղծություններ, նախագծում են օբյեկտներ, նկարում կամ ստեղծագործում երաժշտությունն այնպես, ինչպես մարդը կարող է անել¹⁶:

Կարծում ենք, որ ապագայում «Հեղինակային իրավունքի սուբյեկտ» հասկացությունը վերանայելու դեպքում անհրաժեշտություն է առաջանալու այն դիտարկել արհեստական բանականության հայեցակարգի համատեքստից:

Տ. Բատլերը դեռ 1982 թ. գրել է, որ դատավորներն ամեն դեպքում եթե որոշեն, որ արհեստական բանականության գործունեության որոշակի արդյունքի հեղինակությունը փաստորեն պատկանում է նրան, այլ ոչ թե մարդուն, իրենց տրամադրության տակ ունեն խնդրի մի քանի այլընտրանքային լուծումներ՝

- ամբողջությամբ հրաժարվել արհեստական բանականության հեղինակային իրավունքի բաժնից,

- արհեստական ինտելեկտին տալ հեղինակային իրավունքի պաշտպանություն կամ բաշխել այդ իրավունքները համակարգի և անձի միջև,

- բաշխել հեղինակային իրավունքները հիմնական ծրագրաշարի, հեղինակային իրավունքի սեփականատիրոջ և համակարգչի սեփականատիրոջ միջև,

- ստեղծել մտացածին (հորինված) հեղինակ-անձ և հեղինակային իրավունքները փոխանցել հիմնական ծրագրաշարի հեղինակային իրավունքի կամ համակարգչի սեփականատիրոջը¹⁷:

Այսպես՝ Մեծ Բրիտանիայում դեռևս 1998 թ. «Հեղինակային իրավունքի, արդյունաբերական նմուշների և արտոնագրերի մասին» օրենքով նախատեսել են մեքենայի կողմից (Computer generated works) ստեղծված աշխատանքներին իրավաբանական պաշտ-

13. Տե՛ս **Timothy L. Butler**, Can a Computer be an Author - Copyright Aspects of Artificial Intelligence, Hastings Communications and Entertainment Law Journal, Number 4, 1982, էջ 707:

14. Տե՛ս **Понкин И., Редькина А.** Искусственный интеллект и право интеллектуальной собственности // Интеллектуальная собственность. Авторское право и смежные права. – М., 2018. – № 2. – с. 35–44: П. М. Морхат, Особенности развития права интеллектуальной собственности в контексте использования искусственного интеллекта (Статья), Право будущего: Интеллектуальная собственность, инновации, Интернет: Ежегодник. Вып. 1 / РАН. ИНИОН. Центр. социал. науч.-информ. исслед. Отд. правоведения; Каф. предпринимательского права МГУ им. М.В. Ломоносова; Отв. ред. Афанасьева Е.Г. – М., 2018, էջ 67:

15. Տե՛ս **Ю. С. Харитонов**, К вопросу об охраноспособности результата деятельности искусственного интеллекта, Статья, Право будущего: Интеллектуальная собственность, инновации, Интернет: Ежегодник. Вып. 1 / РАН. ИНИОН. Центр. социал. науч.-информ. исслед. Отд. правоведения; Каф. предпринимательского права МГУ им. М.В. Ломоносова; Отв. ред. Афанасьева Е. Г. – М., 2018, էջ 54:

16. Տե՛ս **Ramón López de Mántaras Badia**, «Computational Creativity» Arbor, 189, 2013 (764):

17. Տե՛ս **Butler T. L.** Can a computer be an author – Copyright aspects of artificial intelligence // Hastings communications and entertainment law journal. – San Francisco, 1982. – Vol. 4, N 4. – էջեր 707–747:

պանություն տրամադրելու հնարավորություն: Այս դեպքում հեղինակային իրավունքի սեփականատերը հանդիսանում է «անձը, որն անհրաժեշտ քայլեր է ձեռնարկել ստեղծագործությունը ստեղծելու համար»¹⁸:

Եվրախորհրդարանի կողմից առաջարկված Ռոբոտաշինության մասին քաղաքացիական օրենսդրության կանոններ¹⁹ անվանումը կրող փաստաթղթով առաջարկվում է ապահովել այն արդյունքները, որոնք ստեղծվել են արհեստական բանականության կողմից՝ հաշվի առնելով իրավասուբյեկտության չեզոք պաշտպանությունը, քանի որ ստեղծագործական գործունեության գրեթե բոլոր արդյունքների հետևում կանգնած է մարդը: Այսպիսով, անգամ առաջարկված փաստաթղթով իրավական պաշտպանություն է տրվում արհեստական բանականության կողմից ստեղծված ստեղծագործություններին, սակայն արհեստական բանականությանը դեռևս չի տրվել հեղինակային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ: Ուրեմն, արհեստական բանականության կողմից ստեղծված օբյեկտների նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է այն անձանց, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստեղծագործական ներդրում են ունեցել ստեղծագործության ստեղծման գործում: Ստացվում է, որ արհեստական բանականությունն ինքնին դեռևս չի կարող ճանաչվել համապատասխան ստեղծագործությունների հեղինակ²⁰: Ըստ երևույթին այստեղ կիրառելի պետք է համարել համահեղինակության ինստիտուտը:

Մեր կարծիքով՝ հեղինակային իրավունքի սուբյեկտի հասկացության վերանայման, նորագույն չափանիշներին համապատասխանեցման շնորհիվ կհաջողվի կարգավորել նաև այդ իրավահարաբերությունների արդյունքում ծագող պատասխանատվության հարցը, որն

իրենից ծավալուն և առանձին հետազոտության թեմա է ներկայացնում:

Սակայն արհեստական բանականության հետ կապված հասարակական հարաբերությունների բնականոն զարգացումը և դրա իրավական կարգավորման հետաձգումը թույլ է տալիս ակնարկային անդրադարձ կատարել այդ հարաբերություններից առաջացող պատասխանատվության հարցին:

Մենք գտնում ենք, որ այս իրավահարաբերությունների՝ օրենսդրորեն չկարգավորումը կամ թերի կարգավորումը կհանգեցնի օրենքի բացի: Պատասխանատվության հարցը որպես ապագայի մարտահրավեր արհեստական բանականության ոլորտում ժամանակին բացահայտվեց Ջոնասի կողմից պատասխանատվության սկզբունքի մասին աշխատության մեջ, որտեղ նա նշեց, որ «անհրաժեշտ է հաշվի առնել և վերաիմաստավորել դրանք մեր ժամանակի լույսի ներքո արհեստական բանականության զարգացման համատեքստում»²¹:

Ռուսաստանի Դաշնությունը, անալոգիա կիրառելով Քաղաքացիական օրենսգրքի 1079²² հոդվածով, սահմանեց, որ արհեստական բանականության օգտագործման հետ կապված գործողությունների համար պատասխանատվությունը կրում են այն անձինք, որոնք օգտագործում են այդ բանականության տվյալները որպես առավել վտանգի առարկա: Ավելին, առավել վտանգի աղբյուրը վերաբերում է ցանկացած գործունեության, որի իրականացումը վնասի մեծացման հավանականություն է առաջացնում անձի կողմից այն լիարժեք վերահսկելու, ինչպես նաև արդյունաբերական, տնտեսական կամ այլ նպատակներով օբյեկտների, նյութերի և այլնի օգտագործման, տեղափոխման, պահպանման հետ կապված գործողություններ կատարելու անկարողության պատճառով²³:

18. Տե՛ս **Воскресенская Е. В.**, К вопросу о правовой природе результатов деятельности искусственного интеллекта, JURISPRUDENCE / «Colloquium-journal»#5(29), 2019, էջ 115: Հղումը՝ <https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-pravovoy-prirode-rezultatov-deyatelnosti-iskusstvennogo-intellekta/viewer> (02.02.2020):

19. Տե՛ս Civil Law Rules on Robotics European Parliament resolution of 16 February 2017 with recommendations to the Commission on Civil Law Rules on Robotics. P8_TA(2017)0051 P8_TA(2017)0051 (2015/2103(INL)): Հղումը՝ http://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2017-0051_EN.pdf (30.01.2020):

20. Տե՛ս **Воскресенская Е. В.**, նշվ. աշխ.:

21. Տե՛ս **Antonio Luis Terrones Rodríguez**, Inteligencia artificial y ética de la responsabilidad, Artificial intelligence and the ethic of responsibility, Cuestiones de Filosofía No. 22 - Vol. 4 Año 2018 ISSN 0123-5095 Tunja-Colombia, էջ 158:

22. Տե՛ս Гражданский кодекс Российской Федерации. Հղումը՝ <http://base.garant.ru/10164072/> (03.02.2020):

Այդ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե սեփականատերը կարող է ապացուցել, որ օբյեկտը դուրս է եկել իր տիրապետությունից այլ անձանց ապօրինի գործողությունների արդյունքում, ապա այդ դեպքում պատասխանատվությունն ընկնում է այն անձի վրա, որն այն ապօրինի տիրապետել է: Սեփականատիրոջ մեղավոր պահվածքի պատճառով այս աղբյուրն իր տիրապետությունից անօրինական հեռացվելու դեպքում պատասխանատվությունը կարող է դրվել ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ այն անձի վրա, որն ապօրինի կերպով ավելացրել է վտանգի աղբյուրը²⁴: Այսինքն՝ այս իրավահարաբերություններում առանձին գնահատական է տրվում յուրաքանչյուր մասնակցի դրսևորած վարքագծին:

Եզրակացությունն այն է, որ արհեստական բանականության հետ կապված իրավահարաբերությունների հիմքում ընկած են բազմաթիվ սոցիալական, տնտեսական, քաղաքական, տեխնոլոգիական, իրավական, էթիկայի և փիլիսոփայական հարցեր, ուստի՝ այդ հարաբերությունների ամբողջական օրենսդրական կարգավորումը պետք է հիմնված լինի միջնուղային սկզբունքների վրա և ներառի քաղաքացիական, վարչական ու այլ օրենսդրության բաղադրիչներ: Ընդամին, այս հարաբերությունների իրավական կարգավորման ուղղությամբ օրենսդրական մոտեցումներն արդեն դառնում են հրատապ:



23. Տե՛ս **Лаптев В.А.** Понятие искусственного интеллекта и юридическая ответственность за его работу // Право. Журнал Высшей школы экономики. № 2. 2019, էջ 90:
 24. Տե՛ս **Лаптев В.А.**, նշվ. աշխ., 2019, էջ 92:

ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հայցորդ

**ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.
ՓՈՆԿԱԴՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

Սույն գիտական հոդվածում դիտարկվում են իրավունքի և բարոյականության փոխկապվածության՝ տեսական ու գործնական խնդիրները: Իրավունքը և բարոյականությունը գնահատողական մտածողության ձևեր և հասարակության կարևոր նորմատիվ կարգավորիչներ են:

Իրավունքի սոցիոլոգիայի, փիլիսոփայության, տեսության գրականության մեջ բարոյականությունը վերագրում են հասարակության նորմատիվ համակարգի առավել կարևոր բաղադրիչներին, որոնց հիմնական նշանակությունը հասարակական հարաբերությունների կարգավորումն է: Դրա հետ մեկտեղ, իրավունքը և բարոյականությունը գնահատման մտածողության օրինակներ են, որոնք թույլ են տալիս անձանց կողմնորոշվել սոցիալական հարաբերություններում, կառուցել հասարակական հարաբերությունների համակարգեր և սահմանել դրանց գերակայությունները:

Սոցիալական նորմերը ձևավորում են ոչ միայն հասարակության կարգավորման, այլ նաև սոցիալական կողմնորոշման համակարգ, որտեղ յուրաքանչյուր անձ զբաղեցնում է հասարակական որոշակի դիրք և ձևավորում է սեփական վերաբերմունքն այդ համակարգի նկատմամբ:

Սոցիալական նորմերը հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորիչներ են, առանց որոնց դժվար է պատկերացնել հասարակության բնականոն գործունեությունը:

Բարոյականությունը մարդկության հոգևոր և սոցիալական կեցության բաղկացուցիչ մասն է, մարդկանց վարքագծի անհրաժեշտ

կարգավորիչը: Մասնագետները մեկ անգամ չէ, որ նշել են մարդու բնույթի երկակիությունը. բնությունը մարդկանց մեջ ներդրել է կարողություններ երկու տարբեր նպատակներով՝ մարդկության համար որպես կենդանական ցեղի և իր համար որպես բարոյական ցեղի²:

17-18-րդ դդ. գերակայում էին սոցիալ-իրավական այն տեսությունները, որոնք բացառում էին առանձին անձանց շահերի և նրանց բարոյական գնահատականի միջև կապերը: Բացատրելով հասարակական երևույթները՝ այս տեսությունների հիմքում դրված էր սոցիումից դուրս հարմարված մարդու վերաբերյալ պատկերացումը և սոցիալական բոլոր կապերը դիտարկվում էին որպես անհատների գիտակցական կամքի սահմանումներ: Անհատականության տեսանկյունից պահանջվում էր արտաքին գործոնների միջամտության վերացում յուրաքանչյուր անձի բնական ազատության նկատմամբ:

18-րդ դարի սկզբին գերմանացի մտածող Խ. Տոմագին առաջինն էր, որը հստակ սահմանազատեց իրավունքը և բարոյականությունը: Հետևելով քրիստոնեական ուսմունքին՝ նա իրավունքի հիմնական սկզբունքը սահմանում էր հետևյալ կերպ. «Մի արա այլոց հանդեպ այն, ինչը չես ցանկանում, որ քո հանդեպ կատարվի»: Նա բարոյականությունը բնութագրում է դրական բանաձևերով, որոնք սահմանում էին պարտականություններ ոչ թե այլ անձանց, այլ իր հանդեպ: Բարոյականության հիմնական կանոնն իրավական է. «Արա այն, ինչը կցանկանայիր, որ քո հանդեպ կատարվեր»:

1. Տե՛ս, օրինակ, **Мартышин О. В.** Нравственные основы теории государства и права// Государство и право, 2005, № 7, էջ 87-88:
2. Տե՛ս **Кант И.**, Предполагаемое начало человеческой истории // Сочинение на нем. и рус. языках. М.1994. էջ 175:

Այսպիսով, հաստատվում է բարոյականության և իրավունքի կանոնների տարբերությունը՝ ըստ բովանդակության և ըստ իրականացման ձևերի:

Բարոյական պարտականությունները մարդուն տրվում են խորհրդի տեսքով, իրավական պարտականությունները նախատեսվում են որպես հրամաններ (իրավական նորմեր), այսինքն՝ պահանջներ, որոնց հետևելն առաջացնում է պետական ներգործության միջոցներ: Պետական իշխանությունը, որն օժտված է հարկադրանք կիրառելու լիազորությամբ, հոգ է տանում իր քաղաքացիների կողմից օրենսդրորեն ամրագրված պարտականությունների պատշաճ կատարման մասին, սակայն բարոյական պարտականությունների ոլորտին չի կարող և չպետք է միջամտի:

18-րդ դարի մտածողները զարգացրել են իրավունքի և բարոյականության հարաբերակցության վերաբերյալ նշված հայեցակարգը:

Կանտն իրավունքի հիմնական սկզբը համարում էր պահանջը, համաձայն որի՝ յուրաքանչյուրի գործողություն պետք է համատեղելի լինի բոլորի և յուրաքանչյուրի ազատության հետ: Իրավաբանական նորմերը ենթադրում են նաև հարկադրանք և կանոնակարգում են մարդկային հարաբերությունների արտաքին կողմը: Կանտն իր տեսության մեջ ամրագրում է, որ իրավունքը պետք է կարգավորի հասարակության առավել լայն շրջանակի փոխհարաբերությունները՝ սահմանելով իրավական սկզբունքներ:

18-րդ դարում մտքի, խղճի և այլ անհատական ազատությունների արձանագրումը տոտալ կառավարական վերահսկողության ներքո առաջատար գործունեություն էր: Իրավունքի՝ բարոյականությունից անջատումը ենթադրում էր իրավունքի անտարբերություն բարոյականության ոլորտի հանդեպ. իրավունքը չպետք է կարգավորի մարդու ներքին աշխարհն ու ճնշի նրա անհատական ազատությունը:

Չնայած այս սահմանափակման պատմական-պրոգրեսիվ դերին՝ առաջանում էին իրավունքի և բարոյականության հակադրության տեսական հարցեր:

Եթե ընդունենք, որ իրավունքն անտար-

բեր է բարոյականության պահանջների հանդեպ, ապա այն անխուսափելիորեն կառաջացնի իրավական ոլորտի կամայականություն. իրավական նորմերի ճիշտ իրացումը փաստացիորեն կարող է հանգեցնել անարդարության: Ավելի ուշ շրջանի քաղաքական-իրավական մտքում իրավունքի և բարոյականության այսպիսի ծայրահեղական տարանջատումները փորձում էին վերացնել: Իրավունքն անջատ չէ բարոյականությունից: Այն չի սահմանափակվում միայն մարդկային գործողությունների արտաքին դրսևորմամբ, այլ գնահատում է արարքների ներքին մղումները: Այսպես, օրինակ՝ պայմանագրային պարտականությունների սահմանման համար պահանջվում էր իրավահարաբերությունների մասնակիցների կամքի գործուն համաձայնություն և ոչ միայն արտաքին համաձայնություն: Բարոյականությունը պահանջում է ոչ միայն բարի մտահղացումներ, այլև կոնկրետ բարի գործեր:

Ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցը նշում է, որ «Իրավունքի նկատմամբ բարոյական մոտեցումը, այն բարոյական գնահատումն ու մեկնաբանումը, լավագույն դեպքում հանգեցնում է բարոյական «ճիշտ» իրավունքի հիմնավորմանն ու արդարացմանը»³:

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին իրավունքի և բարոյականության հարաբերակցության տեսական խնդիրներին դիմել են շատ հայտնի իրավագետներ, որը կանխորոշված էր երկու հիմնական պատճառներով: Առաջին հերթին, քաղաքացիական հասարակության ձևավորման արդյունքում ծնված հարաբերությունների գաղափարական հիմնավորման, օրինականության ձևավորման, իրավական պետության ձևավորման անհրաժեշտությամբ: Երկրորդ, իրավունքի և բարոյականության հարաբերակցության խնդիրների լուծման անհրաժեշտությունը նոր գիտությունների տեսանկյունից՝ մարդաբանություն, սոցիոլոգիա, հոգեբանություն:

19-րդ դարի համար պարզորոշ էր մարդկանց հասարակական կախվածության փաստը: Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ վատթարացավ բնակչության հիմնական մասի սոցիալական

3. Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն: Երևան, 2001, էջ 55

դրությունը, որն առաջացրեց բուրժուական հասարակության քննադատական գնահատականն իր եսասիրության և տնտեսապես անպաշտպան մարդկանց հանդեպ ոչ մարդասիրական վերաբերմունքի հետևանքով: Իրավունքի նպատակ ճանաչվեց բարոյական կանոնների նախատեսումը:

Իրավունքի և բարոյականության խնդրի հետազոտման մեջ էական ներդրում ունի գերմանացի հայտնի իրավաբան Գ. Ռադբրուխը: Համաձայն նրա մոտեցման՝ իրավունքը մշակութային հասկացություն է. բարոյականությունը կապված է արժեքային կատեգորիաների հետ: Ըստ Ռադբրուխի՝ համեմատության են ենթակա երկու արժեքային հասկացություններ՝ արդարությունը և բարոյականությունը, կամ երկու մշակութային կատեգորիաներ՝ իրավունքը և բարոյականությունը⁴:

Մասնագետները հաճախ ուշադրություն են դարձնում իրավունքի ձևական բնույթին, որով այն տարբերվում է բարոյականության ներքին բովանդակությունից: Ռադբրուխն առանձնացրել է իրավունքի և բարոյականության բնութագրման հետևյալ չորս բնութագրերը:

Առաջին հերթին, իրավունքը դիտարկում են որպես նորմերի ու սկզբունքների միասնություն, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունները: Սակայն չի կարելի հաստատել, որ իրավունքը միջնորդավորում է միայն արտաքին վարքագիծ. ներքին վարքագիծը կարող է առաջացնել իրավաբանական հետևանքներ, ինչպես դա դիտարկվում է, օրինակ, մեղքի ձևի սահմանման մեջ: Բարոյական գնահատականները, ի հեճուկս տարածված կարծիքի, սահմանափակվում են միայն արարքների շարժառիթով:

Բարոյական տեսանկյունից նշանակություն ունի միայն արտաքին կամքի դրսևորումը. կամքը տարբերվում է հակումից իր ակտիվությամբ, և միայն գործողությամբ է հաստատվում նրա կեցությունը, հետևաբար՝ այս դեպքերին վերաբերելի է նաև բարոյականության

ոլորտը՝ ազդելով մարդու վարքագծի վրա: Մարդու գործունեությունը ենթակա է բարոյական գնահատման, սակայն չի բացառում նաև իրավականը:

Ռադբրուխի մոտեցման համաձայն՝ բարոյականության և իրավունքի կարգավորման առարկաների տարբերությունները դրսևորվում են դրանց շահերի տարբեր ուղղվածությամբ: Արտաքին վարքագիծը հետաքրքրում է բարոյականությանն այնքան, որքան այն հաստատում է ներքին վարքագիծը: Ներքին, հոգևոր վիճակն ընկնում է իրավունքի գործողության ոլորտ այնքանով, որքանով այն թույլ է տալիս գնահատել իրավունքի սուբյեկտի վարքագիծը⁵:

Երկրորդ, «ներքին-արտաքին» ձև-բովանդակություն հակաթեզը ծառայում է որպես իրավունքի և բարոյականության նպատակային նշանակության բացահայտման միջոց: Իրավական արժեքը բնութագրում է գործողությունը որպես լավ կամ վատ այլ անձանց հանդեպ: Բարոյականության տեսանկյունից այն վարքագիծը գնահատում է որպես լավ:

Իրավական ոլորտում առկա են պարտականություն և պարտք կատեգորիաները, իսկ բարոյական ոլորտում միայն անհրաժեշտությունը: Չկան բարոյական պարտականություններ այլ անձանց հանդեպ՝ դրանց կատարման հետ կապված⁶:

Երրորդ, ներքին-արտաքին կատեգորիաների հակադրությունը և տարբերությունը վերաբերում են իրավական և բարոյական պարտականությունների ոչ միատեսակ բնույթին: Բարոյականությունը պահանջում է մարդու կողմից իր պարտականությունների կատարում միայն պարտքի ուժով: Իրավունքը թույլ է տալիս նաև այլ դրդապատճառով շարժառիթներ՝ պարտականությունների կատարման համար: Բարոյականություն և օրինականություն կատեգորիաների տարբերակմանը գիտնականները տարբեր կերպ էին վերաբերվում⁷:

Բարոյականություն և օրինականություն կատեգորիաները, ըստ Ռադբրուխի, նշանակում են, որ բարոյական նորմն ունի կամային

4. Տե՛ս Ռադբրուխ Գ. Философия права, М., 2004, էջ 49:

5. Տե՛ս Ռադբրուխ Գ., նշվ. աշխ., էջ 51:

6. Տե՛ս նույն տեղում, էջ 52:

7. Տե՛ս Нравственные основы теории государства и права (Международная научная конференция) //Государство и право. 2005, № 9, էջ 87-88.

բնույթ, որը թույլ է տալիս անհատին ազատորեն որոշում կայացնել իր պարտքի մասին. իրավական նորմերի բնույթը վարքագծային է: Բացի այդ, բարոյականության ազդեցության առարկան սեփական արարքներով մոտիվացված անհատն է:

Իրավունքի միջոցով կարգավորվում են հասարակական հարաբերությունները: Իրավական նորմերի գործողությունն ուղղված է անձանց արտաքին վարքագծին⁸:

Օրինականություն հասկացությունը միայն իրավունքի առանձնահատկությունը չէ: Այս կատեգորիան տրամաբանական և գեղագիտական արժեքների չափանիշ է, որոնց առարկան անհատը չէ:

Համաձայն Ռադբրուխի ուսմունքի՝ իրավունքի նորմերը նախապես չունեն նորմատիվ բնույթ: Դրանք կազմված էին գնահատողական, այլ ոչ թե պարտադիր վարքագիծ պահանջող նորմերից, որոնցով էլ հասարակական հարաբերությունների կարգավորման չափանիշներ էին: Սակայն գնահատման նշանակությունից զատ, իրավունքն ունի այլ կարեվոր գործառույթ: Այն կոչված է ուղղորդելու մարդկանց գործողությունները: Իրավական նորմերը ժամանակի ընթացքում սկսել են ասոցացվել արժեքների և հրամանների հետ, որոնց արժեքային բնութագրերում կամքը դեր չունի⁹: Նորմը որպես արժեք ուղղորդում է դեպի բարոյականություն: Հրամանը պահանջում է օրինականություն: Իրավական հրամանի էությունը դրսևորվում է ոչ թե գործողություններով, այլ ուղղորդված որոշակի վարքագծով, այսինքն՝ ազդեցությամբ:

Չորրորդ, իրավունքի ֆորմալիզմը և բարոյականության բովանդակությունը դրսևորվում են նրանց աղբյուրների տարբեր արժեքներում: Իրավունքը, ըստ իր բնույթի, ածանցյալ է: Այն բխում է պետական իշխանությունից, իսկ բարոյականությունն ինքնավար է:

Գիտնականների ուշադրության կենտրոնում է հայտնվել ածանցյալ պարտականության հակասականությունը. օտարի կամքը «պարտադիր է», եթե այդ գործընթացն ուղեկցվում է հարկադրանքով: Իրավունքում միաժա-

մանակ առկա է և՛ կամք, և՛ անհրաժեշտություն՝ ինքնավարության իմաստով:

Ըստ իրավական ու բարոյական նախատեսման՝ իրավունքի և բարոյականության նորմերը համընկնում են միայն որոշակի չափով: Դրանց կապն արտահայտվում է հետևյալում. բարոյականությունը բնորոշվում է իբրև իրավունքի նպատակ, որից որպես հետևանք բխում է պարտականության գործառույթը:

Իրավական և բարոյական նախատեսման բովանդակության տարբերության հետ մեկտեղ արտահայտվում է այնպիսի դիրքորոշում, որ միայն բարոյականությունը կարող է հիմնավորել իրավական պարտականությունները: Իրավունքի նորմերը որպես կամքի արտահայտման միջոցներ կապված են «պարտադիրի» կատեգորիայի հետ անհրաժեշտության ուժով: Սակայն իրավական անհրաժեշտությունից չի կարելի առանձնացնել բարոյական պարտքի հասկացությունը: Ելնելով այդ ամենից՝ գիտնականները կատարել են եզրակացություն առ այն, որ իրավունքի՝ բարոյականության ոլորտը միացվում է, և իրավունքի նորմերը վերածվում են բարոյականության հատուկ նորմերի¹⁰:

Իրավական նորմի այդպիսի յուրահատկությունը բարոյականության ոլորտում ունի երկակի բնույթ: Իրավական պարտականությունները սոցիալական էթիկայում բարոյական տեսանկյունից դիտարկում են որպես «բարիք»: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ գիտական ճշմարտության տրամաբանական օրենքները չեն նվազեցնում դրանց ինքնուրույնությունը և նշանակությունը, այլ հակառակը՝ բարձրացվում են դեպի բոլորի կողմից ընդունված հասկացություններ: Իրավական կատեգորիաների անկախությունը պահպանվում է գնահատման ժամանակ՝ դրանց մշակութային պարտականությունների դիրքերից:

Իրավունքի ճանաչումը որպես բարոյականության մաս հնարավոր է, քանի որ, ըստ Ռադբրուխի, իրավունքի նպատակը բարոյականությունն է: Իրավունքը ծառայում է բարոյականությանը ոչ թե իրավական պարտականությունների առաջադրման միջոցով, այլ

8. Տե՛ս Ռադբրուխ Գ., նշվ. աշխ., էջ 53:
9. Տե՛ս նույն տեղում:
10. Տե՛ս Ռադբրուխ Գ., նշվ. աշխ., էջ 56:

իրավունքի շնորհիվ: Իրավունքը երաշխավորում է անձանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը, որպեսզի դրանք անհատների համար ապահովեն բարոյական պարտականությունների կատարումը:

Ռ. Իերինգը նշում էր, որ իրավունքի համար պայքարը բարոյական ինքնահաստատման պարտականություն է: Պայքարի կատարյալ տիպը ենթադրում է յուրաքանչյուր մարդու կողմից իր արժանապատվության պաշտպանություն, որն արտահայտվում է հա-

սարակական շահերի համար պայքարի ձևով¹¹:

Իրավունքը կարող է հատկանշվել որպես մարդկային արժանապատվության ապահովման միջոց առանց սեփական շահերի հաշվառման, բայց կարող է եսասիրական շահերի դրդապատճառ դառնալ, որոնք զուրկ են բարոյական արժեքներից: Այս առումով գտնում ենք, որ իրավունքը կարող է դրսևորվել և՛ բարոյականության, և՛ անբարոյականության տեսանկյունից:



11. Տե՛ս **Иеринг Р.** Борьба за право //В кн.: ф **Иеринг Р.** Избр. Труды, в 2-х томах, Т.1, СПб, 2006, էջ 24-36 и др:

ԱՆԺԵԼԱ ՏՈՆՈՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի
Տեխնիկական առարկաների ամբիոնի դասախոս,
ոստիկանության մայրո

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ՀԱՐԱՔԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ**

Աշխատանքի և աշխատանքային հարաբերությունների՝ իրավաբանորեն ճիշտ կարգավորումն էական նշանակություն ունի ինչպես երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կազմակերպման, այնպես էլ տնտեսական զարգացմանը խթանելու համար:

ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք: Աշխատանքային մյուս իրավունքները սահմանված են ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, Զբաղվածության մասին ՀՀ օրենքով, Ձեռնարկատիրության և ձեռնարկատիրական գործունեության մասին ՀՀ օրենքով և ոլորտի կարգավորման նպատակով ընդունված մի շարք այլ նորմատիվ իրավական ակտերով: Թե՛ սահմանադրության մեջ, թե՛ նշված օրենսդրական ակտերում ներառված են Մարդու իրավունքների՝ եվրոպական կոնվենցիայով և Սոցիալական խարտիայով ամրագրված հիմնարար սկզբունքները: Ստացվում է, որ ՀՀ-ում կա աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող բավականին լայն օրենսդրական դաշտ, որոնց ճիշտ կամ սխալ կիրառությունը կախված է կողմերի իրավունքների և պարտականությունների ոչ բավարար չափով տեղյակ լինելուց:

Աշխատանքը մշակութապես պայմանավորված և տարբեր հասարակություններում միմյանցից խիստ տարբերվող ընկալումներ ունի: Այն, ինչ աշխատանք է համարվում մեկ վայրում, մեկ այլ վայրում պարզապես ընտանեկան կամ ընկերական հարաբերություններից բխող հոգատարության դրսևորում է, ինքնըստինքյան

ենթադրվող պարտականություն:

Աշխատանքային հարաբերությունները երկու կողմ ունեն՝ գործատու և աշխատող: Նրանց միջև հարաբերությունները կարգավորվում են օրենքով, սակայն անվիճելի է, որ այդ հարաբերությունները երբեմն կոնֆլիկտային են լինում: Աշխատանքային կոնֆլիկտների հիմնական պատճառը օրենքի չիմացությունն է, ինչը բնորոշ է թե՛ գործատուներին, թե՛ աշխատողներին: Աշխատանքային հարաբերությունների՝ իրավաբանորեն սխալ կազմակերպումը կարող է հանգեցնել տարբեր բացասական հետևանքների բոլոր կողմերի համար:

Հաճախ են դեպքերը, երբ գործատուներն աշխատակիցների հետ կնքում են ոչ թե աշխատանքային, այլ քաղաքացիաիրավական պայմանագրեր: Այդ պայմանագրերից բխող հետեվանքներին կանդադառնանք: Շարժառիթները տարբեր են: Երբեմն դրանք պայմանավորված են հարկային ու աշխատանքային օրենսդրությամբ սահմանված պահանջներից խուսափելու ցանկությամբ կամ, օրինակ, ՏՏ արտոնությունների օրենսդրությամբ սահմանված աշխատակիցների քանակի սահմանաչափը չանցնելու ձգտումով: Ճիշտ հասկանալու համար, թե ինչ պայմանագիր է պետք կնքել քաղաքացու հետ, անհրաժեշտ է իմանալ քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի միջև եղած տարբերությունները, դրանց դրական և բացասական կողմերը, առանձնահատկությունները, իրականացնել մանրակրկիտ վերլուծություն, ինչպես նաև հաշվի առնել կատարվելիք աշխատանքի բնույթը:

Քաղաքացիների համար աշխատանքա-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 116 2020

1. Տե՛ս Ավետիք Մեծլումյան, Աշխատանքային իրավունքի պաշտպանության մեխանիզմները Հայաստանում, էջ 3:

յին և քաղաքացիական իրավունքների (օբյեկտիվ իմաստով) տարբերակման բարդությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկու ճյուղերն ունեն ինչպես առարկայական, այնպես էլ մեթոդական նմանություն: Այնուամենայնիվ, իրավունքի նշված ճյուղերն ունեն էական տարբերություններ, որոնց հանգամանալից ուսումնասիրությունը և նպատակային կիրառությունն ունեն կարևոր նշանակություն:

Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով: Ինդիքն այն է, որ հաճախ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված պարտականությունների ստանձնումից և կատարումից խուսափելու նպատակով գործատուներն իրենց գործունեության մեջ ներգրավված և փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց հետ կնքում են քաղաքացիաիրավական պայմանագրեր, որոնց դրույթները գործատուների համար անհամեմատ նախընտրելի են աշխատանքային պայմանագրերի դրույթների համեմատությամբ:

Աշխատանքային պայմանագրով աշխատակիցը ընդունվում է որոշակի պաշտոնի և պարտավորվում է պարբերաբար կատարել տվյալ հաստիքի նկարագրով սահմանված աշխատանքային պարտականությունները, իսկ քաղաքացիաիրավական պայմանագրում հստակ սահմանվում է կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների ցանկը: Աշխատանքի արդյունքի մատակարարումը վավերացվում է կողմերի միջև կնքվող հանձնման-ընդունման ակտով: Այս դեպքում չի առանձնացվում որևէ հաստիք կամ պաշտոն:

Եթե անձն աշխատում է աշխատանքային պայմանագրով, ապա պայմանագրով հստակ սահմանվում է, թե ով է հանդիսանում ղեկավարը և ում անմիջական ենթակայության տակ է գտնվում աշխատակիցը, իսկ վերջինս պարտավոր է հետևել ղեկավարության հրահանգներին: Աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը կատարելիս կամ պաշտոնետեական լիազորություններն իրականացնելիս աշխատողը պարտավորվում է են-

թարկվել գործատուի (անկախ սեփականության ձևից, կազմակերպաիրավական տեսակից և այլն) մոտ սահմանված ներքին կարգապահական կանոններին և այլ ներքին իրավական ակտերին, իսկ քաղաքացիաիրավական պայմանագրերից (օրինակ՝ կապալի, շինարարական կապալի, կոմիսիայի, հանձնարարության, ծառայությունների վճարովի մատուցման և այլն) բխող իրավահարաբերություններում կոնտրագենտը (նշված դեպքերում՝ կապալառուն, կոմիսիոները, հանձնակատարը, կատարողը) պատվիրատուի հանդեպ այդպիսի պարտականություն չունի: Այսինքն՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով ստանձնած աշխատանքները կատարելիս աշխատանքը կատարողը կարող է ընտրել աշխատանքի ռեժիմ, ժամանակացույց, ամբողջ աշխատանքի կամ դրա առանձին մասերի կատարման տեխնոլոգիա և այլն՝ առանց այդ մասին պայմանագրի մյուս կողմին տեղեկացնելու պարտավորվածության:

Ի տարբերություն քաղաքացիաիրավական հարաբերությունների՝ աշխատանքային իրավահարաբերությունների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ իրավահարաբերության մի կողմն ունի մյուսի նկատմամբ ուղղակի և անմիջական իրավական ներգործության իրավունք: Ստացվում է՝ քաղաքացիաիրավական պայմանագրում կարևորն աշխատանքի արդյունքն է, ոչ թե գործընթացը: Պատվիրատուն իրավունք չունի միջամտել աշխատանքի կատարման ընթացքին՝ բացառությամբ օրենքով սահմանված կամ պայմանագրով նախատեսված որոշ դեպքերի: Պատվիրատուի մասնակցությունը գործընթացին սահմանափակվում է միջանկյալ հանձնման-ընդունման գործընթացներով: Այսինքն՝ անձն ինքնուրույն է կազմակերպում իր աշխատանքը:

Հաջորդ կարևոր տարբերությունը վերաբերում է աշխատանքային ռեժիմին: Աշխատանքային պայմանագրի կողմ հանդիսացող Աշխատակիցը պարտավոր է հետևել ներքին կարգապահական կանոններին և գործատուի կողմից հաստատված այլ ներքին ու անհատական իրավական ակտերին: Պայմանագրով սահմանվում է աշխատանքային գրաֆիկը, իսկ հաճախումներն արտացոլվում են աշխատաժամանակի տեղեկագրում: ՀՀ աշխատանքային

օրենսգիրքը սահմանում է, որ Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի: Աշխատանքային պայմանագրում նշված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է աշխատանքային պայմանագրի լուծման համար: Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից: Ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը չի կարող անցնել ութ աշխատանքային ժամից՝ բացառությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքով, օրենքով, այլ իրավական ակտերով և կոլեկտիվ պայմանագրով նախատեսված դեպքերի: Քաղաքացիաիրավական հարաբերությունների պայմանագրում սահմանվում են աշխատանքի մեկնարկի ու ավարտի ամսաթվերը, սակայն Կատարողն ինքնուրույն է որոշում, թե ինչ գրաֆիկով և ինչ կանոններով է աշխատելու:

Էական տարբերություն և առանձնահատկություն է նախատեսվում աշխատանքի կատարման հարցում. աշխատակիցը պարտավոր է ինքնուրույն կատարել իր աշխատանքային պարտականությունները, ինչն ամրագրվում է թե՛ աշխատանքային օրենսդրությամբ, թե՛ աշխատանքային պայմանագրով: Պատվիրատուի Կատարողը կարող է ներգրավել երրորդ անձանց աշխատանքների կատարմանը՝ հաշվի առնելով, որ ինքն է պատասխանատվություն կրելու պայմանագրի կատարման համար:

Ինչ վերաբերում է վարձատրությանը, գործատուն պարտավոր է ամեն ամիս կատարել Աշխատողի աշխատավարձի վճարումը: Աշխատավարձը պետք է փոքր չլինի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձից² (լրիվ աշխատանքային օրվա դեպքում), աշխատակիցը կարող է ստանալ պարգևատրումները, գործուղման մեկնելու պարագայում պարտադիր կերպով ստանալ օրապահիկ օրենքով սահմանված չափով: Հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքը, եթե այն նախատեսված չէ աշխատանքի ժամանակացույցով, կողմերի համաձայնությամբ վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի՝ առնվազն կրկնակի չափով, կամ աշխատողին մեկ ամսվա ընթաց-

քում տրամադրվում է վճարովի այլ հանգստյան օր, կամ այդ օրը ավելացվում է ամենամյա արձակուրդին:

Քաղաքացիաիրավական հարաբերություններում վարձատրության չափը, պայմանները (օրինակ կանխավճար և վերջնական մարում հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո) սահմանվում են պայմանագրով: Գործատուների կողմից անբարեխղճության դրսևորում է նաև Աշխատանքային պայմանագրում փաստացի աշխատավարձից ցածր աշխատավարձի գրանցումը, ինչը թույլ է տալիս գործատուին ավելի քիչ հարկ վճարել: Աշխատավարձի իրական չափը թաքցնելն ուղղակիորեն ազդում է աշխատողի՝ կենսաթոշակային հիմնադրամում կուտակումների մակարդակի վրա: Այդուհանդերձ, քանի որ կենսաթոշակի չափը բազմաթիվ աշխատողների համար դեռևս ոչ շոշափելի և ապագայի խնդիր է, աշխատողի ընդդիմացումն այս հարցում դեռևս հասունացած չէ:

Իրավագիտակից մարդու և սոցիալական պետության քաղաքացու համար շատ կարևոր է նաև աշխատանքային երաշխիքների կարգավորման համակարգը: Այստեղ ևս էական տարբերություններ կան աշխատանքային և քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ: Մասնավորապես, աշխատանքային պայմանագրով գործատուն պարտավոր է ապահովել աշխատանքային օրենսգրքով սահմանված երաշխիքների կատարումը՝ պարտավոր է տրամադրել

- ա) ամենամյա նվազագույն արձակուրդը,
- բ) անաշխատունակության նպաստների վճարը,
- գ) պայմանագիրը լուծելիս վճարել վերջնահաշվարկը, արձակման նպաստը,
- դ) վճարել պարապուրդի ժամանակահատվածի համար և այլն:

Մինչդեռ պատվիրատուն չի տրամադրում աշխատանքային օրենսգրքով սահմանված որևէ երաշխիքներ: Այս պայմանագրի շրջանակում Կատարողին չի կարող տրամադրվել արձակուրդի ոչ մի տեսակ, անաշխատունակության նպաստ, վերջնահաշվարկ, աշխատանքային ստաժ և այլն:

Ինչ վերաբերում է գործուղումներին,

2. Տե՛ս ՀՀ օրենքը Նվազագույն ամսական աշխատավարձի մասին, Ընդունված է 2003 թ. դեկտեմբերի 17-ին:

ապա ըստ ՀՀ կառավարության որոշման՝ «Ծառայողական գործուղումը գործատուի կամ նրա ներկայացուցչի կողմից աշխատողի հիմնական աշխատանքի վայրից դուրս որոշակի ժամկետով այլ վայրում աշխատանք կատարելու հանձնարարություն է: Աշխատողները ծառայողական գործուղման մեկնում են գործատուի անհատական իրավական ակտի համաձայն, որում նշվում են գործուղման վայրը (վայրերը՝ քաղաք, գյուղ), կազմակերպության անվանումը, նպատակը և ժամկետները»³: Նշված ձևակերպումներից ակնհայտ է, որ գործուղման կարող է մեկնել աշխատանքային իրավահարաբերությունների մեջ գտնվող, հետևաբար՝ աշխատանքային պայմանագրի կողմ հանդիսացող անձը՝ աշխատողը, որը ծառայողական գործուղման մեկնելու իրավունք ձեռք է բերում գործատուի անհատական իրավական ակտի (հրամանի) հիման վրա, իսկ քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում պատվիրատուն կատարողի նկատմամբ անմիջական ազդեցություն չունի, հետևաբար՝ կատարողի վերաբերյալ հրաման արձակելու իրավունք էլ չունի: Աշխատանքային պայմանագրերը հիմնականում պետք է կնքված լինեն անժամկետ: Աշխատանքային օրենսգիրքը խիստ սահմանափակ թվով դեպքերի համար է թույլատրում ժամկետային պայմանագրի կնքումը, իսկ քաղաքացիական օրենսգիրքը քաղաքացիաիրավական պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման համար հստակ ժամկետ նշելու պարտավորություն է նախատեսում կատարողի համար: Անուղղակիորեն ստացվում է, որ անժամկետ քաղաքացիաիրավական պայմանագիրը աշխատանքային պայմանագիր է, որի համար գործատուն չի ցանկանում ապահովել աշխատանքային օրենսգրքով սահմանված երաշխիքների կատարումը:

ՀՀ զարգացման ներկա փուլում օբյեկտիվորեն կարևորվում է տնտեսական հարաբերությունների զարգացումը, որոնց սուբյեկտներն են թե՛ գործատուները, թե՛ աշխատողները, թե՛ քաղաքացիաիրավական պայմանագրով

աշխատանք կատարող անձինք: Հաշվի առնելով նաև ՀՀ՝ զարգացման փուլում գտնվելու հանգամանքը՝ էական է նմանապես հասկանալ միջազգային հաջողված փորձն աշխատանքային հարաբերությունների կարգավորման հարցում:

ԱՄՆ-ում կիրառվում է, այսպես կոչված «կամքով աշխատանք» մեխանիզմը: Սա այն դեպքն է, երբ աշխատանքային հարաբերություններում ապահովվում է մաքսիմալ ճկունություն մինչև այն աստիճան, որ կողմերը, համաձայնության գալով, չեն կնքում աշխատանքային պայմանագիր, սակայն գործատուն աշխատողի համար ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ ամրագրված բոլոր երաշխիքները: Աշխատողն այս տիպի հարաբերություններում ազատ է: Նա ցանկացած ժամանակ կարող է խզել աշխատանքային հարաբերությունները: Նրա համար սահմանվում է աշխատաժամանակի ճկուն գրաֆիկ՝ ելնելով վերջինիս ցանկությունից⁴:

Ֆրանսիայի օրենսդրությունն այլ աշխատանքային հարաբերություններ՝ ավելի մանրամասն կարգավորում է նախատեսել՝ միևնույն ժամանակ պահպանելով իրավունքի ձևի և բովանդակության խելամիտ հարաբերակցությունը: Մասնավորապես, պայմանագրի տեսակը հստակորեն բխում է նաև անվանումից. առանձնացվել են աշխատանքային պայմանագրերը՝ կախված դրանց տևողությունից, կնքվելիք անձի տարիքից, կատարվելիք աշխատանքի բնույթից և այլն, իսկ համապատասխան նախարարությունը պարբերական իրազեկումներ է իրականացնում՝ քաղաքացիներին տեղեկացնելով, թե օրենսդրական ինչ հարթակում պիտի կարգավորվի իրենց կողմից իրականացվող աշխատանքային հարաբերությունը:

Տարբեր երկրների փորձի համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այն հասարակություններում, որտեղ կառուցվածքային մակարդակում լուծված չէ զբաղվածության խնդիրը և գործազրկության տոկոսը բավականին բարձր է բնական (թույլատրելի, ընդունելի) մակարդակից, աշխատանքային

3. Տե՛ս ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշումը:
 4. Տե՛ս Տեղեկանք-հիմնավորում «ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ կազմված ՀՀ վարչապետի 05.05.2017թ. N 02/14.10/10705-17 հանձնարարականի շրջանակներում, էջ 2,3:

շարժումների, աշխատողների իրավագիտակցության և իրավունքների խախտման առաջացման հավանականությունը ցածր է: Փաստացի ստացվում է, որ այն հասարակություններում, որտեղ կառուցվածքային մակարդակում լուծված չէ զբաղվածության խնդիրը և գործազրկության տոկոսը բավականին բարձր է բնական (թույլատրելի, ընդունելի) մակարդակից, աշխատանքային շարժումների առաջացման հավանականությունը ցածր է, ինչն էլ նպաստում է մարդկանց կողմից մի շարք խնդիրների բարձրաձայնելուց խուսափելուն:

Այսպիսով, զրն է քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի տարբերությունը: Այդ հարցը, որն առաջին հայացքից տեսական բնույթ է կրում, ունի ակնհայտ գործնական իմաստ և վերաբերում է շատերին:

Հարաբերությունների բնույթը և, համապատասխանաբար, կողմերի իրավունքներն ու պարտականությունները կախված են ոչ թե ստորագրված պայմանագրից, այլ այն վիճակից, թե փաստացի ինչպիսի հարաբերություններ են ստեղծվել նրանց միջև:

Ամփոփելով վերլուծությունը՝ առանձնացնենք, թե ինչ բացասական հետևանքներ է ունենում քաղաքացիաիրավական և ոչ աշխատանքային պայմանագիր կնքելը աշխատակիցների համար:

- Աշխատակիցը չի ունենում վճարովի ամենամյա նվազագույն արձակուրդ, ինչպես նաև չի կարող օգտվել արձակուրդների այլ տեսակներից:

- Աշխատակիցը չի ստանում անաշխատունակության և օրենսդրությամբ սահմանված այլ նպաստները:

- Վարձատրության չափը որոշելիս հաշվի չեն առնվում աշխատանքի նվազագույն, արտաժամյա, հանգստյան և տոնական օրերին կատարված աշխատանքի դիմաց վարձատրու-

թյան պայմանները:

- Աշխատակցի աշխատանքային ժամերը այլևս սահմանափակված չեն աշխատաժամանակի առավելագույն տևողությամբ:

Ի վերջո, Աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է. «Եթե դատական կարգով հաստատված է, որ գործատուի և աշխատողի միջև կնքված քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրով փաստացի կարգավորվում են աշխատանքային հարաբերություններ, ապա նման հարաբերությունների նկատմամբ կիրառվում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները: Տվյալ դեպքում, դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից, կողմերի միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագիրն աշխատանքային պայմանագրով փոխարինելով՝ վարձու աշխատողի համար հնարավոր է դառնում ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձ ստանալու, աշխատանքի անվտանգ և հիգիենիկ պայմաններ ունենալու, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, հանգստի ժամանակի նվազագույն տևողության, պայմանագրային հարաբերությունների օրինական դադարեցման և այլ իրավունքների իրականացումը, ինչից նա զրկված է եղել քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած լինելու պատճառով»:

Այս հոդվածից բխող դատական նախադեպ, ցավոք, դեռևս ՀՀ դատարանների կողմից չի ստեղծվել, բայց հույս ունենք, որ առաջին իսկ վճիռն ավելի կզգոնացնի աշխատաշուկայում ձևավորված ոչ այնքան իրավական մոտեցումը աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ:



ՀՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան,
իրավ. գիտ. թեկնածու

**ԳՈՅՔԱՅԻՆ ՎՆԱՍՐ ՈՐՊԵՍ
ԾԱՆՐ ՀԵՏԵՎԱՆՔ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Սույն գիտական հոդվածի սահմաններում քննարկման առարկա են դարձվում «այլ ծանր հետևանք» քրեաիրավական գնահատողական հասկացությունը և գույքային վնասը որպես ծանր հետևանք գնահատելու հնարավորությանը վերաբերող խնդիրները: Աշխատանքի ծավալում ներառված է քրեաիրավական գնահատողական հասկացությունների կիրառման, հիշատակված քրեաիրավական գնահատականը տալու հարցերի ուսումնասիրությունը:

Բանալի բառեր. գնահատողական հատկանիշ, գույքային վնաս, այլ ծանր հետևանքներ, կամայական մեկնաբանման վտանգ:

ЗОРАЙР АРУТЮНЯН

Адвокат, член Палаты адвокатов Республики Армения
канд. юрид. наук

**ИМУЩЕСТВЕННЫЙ ВРЕД КАК
ТЯЖКОЕ ПОСЛЕДСТВИЕ В УГОЛОВНОМ ПРАВЕ РА**

В рамках настоящей научной статьи обсуждаются уголовно-правовое оценочное понятие иных тяжких последствий и проблемы возможностей оценки имущественного вреда как тяжкого последствия. В объем работы включены анализ вопросов касающихся применения уголовно-правовых оценочных понятий, возможности дачи упомянутой квалификации.

Ключевые слова: оценочное качество, имущественный вред, иные тяжкие последствия, опасность произвольного толкования.

ZORAYR HARUTYUNYAN

Advocate, Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia
PhD in Law

**PROPERTY HARM AS A GRAVE CONSEQUENCE
IN THE CRIMINAL LAW OF RA**

In the frames of the current scientific article the evaluative concept of another severe consequences in criminal law and problems of the possibilities of assessing property damage as a grave consequence are discussed. The scope of the work includes analysis of the issues related to the use of criminal law evaluative concepts and to the possibility of giving the mentioned qualifications.

Key words: evaluative features, property harm, another grave consequences, danger of arbitrary interpretation.

ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության առաջատար մասնագետ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող

**ԱՊՕՐԻՆԻ ԾԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՑԱՏԵՍԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԺԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածում քննարկվում են ապօրինի ձեռնարկատիրություն հանցատեսակի ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում և դրա դեմ տարվող պատժողական քաղաքականության հիմնախնդիրները: Արձանագրելով տվյալ հանցագործության պրոգրեսիվ դինամիկան, վերհանելով դրա դեմ տարվող պատժողական քաղաքականության որոշակի խնդրահարույց հարցերը՝ աշխատության շրջանակներում կատարվել են մի շարք առաջարկներ, որոնք տեսական և գործնական առումով կարող են ունենալ էական նշանակություն:

Բանալի բառեր. ապօրինի ձեռնարկատիրություն, վարչական պատասխանատվություն, օրենսդրություն, վիճակագրական տվյալներ, պատիժ, խրախուսական նորմեր:

МЕЛИК МЕЛИКЯН

Ведущий специалист Службы правовой экспертизы
Кассационного суда РА,
Студент магистратуры юридического факультета ЕГУ

**ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ДЕЯНИЯ НЕЗАКОННОГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА
И ОСОБЕННОСТИ НАКАЗАНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

В статье рассматривается современное состояние деяния незаконного предпринимательства в Республике Армения, а также вопросы уголовной политики в отношении него. Учитывая прогрессивную динамику рассматриваемого преступления, выявляя некоторые проблемные вопросы ведущейся уголовной политики против него, в работе сделан ряд предложений, имеющие теоретическое и практическое значение.

Ключевые слова: незаконное предпринимательство, административная ответственность, законодательство, статистические данные, наказание, нормы-стимулы

MELIK MELIKYAN

Leading specialist of the Department of Legal Expertise
of the Cassation court of the RA,
Master's student of YSU Faculty of Law

**THE TRENDS OF DEVELOPMENT OF ILLEGAL ENTERPRISE AND SPECIFICITIES OF
PUNISHMENT IN THE REPUBLIC OF ARMENIA**

The current article discusses the state of the crime of illegal enterprise in the Republic of Armenia and the issues of the penal policy against it. Considering the progressive dynamics of the discussing crime as well as identifying some of the issues of punitive policy against it, a number of suggestions have been made within the work, which may be of theoretical and practical significance.

Key words: illegal enterprise, administrative responsibility, legislation, statistical data, punishment, incentives.

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակի՝ ժողովրդական մեղադրանքի նշանակությունը, որը դասակարգվում է հասարակական-քաղաքական և իրավական-տեխնիկական տեսակների: Այդ լույսի ներքո բացահայտվում են ժողովրդական մեղադրանքի կարևորությունն ու մեղադրանքի՝ տվյալ տեսակի կազմակերպման միջոցով լուծվող ենթադրյալ խնդիրները:

Բանալի բառեր. մեղադրանք, մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանք, ժողովրդական մեղադրանք, մեղադրանքի տեսակներ, պետական մեղադրանք:

АРТАК КАЗАРЯН

Аспирант Образовательного комплекса полиции Республики Армения

ЗНАЧЕНИЕ НАРОДНОГО ОБВИНЕНИЯ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

В статье рассматривается значимость вида обвинения, осуществляемого частным лицом; народного обвинения, которое классифицируется по общественно-политическим и правового-техническим значениям. В этом свете раскрываются важность народного обвинения, предполагаемые задачи, решаемые посредством организации данного вида обвинения.

Ключевые слова: обвинение, обвинения, осуществляемого частным лицом, народное обвинение, виды обвинения, государственное обвинение

ARTAK GHAZARYAN

Postgraduate student of the Educational Complex of the Police of the RA

THE SIGNIFICANCE OF ACTIO POPULARIS IN CRIMINAL PROCEDURE

The article considers the significance of the type of prosecution carried out by a private person (actio popularis), which is classified by socio-political and legal-technical types of significance. In this light the importance of actio popularis and anticipated tasks that may be resolved by organizing this type of prosecution is revealed.

Keywords: prosecution, prosecution carried out by a private person, actio popularis, types of prosecution, public prosecution

ՈՌԲԵՐՏ ՄՇԵՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան, Իրավագիտության ֆակուլտետ,
իրավագիտության մագիստրոս

**ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Սույն աշխատանքն ուսումնասիրում է մեղադրանքի գիտական և օրենսդրական բնորոշումները, դրա քրեադատավարական և նյութաիրավական իմաստներով տեսական ըմբռնումները, ինչպես գործող օրենսգրքում, այնպես էլ Նախագծում մեղադրանքի վերաբերյալ տեղ գտած դրույթները, ՀՀ Վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի՝ թեմային վերաբերող մի շարք որոշումներ և վճիռներ: Ուսումնասիրել ենք նաև մեղադրանքի կառուցվածքային մոդելները, դրա պարզ ու բարդ տեսակները: Որոշ առաջարկների և նկատառումների հետ մեկտեղ առաջարկում ենք նաև մեղադրանքի ընդհանրական հասկացությունը, որն էլ ամփոփում է սույն գիտական հոդվածը:

Բանալի բառեր. մեղադրանք, նյութաիրավական իմաստով մեղադրանք, դատավարական իմաստով մեղադրանք, որպես մեղադրյալ ներգրավել, քրեական հետապնդում հարուցել, դատախազ, մեղադրանք առաջադրել, մեղադրանք ներկայացնել, մեղադրանքի երկտարր և եռատարր մոդելներ, պարզ մեղադրանք, բարդ մեղադրանք, Նախագիծ, Վճռաբեկ դատարան, Եվրոպական դատարան:

РОБЕРТ МГЕРЯН

Ереванский государственный университет, Юридический факультет,
Магистр юриспруденции

ПОНЯТИЕ ОБВИНЕНИЯ И ФУНКЦИОНАЛЬНЫЙ ХАРАКТЕР В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

Данная работа изучает научные и законодательные характеристики обвинения, теоретические подходы связанные с его уголовно-процессуальным и материально-правовым понятиям, как в действующем кодексе, так же в Проекте, ряд решения и постановления Кассационного суда РА и Европейского суда. А также изучали структурные модели обвинения, его простые и сложные виды. Вместе с некоторыми предложениями предлагаем позицию общей концепции обвинения, что и обобщает данная научная статья.

Ключевые слова - обвинение, обвинение в материально-прововом смысле, обвинение в процессуальном смысле, привлекать в качестве обвиняемого, возбудить уголовное преследование, прокурор, предъявить обвинение, представить обвинение, двухэлементные и трёхэлементные модели обвинения, простое обвинение, сложное обвинение, Проект, Кассационный суд, Европейский суд.

ROBERT MHERYAN

Yerevan State University, Faculty of Law, Master of Law

**THE CONCEPT OF A CHARGE AND ITS FUNCTIONAL CHARACTERISTICS
IN THE CRIMINAL PROCEDURE OF RA**

The present article discusses scientific and legal specifications of a charge, theoretical perceptions of its material-legal and judicial-legal senses, clauses on a charge both in the current Code and the Draft, a range of decisions and judgments related to the topic made by the Court of Cassation of RA and the European Court. We have also investigated structural models of a charge, its simple and complex types. Along with some suggestions and considerations we suggest general concept of a charge which summarizes this scientific article.

Keywords: charge, material-legal charge, judicial-legal charge, involve as an accused, bring criminal prosecution, prosecutor , file a charge, bring a charge, two-element and three-element models of a charge, simple charge, complex charge, Draft, Court of Cassation, European Court.

ԲԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆ

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ և ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրությամբ հեղինակն առանձին հարցադրումների դիտարկման և վերլուծության հիման վրա բացահայտել է գործադիր իշխանության մարմինների համակարգի կազմավորման հարցում առկա մի շարք հիմնախնդիրներ և առաջարկել է դրանց լուծման ուղիներ:

Բանալի բառեր. պետական իշխանության կայուն և արդյունավետ համակարգ, պետական կառավարման համակարգ, գործադիր իշխանության մարմինների համակարգ, պետական իշխանության թև:

БАГРАТ КАЗИНЯН

Прокурор прокуратуры административных районов Арабкир и Канакер-Зейтун города Еревана, Советник юстиции первого класса, кандидат юридических наук, доцент

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ОСНОВЫ ФОРМИРОВАНИЯ СИСТЕМЫ ОРГАНОВ ИСПОЛНИТЕЛЬНОЙ ВЛАСТИ КАК УСЛОВИЕ СТАБИЛЬНОСТИ И ЭФФЕКТИВНОСТИ СИСТЕМЫ

В данной статье автором был выявлен ряд проблем формирования системы органов исполнительной власти на основе наблюдения и анализа отдельных вопросов и предложены пути их решения.

Ключевые слова: устойчивая и эффективная система государственной власти, система государственного управления, система органов исполнительной власти, ветвь государственной власти.

BAGRAT CHAZINYAN

Prosecutor of the prosecutor’s office of the Arabkir and Kanaker-Zeytun administrative districts of Yerevan, First Class Councillor of Justice, PhD of Law, Associate Professor

CONSTITUTIONAL BASIS OF THE FORMATION OF THE EXECUTIVE BODY SYSTEM AS A PRECONDITION FOR STABILITY AND EFFECTIVENESS

In this article, the author has identified a number of problems in the mechanism formation of the system of executive bodies, based on the observation and analysis of particular questions and suggested ways of solving them.

Keywords: Sustainable and Effective System of State Power, System of Public Administration, System of Executive Bodies, State Power Wing.

ԼԻԼԻԹ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հոդվածում վեր են հանվում իրավունքների սահմանափակմանն առաջադրվող պայմանները, քննարկվում են Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքն ու իրավունքի էության՝ անխախտելիության պահանջը: Հեղինակն անդրադառնում է համաչափության սկզբունքի բաղադրատարրերին և շեշտում ՀՀ Սահմանադրության մեջ «չափավորություն» պայմանի ամրագրման անհրաժեշտությունը՝ ի լրումն սահմանված նպատակին հասնելու համար կիրառվող իրավունքների սահմանափակման միջոցներին առաջադրվող անհրաժեշտության և պիտանիության պայմանների:

Բանալի բառեր. սահմանափակում, համաչափություն, օրինականություն, չափավորություն, իրավունքի էություն

ЛИЛИТ СУКИАСЯН

Европейский университет, аспирант Департамента права

ОГРАНИЧЕНИЕ ПРАВ: АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ

В статье излагаются условия ограничения прав, обсуждается принцип пропорциональности, закрепленный в Конституции, и требование о неприкосновенности сущности права.

Автор поднимает проблему принципа соразмерности и обсуждая составляющие этого принципа (пригодность и необходимость), подчеркивает надобность внести в Конституцию условие «умеренности» по отношению мер выбранных для ограничения основных прав и свобод.

Ключевые слова: ограничение, соразмерность, законность, умеренность, сущность права

LILIT SUKIASYAN

European University, Law department, PhD student

RESTRICTIONS OF RIGHTS: CURRENT ISSUES

The article outlines the conditions for restricting rights, discusses the principle of proportionality prescribed in the Constitution, and the requirement for the inviolability of the essence of law.

The author touches upon the elements of the principle of proportionality and emphasizes the necessity of adding the “moderation” measure in line with “necessity” and “suitability”, regarding the means chosen for restricting rights and the purpose stated by the Constitution.

Keywords: restrictions, proportionality, legality, moderation, essence of law

ՄԱՆՈՒԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության գնդապետ

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄՈՉՄՈՒՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդվածում կրոնական համոզմունքի ազատության իրավունքի իրականացման համատեքստում հստակեցված են սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հնարավորության հարցերը: Հոդվածում մինչև քննարկվող սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հնարավոր տեսակներին անդրադառնալը ներկայացված է կրոնական համոզմունքի ազատության իրավունքի պաշտպանության առարկան: Քննարկվել են նաև կրոնական կազմակերպությունների, ֆիզիկական անձանց կողմից հետազոտվող սուբյեկտիվ իրավունքի չարաշահման դրսևորումները և դրանց դեմ պայքարի հնարավոր գործիքները:

Բանալի բառեր. կրոնական համոզմունք, կրոնի ազատություն, սուբյեկտիվ իրավունքի չարաշահում:

МАНУК МУРАДЯН

Начальник юридического управления полиции РА, кандидат юридических наук, доцент, полковник полиции

ВАГЕ ТОРОСЯН

Юрист Европейского университета, кандидат юридических наук

К ВОПРОСУ О ЗЛОУПОТРЕБЛЕНИЕ ПРАВА НА СВОБОДУ РЕЛИГИОЗНЫХ УБЕЖДЕНИИ

В работе уточняется проблема злоупотребления субъективных прав в контексте права на свободу религиозных убеждений. Прежде чем ссылаться на возможные виды злоупотребления обсуждаемого основного права, в статье представляется вопрос предмета защиты права на свободу религиозных убеждений. В основной части статьи подвергается обсуждению как проявления злоупотребления данным субъективным правом со стороны религиозных организаций и отдельных лиц, так и возможные средства борьбы с ними.

Ключевые слова: религиозное убеждение, свобода религии злоупотребление субъективным правом.

MANUK MURADYAN

Head of the Legal Department of Police of the Republic of Armenia PhD in law, associate professor, Police Colonel

VAHE TOROSYAN

Lawyer at European University PhD in Law

ON THE ISSUES OF ABUSE OF THE RIGHTS OF FREEDOM OF RELIGIOUS BELIEF

The article clarifies the possible issues of abusing the right in the context of freedom of right of religious belief. Before referring to possible types of abuse of right, the subject of protection of freedom of rights of religious belief is discussed in the article. In the main part of the article are examined the manifestations of abuse of right by religious organizations and individuals and the possible tools of struggle against such kinds of abuse.

Keywords: religious belief, freedom of religion, abuse of right

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

ՀՀ փոխվարչապետի խորհրդական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածում լուսաբանվել են վարչական վարույթի, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության շրջանակում ծանուցումների հարցերը, վեր են հանվել ՀՀ ծանուցումների համակարգում առկա հիմնական խնդիրները, հիմնավորվել է ՀՀ-ում պաշտոնական ծանուցումների միասնական համակարգ ստեղծելու և գործարկելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. պաշտոնական ծանուցում, միասնական համակարգ, էլեկտրոնային ծանուցումներ:

СУРЕН КРМОЯН

Советник заместителя премьер-министра РА,
кандидат юридических наук

ШУШАНИК ГУКАСЯН

Преподаватель кафедры гражданского права ЕГУ
кандидат юридических наук

**НЕОБХОДИМОСТЬ СОЗДАНИЯ ЕДИНОЙ СИСТЕМЫ ОФИЦИАЛЬНЫХ УВЕДОМЛЕНИЙ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

В статье освещены вопросы уведомлений в рамках административного судопроизводства, гражданского, административного и уголовного судопроизводства, освещены основные проблемы в системе уведомлений Республики Армения, обоснована необходимость создания и функционирования единой системы официальных уведомлений в Республике Армения.

Ключевые слова: Официальное уведомление, единая система, электронные уведомления.

SUREN KRMOYAN

Adviser to Deputy Prime Minister, PhD in Law

SHUSHANIK GHUKASYAN

Lecturer of YSU Chair of Civil Law, PhD in Law

**THE NEED OF CREATING A UNIFIED SYSTEM OF OFFICIAL NOTIFICATIONS IN
THE REPUBLIC OF ARMENIA**

The article covered the issues of notifications in the framework of administrative procedure, civil, administrative and criminal court proceedings, highlighted the main issues in the notification system of the Republic of Armenia, justified the need to establish and operate a unified system of official notifications in the Republic of Armenia.

Keywords: official notification, unified system, electronic notifications.

ԷՂԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, իրավաբան,
ՀԵՀ մագիստրատուրա, ուսանող

ՄՈՌԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՔ

Հոդվածը վերաբերում է մոռացված լինելու իրավունքին, որի առաջացումը պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես՝ համացանցի լայն տարածմամբ: Սույն իրավունքի էությունն այն է, որ անձն իրավունք է ստանում համացանցից հեռացնել իր վերաբերյալ վիրավորանք կամ զրպարտություն պարունակող, ինչպես նաև արդիականությունը կորցրած, այլևս իրական նպատակ չհետապնդող տեղեկատվությունը:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տարբեր երկրների ու միջազգային որոշ ատյանների կողմից ճանաչված այս իրավունքը դեռևս ՀՀ-ում ճանաչված չէ: Թեև ՀՀ-ում գործող օրենսդրությունում առկա նորմերի որոշակի մեկնաբանումը թույլ կտա հասնել մոռացված լինելու իրավունքով հետապնդվող նպատակներից մի քանիսին, սակայն դա բավարար չհամարելով՝ ներկայացրեցինք որոշակի օրենսդրական առաջարկներ, որոնք, մեր կարծիքով, ուղղված կլինեն անձի հիմնական իրավունքների և ազատությունների՝ էլ ավելի ապահովմանն ու պաշտպանությանը:

Բանալի բառեր. մոռացված լինելու իրավունք, անձնական տվյալ, համացանց, հիմ-նական իրավունք, միջազգային փորձ, տվյալների պաշտպանություն, տեղեկատվության ազատություն, մեկնաբանում, օրենսդրական առաջարկ:

ЭДГАР АВЕТИСЯН

АРАРАТБАНК ЗАО, юрист
студент ЕУА

**ПРАВО БЫТЬ ЗАБЫТЫМ КАК ОСНОВАНИЕ
ДЛЯ ОГРАНИЧЕНИЯ ПРАВА НА СВОБОДУ ИНФОРМАЦИИ**

В статье речь идет о праве быть забытым, появление которого обусловлено широким распространением информационных технологий, в частности, интернета. Суть этого права состоит в том, что лицо имеет право удалять информацию, которая содержит оскорбление или клевету по отношению к нему в Интернете, и потерял актуальность, информация, которая больше не преследует своей истинной цели.

Исследование показало, что это право, признанное различными странами и некоторыми международными организациями, еще не признано в РА.

Хотя определенное толкование существующих норм, действующих в законодательстве РА, позволит достичь нескольких целей, преследуемых с правом быть забытым, однако мы не сочли достаточным выдвинуть некоторые законодательные предложения, которые, по нашему мнению, будут направлены на дальнейшую защиту и защиту основных прав и свобод человека.

Ключевые слова: право быть забытым, личные данные, интернет, основной закон, международный опыт, защита данных, свобода информации, толкование, законодательное предложение.

EDGAR AVETISYAN

Lawyer at ARARATBANK PJSC

Student in EUA

**THE RIGHT TO BE FORGOTTEN AS A BASIS FOR RESTRICTING THE RIGHT
TO FREEDOM OF INFORMATION**

The article deals with the right to be forgotten, the emergence of which is driven by the widespread use of information technologies, particularly the Internet. The essence of this right is that a person has the right to remove information that contains insult or defamation on the Internet, and has lost relevance, information no longer pursuing its true purpose.

The study showed that this right recognized by various countries and some international organizations is not yet recognized in Armenia. Although certain interpretation of the norms in the RA legislation will allow to achieve some of the goals pursued by the right to be forgotten, however, we did not consider it sufficient to make certain legislative proposals which, in our opinion, would be aimed at further safeguarding and protecting the fundamental rights and freedoms of the individual.

Keywords: right to be forgotten, personal data, internet, basic law, international experience, data protection, freedom of information, interpretation, legislative proposal.

ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ՀՈՒՂԱՐԿՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՂՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն հոդվածը նվիրված է դելիկտային պարտավորություններում հուղարկավորության ծախսերի անհրաժեշտության և ողջամտության սահմանների հստակեցմանը: Հոդվածում վերլուծվում է այս ինստիտուտի ներպետական և արտասահմանյան պրակտիկան: Այդ վերլուծության արդյունքում քննարկվում են պրակտիկ թերությունները: Մասնավորապես, հեղինակի կողմից առաջարկվում են որոշակի չափանիշներ, որոնք կարող են օգտակար լինել այս ինստիտուտի կիրառման ժամանակ:

Բանալի բառեր. դելիկտային պարտավորություններ, հուղարկավորության ծախսեր, անորոշ հասկացություններ, անհրաժեշտություն, ողջամտություն:

ДАВИТ ОГАНЯН

Аспирант Образовательного комплекса полиции Республики Армения

О ПРЕДЕЛАХ НЕОБХОДИМОСТИ И РАЗУМНОСТИ ПОХОРОННЫХ РАСХОДОВ

Данная статья посвящена определению пределов необходимости и разумности похоронных расходов в деликтных обязательствах. В статье анализируются отечественная и зарубежная практика данного института. В результате данного анализа обсуждаются практические недостатки. В частности, автор предлагает определенные критерии, которые могут быть полезны при применении этого института.

Ключевые слова: деликтные обязательства, похоронные расходы, неясные понятия, необходимость, разумность.

DAVIT OHANYAN

Postgraduate student of Educational Complex of Police of RA

ABOUT BOUNDARIES OF NECESSITY AND REASONABLENESS OF FUNERAL EXPENSES

This article is devoted to the clarification of necessity and reasonableness of funeral expenses in tort law. The domestic and foreign practice of this institute have been analyzed in the present research. As a result of that analyze, the practic disadvantages are discussed. The author, particularly, offers certain criterias, which can be useful when applying this institute.

Key words: tort law, funeral expenses, vague notions, necessity, reasonableness.

ԼԻԱ ԹԵՎՈՍՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայրորդ

**ԱՐՇԵՏՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հոդվածում վերլուծվում են արտասահմանյան երկրներում հեղինակային իրավունքի համատեքստում արհեստական բանականության իրավական կարգավորման վերաբերյալ տարբեր մոտեցումները: Ներկայացվել և մեկնաբանվել են արհեստական բանականության կողմից ստեղծված գիտության, գրականության ու արվեստի ստեղծագործությունները որպես հեղինակային իրավունքի օբյեկտ և արհեստական բանականության՝ որպես հեղինակային իրավունքի սուբյեկտ դիտարկելու հարցերը: Այդ իրավահարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը թելադրում է ուշադրության կենտրոնում պահել արհեստական բանականության արագ բարեշրջումը և ձեռնարկել քայլեր Հայաստանի Հանրապետությունում հեղինակային իրավունքի տեսակետից իրավական կարգավորման ուղղությամբ:

Բանալի բառեր. մտավոր սեփականություն, հեղինակային իրավունք, արհեստական բանականություն, հեղինակային իրավունքի օբյեկտ, հեղինակային իրավունքի սուբյեկտ, իրավական կարգավորում, պատասխանատվություն:

ЛИА ТЕВОСЯН

Соискатель юридической кафедры Международного университета Евразия

**ПРОБЛЕМЫ ПРОВООВОГО РЕГУЛИРОВАНИЯ ИСКУСТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА
В КОНТЕКСТЕ АВТОРСКОГО ПРАВА**

В данной статье анализируются различные подходы к прововому регулированию искусственного интеллекта в контексте авторского права в зарубежных странах. Вопросы просмотра защищенных авторским правом произведений науки, литературы и искусства, созданных искусственным интеллектом, были представлены и интерпретированы. Необходимость правового регулирования этих правоотношений диктует необходимость быстрого совершенствования искусственного интеллекта и принятия мер в области авторского права в Республике Армения, в области правового регулирования.

Ключевые слова: искусственный интеллект, объект авторского права, субъект авторского права, правовое регулирование, ответственность.

LIA TEVOSYAN

PhD student in Law of the Eurasia International University

THE ISSUES OF LEGAL REGULATION OF ARTIFICIAL INTELLIGENCE IN THE CONTEXT OF COPYRIGHT

This article analyzes the different approaches to legal regulation of artificial intelligence in the context of copyright in foreign countries.

Issues of science, literature, and art created by artificial intelligence as an object of copyright and artificial intelligence as a subject of copyright have been presented and interpreted. The necessity of legal regulation of these legal relations dictates to keep in focus the rapid refinement of artificial intelligence and to take steps towards legal regulation of copyright in the Republic of Armenia.

Key words: intellectual property, copyrights, artificial intelligence, object of copyright, subject of copyright, legal regulation, responsibility.

ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան,
 հայցորդ

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ
 ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

Սույն հոդվածում հանգամանորեն վերլուծության են ենթարկվում իրավունքի և բարոյականության փոխկապակցվածության, փոխներգործության և փոխալայնանավորվածության հետ կապված տեսական և կիրառական խնդիրները սոցիալական նորմատիվ կարգավորիչների համատեքստում:

Բանալի բառեր. իրավունք, բարոյականություն, սոցիալական նորմատիվ կարգավորիչ, հասարակության բնականոն գործունեություն, մարդու վարքագիծ:

АРМАН ОГАННИСЯН

Армяно-российский международный университет «Мхитар Гош»,
 соискатель

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ СООТНОШЕНИЯ ПРАВА И МОРАЛИ

В данной научной статье подробно анализируются теоретические и практические вопросы, касающиеся взаимосвязи права и морали, а также их взаимодействия и соотношения в контексте социальных норм.

Ключевые слова: закон, мораль, социальные нормы, нормальное функционирование общества, поведение человека.

ARMAN HOVHANNISYAN

“Mkhitar Gosh” Armenian-Russian International University,
 PhD applicant

**THEORETICAL AND PRACTICAL ISSUES OF INTERDEPENDENCE BETWEEN
 LAW AND MORALITY**

The article discusses theoretical and practical issues related to the interdependence between law and morality, as well as their interrelatedness and reciprocity in the context of social norms.

Keywords: law, morality, social norms, normal functioning society, human behavior.

ԱՆԺԵԼԱ ՏՈՆՈՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի
Տեխնիկական առարկաների ամբիոնի դասախոս,
ոստիկանության մայոր

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ**

Աշխատանքային և քաղաքացիական իրավունքների (օբյեկտիվ իմաստով) տարբերակման բարդությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկու ճյուղերն ունեն ինչպես առարկայական, այնպես էլ մեթոդական նմանություն:

Հոդվածում ներկայացվում են պայմանագրերի կնքման հետևանքով կողմերի՝ ուղղակի և անմիջական իրավական ներգործություն ունենալու իրավունքը, աշխատանքի արդյունքը, գործընթացը և այլն:

Փորձել ենք հնարավորինս մանրամասն ներկայացնել աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի տարբերությունները, հարաբերակցությունը, առավելություններն ու բացասական կողմերը:

Բանալի բառեր. աշխատանքային պայմանագիր, քաղաքացիաիրավական պայմանագիր, աշխատող, գործատու, աշխատավարձ:

АНЖЕЛА ТОНОЯН

Майор полиции,
преподаватель Кафедры технических предметов
Колледжа образовательного комплекса полиции РА

**СООТНОШЕНИЕ ТРУДОВОГО И ГРАЖДАНСКО-ПРАВОВОЙ ДОГОВОРОВ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Трудность различения трудовых и гражданских прав (в объективном смысле) заключается в том, что эти две ветви имеют как предметное, так и методологическое сходство.

В статье представляется право сторон иметь прямое и непосредственное юридическое воздействие в следствие заключения договоров, а также результат и процесс работы и т. д.

Мы попытались максимально подробно представить различия и соотношения, преимущества и недостатки трудовых и гражданско-правовых договоров.

Ключевые слова: трудовой договор, гражданско-правовой договор, работник, работодатель, зарплата.

ANJELA TONOYAN

Lecturer of the Chair of Technical
Disciplines of College of the Educationbal Complex of Police of RA,
Police Major

CORRELATION BETWEEN LABOR AND CIVIL-LEGAL AGREEMENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

The difficulty of making difference between Labor Law and Civil Law (by the objective meaning) is that two branches have as subjective as methodical similarities.

The rights of parties to have direct and immediate legal influence as a result of signing agreements as well as the outcomes and the process of work are presented in the article.

We tried to present in as much detail as possible the differences and correlations, advantages and disadvantages of labor and civil law contracts.

Key words: Labor agreement, Civil-legal agreement, worker, employee, salary.

ՀՀ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆՂԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԴԱՆԱՆՁՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել:

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (210x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ծախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պարասխանադրվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:

